171-

# ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑ

## ՚Ի ՊԷՏՍ ԱՌՏՆԻՆ ՊԱՇՏԱՄԱՆ

ՀԱՒԱՔԱԾՈՅ ՅԵՐԻԻՐՄԱՄԲ ԵՒ ՅՕՐԻՆՄԱՄԲ

՚Ի ԼՈՅՍ ԸՆԾԱՅԵԱԼ

ՅՕԳՈՒՏ ԵՒ ՚Ի ՊԷՏՍ ՀԱՅԿԱԶԱՆՑ

ԱՐԴԵԱՄԲՔ ԵՒ ԾԱԽԻՒՔ

ՄԱՆՈՒԿԻ ԶՕՐԱԲԵԱՆ

———0000000———

՚Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՎԵՀԱՓԱՌ ՏԵԱՌՆ

ՆԵՐՍԻՍԻ ԳԵՐԻՄԱՍՏ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ։

ԵՒ

ԵՌԱԶՆՈՐԴՈՒԹԵԱՆ ԱՍՊԵՏԱՓԱՌ ՏԵԱՌՆ ՅՈՎՀԱՆՆԻ

ՍՈՒՐԵՆԵԱՆ ։

ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1846 ։

՚Ի ՏՊԱՐԱՆԻ

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

՚Ի ԿԱԼԿԱԹԱ

12004

Նուէր Մխիթարեան Գրադարանին

4-3-1975

243
Ա-49 5145

# ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑ

'Ի ՊԷՏՍ ԱՌՏՆԻՆ ՊԱՇՏԱՄԱՆ

ՀԱՒԱՔԱԾՈՅ ՑԵՐԻԻՐՄԱՄԲ ԵՒ ՑՕՐԻՆՄԱՄԲ

'Ի ԼՈՅՍ ԸՆԾԱՅԵԱԼ

ՅՕԳՈՒՏ ԵՒ 'Ի ՊԷՏՍ ՀԱՅԿԱԶԱՆՑ

ԱՐԴԵԱՄԲՔ ԵՒ ԾԱԽԻՒՔ

## ՄԱՆՈՒԿԻ ԶՕՐԱԲԵԱՆ

———0000000———

'Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՎԵՀԱՓԱՌ ՏԵԱՌՆ

ՆԵՐՍԻՍԻ ԳԵՐԻՄԱՍՏ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ։

ԵՒ

ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ԱՍՊԵՏԱՓԱՌ ՏԵԱՌՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

ՍՈՒՐԵՆԵԱՆ ։

ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1846 ։



'Ի ՏՊԱՐԱՆԻ

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

'Ի ԿԱԼԿԱԹԱ

Гос Би[illegible]потека
ՀՍՍՌ [illegible] ССР
1921 - 7
5145

Ի ՅԱՒԵՐԺԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿ

ԱՐԺԱՆԵԱՑ

ՄԵԾԱՐՈՅ ԾՆՈՂԱՑ ԻՒՐՈՑ

ԵՒ ԽԱՆԴԱԿԱԹ ՍԻՐՈՅ

ՆՈՒԷՐ ՄՇՏԱԲԱՐԲԱՌ

ՁՕՆԷ

ԱԶԳԻ ԻՒՐՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ

ՄԱՆՈՒԿ ՋՕՐԱԲԵԱՆ·

# Ա. Օ. Գ.

՚Ի գերագոյն Աստուածաշնորհ ձիրս Մարդոյ՝ գերապայծառ փայլէ Բանն. որով ՚ի սեփ անձնին Բանին, երկակի անոբիշ էութեամբն՝ անիւթ և նիւթական, ճոխանայ մարդ. և որոշեալ վերագաս կարգի քան զարարածս ամենայն. որ և լեալ եւս Իշխան Իշխանին աշխարհի՝ ուղղէ զշարժուածս հոգւոյն, կարգէ զվարս մարմնոյն, և զներքին իմացուածս մտացն և զկամացն զգացուածս՝ արտայայտէ ՚ի խօսս: Այսմ անզուգական շնորհաց բարութեան բարերար Հաստչին, զԲանն միայն ունի մարդ միջոց անզուգակշիռ փոխարէնի՝ նուիրել շնորհաձիր Արարչին, ՚ի խոստովանութիւն բարեացն և բարերարութեանցն, և ՚ի փառաբանութիւն Անկարօտին փառաց: Եւ եթէ տուեալ՝ զի Մարդն առեղծեալ գերագոյն արարածոց, և կարգեալ Իշխան աշխարհի ՚ի յիմացական վայելս հանուր եղելոց, ընդ հարկապարտեաց է՝ վասն իւր իւրքեան, և վասն անխօս արարածոյն, զաղօթս՝ — այն է, զաղերս սրտին զյօդուածս, վերառաքել ամենակալ Արարչին. ՚ի խոստովանութիւն ամենազօր Զօրութեանն, ամենատուր շնորհաց սիրոյն, և անբաւ խնամոցն ողորմութեան, որովք լի՛ են երկինք և երկիր:

՚Ի խորագնին քննութիւն մատուցեալ՝ Ներիմաց աստուածաբանութեան սքանչելայօդ հիւսուածոյ Աղօթից բանս, ՚ի պանծալի Բարբառ մեր անզուգական, արփիափայլ Ճաճանչին բազմապիսի իմաստք պարունակեալ ՚ի նմին, որ և համակ ՚ի մի կէտ պարայածեալ բերին: Յայսմիկ զննութեանց

նշանակաց զաղանեաց , ինքնին բաշխել յայտնին էութիւն և տառակայ աղօթից · զհնչութիւն ' ուղղութիւն և ներգործութիւն նոցին ամենայն · զորոց փոքր 'ի շատէ ձեռնարկեալ տառիւք , խորամուխ լինիմք 'ի ներքաքնին նշանակս ' և 'ի նոյին բացատրութիւն · որով լուսացնցուղ ճառագայթարձակ փայլեն ճոխութիւն ' զօրութիւն և փառք Աստուածախօս ' իմաստնական և հզօր լեզուիս Հայկեան , ճշմարտիւ համարեալ նախնական և մայր լեզուաց աշխարհի ։

Արդ ամենայն ուխտք Երջանկութեան մարդոյ ' որ է բովանդակ ամենայնին ամենից , պարածածկեալ պարունակին յիմաստ սքանչելի բանիս Աղօթք · ուստի վասն անքայթ հասանելոյ երանութեանց ' պարտ է զաղօթից բուռն հարկանել , 'ի նմին դեգերիլ , և 'ի նմին հանապազ կցթիլ ։ Զի երբ և խօսք ընդ Աստուծոյ , և ցանկալեաց խնդիր , չէք տարակոյս կասկածանաց յաջողուածոյ հայցուածոցն մեր , ըստ ուսուցանելոյ անքնին ' ճշմարտա և միակ Բանին մարմնացելոյ Փրկչին մերոյ , թէ " զոր խնդրեսջէք առնուցուք , և զոր հայցիցէք գտանիջիք ։ " Եւ զի Աղօթք են խօսք առ Աստուած ահաւոր , Արարիչ և խնամող էից ամենից , վասն որոյ պարտ է արժանապէս բերել յայն · մեծաւ մաքրութեամբ և ջերմեռանդութեամբ , սակմամբ ' հաւատով և յուսով · վասն զի նովիմբ լինի մատչել առ անմատչելին Աստուած , և հաղորդել անճառ բարութեանցն · զի զԱղեացն յօղուածս , այն է զսրտին զգացուածս և զյօդաւորութիւն , 'ի բանս աղօթիցն վերընծայէ առ Աստուած , 'ի նշան և յայտայայց սիրոյ և յօդաւորութեան իւր առ յաւերժական Սէրն երանութեան , և միակ անբովանդական Սկիզբն սկզբնաւորեալց ամենայն · և սկզբնական Յօդն առաջին ' յոր ազդապէս յօդին ամենայն եղեալքն 'ի նմանէ , յոր և օթեալ հանգչին հաճոյապէս ' իբր 'ի կէտ առաջին և վերջին ։

՚ի Նորին իսկ Փրկչին մեր բանիցն ուսանիմք՝ յամենայն ժամ և յամենայնի յաղօթս կալ, զի հասանիցեմք բարեաց և խնդրելեաց մերոց, և զի զերծանիցեմք ՚ի չարեաց և ՚ի փորձանաց ամենայն։ Զի ո՞ւմ արդեօք մարթ իցէ մարդոյ վստահօրէն աղերսել, այն է զաղերս և զաղէտ սրտից մեր յերես ածել և զներքինս բացայայտել, յուսով յաջողուածոյ ելիցն, բայց եթէ ոչ՝ Աստուծոյ միայն. և կամ ո՞ւմ արդեօք հնար իցէ վերջ և հանգիստ առնել աղէտից՝ ուխտից և ըղձից մերոց, եթէ ոչ Աստուծոյ միայն. որ է լրումն անբաւ ըղձից մեր և կէտ աղերսից. յոր յօդեալ օթին և հանգչին աղերսք՝ ուխտք և ըղձք մեր ամենայն, իբրև օթևան և դադար աղեաց մեր, այն է զորովոյ՝ սիրոյ և ցանկութեանց։ Եւ այն զի յամենայն աղէտս մեր զանձեամք դիւր և հանգիստ սփոփանաց յաղօթս, յոր իբր աղէտք մեր օթին և հանգչին։

Եւ այն զի խօսքն են յայտարար մտաց և կամացն ըղձացուածոց և բերմանց, որով ներքին բանք և խորհուրդք և զգացմունք յերևան գան և հաղորդին այլոց. այսու աղագաւ աղօթք՝ իբրու աղ ուխտից, ըստ ծխոյ հնոց ազգաց նշանակի սիրոյ, նուիրին առ Աստուած՝ իբրև աղեաց ուխտ, ՚ի ցոյց հաստատութեան սիրոյ և յօժարութեան ՚ի նա. որ է միակ բարին կատարեալ, և ցանկալի նպատակ ուխտիցն մերոց։

Միւս ևս իմաստ ստուգաբանութեան արտափայլէ բառմիմաստ բառիս Աղօթից՝ լինել մի միայն գերակատար կրթարան բարեպաշտութեան, յորում ծնանի ճշմարիտն բարոյականութիւն. ունակութիւն բարեաց և առաքինութեանց, և բարուց բարեաց. զի Աղօթք՝ այն է աղուականութիւն, բարութիւն բարոյից գործեն աղօթք. վասն զի ևսանելուն և ուշադիր պարապումն ՚ի նոսին՝ կրթէ զմարդն բարեպաշտ՝ արդար և խաղաղ. աղու՝ անոյշ և հաճոյական Աստուծոյ՝ ինքեան և ընկերացն յօդեալ՝ և յար-

մարեալ բարուցն բերմունք, որ է յօդ յօդաւորութեանն առ Աստուած և առ ընկերն։ Զայս մեծ և կարևոր ներգործութիւն արտաքին աղօթք 'ի փոքու միջոցի, փոքու աշխատութեամբ և խորագոյն տպաւորութեամբ քան զամենայն դպրոցս և զերատս աշխարհի՝ վասն երկուց. մի՝ զի յազգելուն բարեաց և շնորհաց յԱստուած մատուցեալ յառաջին Յօդն բարութեան, 'ի նա յարել և յօդել աղերսէ, զադիս սրտին՝ զաղէտս և զխղճմն բացեալ տարածեալ առաջի. և միւս ևս՝ զի յահաւորութենէ և 'ի սըրբութենէ գերագոյն Էին՝ առ որ մատուցեալ պաղատի, ըմանէ պատկառանօք՝ և այրեալ տոչորին աղէքն, վասն աղօտ և խաւարին գործոյն զաղտնածածուկ յանցուածոց. որոց աղետալի զգացուածովքն աղօտացեալ, զգածի ամօթով և ապաշաւանօք. յորմէ ապա ուղիղ բանիւն Ճաճանչեալ խորին տպաւորութեամբ ազդէ 'ի յոգին զօրէնս յաւիտենական Բանին, և յառաջ մղէ 'ի նպատակն ցանկալի բարեաց և պիտոյից՝ որոց վասն մատուցեալ հայցուածս առնէ, որով իսկ Յաղթանք ուխտիցն գործին։

Սորին այսր աղագաւ ոչ զօրեցին նախնի դպրոցք և իմաստասէրք, խրատք և կանոնք նոցին, համակ ուղղել զբարս ողջոյն ազգի ուրուք. այն զի՝ պակասէր վաւերական ազդուութիւն շնորհաց Ճշմարիտ կրօնի բարեպաշտութեան. և նոյին նման ամենայն երկք և ջանք 'ի դերև ելեալ ընդունայն լինէին՝ եթէ չէին հիմնարկեալ 'ի Բարեպաշտութեան, որ է միակ ամուր հիմն հաստատութեան՝ շքեղութեան և բարգաւաճութեան ազգի. վասն զի 'ի Բարեպաշտութենէ ծնանի սէր մաքուր և համասփիւռ, որով զօրանայ ազգ, և բարգաւաճեալ շքեղանայ յերջանկութիւն, 'ի մի ուղէղ բան յօդեալ բնաւից, անոյշ և ազու յօդիւն սիրոյ։

Իւ բարեպաշտ Ազգ մեր անշքացեալ, որ նկրտի բարւոքել զտառապեալ վիճակ իւր, ամենայն ջանիւք զուն

գործէ ՚ հնարքն և զամենայն փորձ փորձէ հասանել յանձկալի նպատակին համայնատենչ, յաջողեսցէ նմա ՚ի լրումն տենչանացն հասանել՝ առաւել քան զամենայն հնարս ձեռնարկեալ յեղջերաց խորանին Սրբութեան, և մտեալ յաղբիւրն բարեաց՝ յԱստուած ամենազօր, ՚ի լրումն և ՚ի տուիչն ամենայնի ։ Քանզի աղօթք լեալ միջոց և առիթ բարեպաշտութեան, ծնանին զերջանկութիւն բաղձալի բնաւից, այնու զի է աղու յօդ․ հաճոյական յօդակապ․ և յօդիչ յաղուականութիւն ։

Յասացելոցս պարզապէս իմանի ապաքէն ճշմարտութիւն ասելեացս, թէ՝ միակերպ աղօթք զօրեն միակերպ յարդարել և կրթել զազգ մի ողջոյն, տրամադրեալ զամենեսին միակ ազդեցութեամբն՝ միախոհ, միակամ, և միաբարոյ․ քանզի համաքաղաք հայցուածովքն՝ համակ ունակական նման բանիւ, կրթեալ բնաւորին ՚ի նման բարս, և շաղկապեալ յօդին յերեարս՝ նման մտօք և նման զգացուածովք կամաց․ բստ օրինակի զինուորաց համասարաս մարզիւ շաղկապելոց ՚ի պետն, և յօդաւորելոց ընդ միմեանս միաբան շարժուածովք ։ Եւ այս վասն այն՝ զի միակերպ ոչ կարգաւոր աղօթից, շարժէ հաւասարապէս զզօրով ազեացն, և արծարծանէ ՚ի յոգիս զսէր առ Աստուած և առ ընկերն, որ է միակ օրէնք յաւիտենական բարութեան․ յորմէ ծագին վարք արդարութեան, որ արտադրեն զխաղաղաւէտ կեանս բարեմասնութեան, և վերածեն զմարդն յերջանկութիւն յաւերժական․ աղուապէս յօդեալ ՚ի յօդն առաջին՝ յԱստուած ամենակալ ։

Այսչափ և այսքան զօրեն և կարեւոր են աղօթք՝ զորմէ զանկաւս ՚ի բազմացն յառաջ ածեալ, անցցուք արդ զառաջնակայիս գի սղիմծոյ տալ ակնաւուք զծանօթս, և զառիթն նշանակել որք յայս շարժեցին զմեզ ակնաւածանեաց զաշխատութիւն ։ Զի թէպէտ արդարև բազումք կան յԱզգիս Աղօթագիրք, և ճոխացեալ ևս է

ընտիր՝ ընտիր՝ ուսանելի աղօթիւք, որոց նմանն սակաւ տեսանի յօտարազգեայս. այլ սակայն՝ է զի վասն նուազութեան թուոյ նոցին. է զի՝ վասն սխալել և ցրիւ գոլոյ 'ի բազմահատուած մատեանս, և մանաւանդ զի՝ ո՛չ կան ըստ մեծի մասին յարմարեալք են վասն Եկեղեցւոյ գործածութեան, որով հասարակութիւն ժողովրդեանն դուն ուրեք վարի նոքօք յառանձնակի պէտս. և այսպէս մնայ զուրկ 'ի նոցունց պատուականութենէ և 'ի գանձուց արդեանցն 'ի նոսին մթերելոց։ Այսոցիկ աղագաւ 'ի սատարել իւիք լըման պակասութեանս այսմիկ, և առ 'ի յորդել զճանապարհ բարգաւաճութեան Ազգիս 'ի համաքատակ բարեպաշտութիւն, և 'ի ճանաչումն մեծի արժանեաց ընտիր ընտիր աղօթից սրբոց Հարցն մերոց. և առ 'ի կրթել յոգի աղօթիցն և նոցին լինել հետևող, համարձակեցաք ձեռնաձիգ լինել յայս երկ՝ 'ի վեր քան զկար մեր և զպաշտօն. հաւաքածոյ յիրիւրմամբ Աղօթից սրբարեալ Հարցն մերոց. յորս 'ի տեղիս տեղիս համարձակեցաք առնել զմանրիկ փոխարկութիւնս՝ ըստ պատշաճին, 'ի դէմս առանձնակի աղօթողաց հիւսեալ, և յարմարեալ հասարակաց բնութեան սեռի մարդկութեանս։ Եւ զայս ո՛չ ընդ ամբարհաւաճական մտօք և զգացմամբ խրամատելոյ զսրբազան գանձն Հայրենի՝ և զկարգածս աստուածազգեցիկ Հարցն մեր սրբոց տօնելեաց. այլ մանաւանդ առաւել և՛ ես պայծառացուցանելոյ յԱզգի մերում զգերագոյն յարգ և զներգործութիւն նոցին. և այսու հանուր անհատական կիրառութեամբ առաւել ընտելացուցանել դիտեցաք. զճոխութիւն նոցին մտացն փայլեցուցանելով 'ի բերանս Ազգիս առհասարակ՝ և ըստ իւրաքանչիւր վայելչութեան. որով արդիւնք նպատակին 'ի գլուխ ելանեն ամենեցուն միահամուռ յարեալ յօդել 'ի յօդն առաջին, նոցին սրբոց Հարցն մերոց աստուածահաճոյ բարբառովք յօդաւորեալ։ Իսկ զնուազիցն պակասութիւն, 'ի նուաստ և 'ի տկար կարեաց մերոց լցուցանել զխնդրեցաք, աշխար-

հական բարբառով՝ հոգևորականին թևակոխեալ․ յօրինակէ առաջնոց ոմանց խրախուսեալ, և ՚ի սովորմանց բարեկամաց վստահացեալ․ և այնու զի ամենեցուն շնորհեալ է անխտիր խօսիլ ընդ Աստուծոյ, որ հաճի ընդ պատարագ խոնարհութեան՝ ընդ նուէրս ուխտից, այն են աղօթք մարդկան ։ Եւ այսպէս օգնութեամբն Աստուծոյ ՚ի լրումն հասուցեալ զայս աշխատանս, պսակին մեր բազմամեայ բաղձանք՝ ՚ի փառս Աստուծոյ և յօգուտ ազգիս. զի անիմանալի և անպատմելի զօրութեամբն Աստուծոյ շարժին և լինին ամենայն ։

Առաջիկայս աշխատութիւն ինքնին խօսի զինքենէ որ ինչ է․ յորում գտանիցաք առ ձեռն պատրաստ և դիւրագիւտ առնել՝ ՚ի մի կարգ ամփոփելով, զամենայն կարևորսն և զախորժելին առ բազումս ցրուեալս․ որ թերևս երկարաբան երևիցէ վասն յաճախութեանն․ առ որ ծանուցանեմք, զի չէ՛ մեր դիտումն այսուեղ նշանակել ումեք զբոլոր կարգեալսն հանապազ լրացուցանել յաղօթս, այլ որ ինչ՝ և որքան հաճոյ իցէ անցնիւր՝ ըստ ներքոյ պատահման գործոցն, և ըստ չափու ջերմեռանդութեանն իւրաքանչիւր․ միայն զայս ինչ յուելումք ազդ առնել, զի զերկս այս հատեալ բաժանեցաք յերկուս մասունս՝ վասն պատշաճ կիրառութեան և վասն դիւրութեան կրելեաց, յիւրաքանչիւր պէտս վայելչութեան տրոհեալ․ զառաջիկայն՝ զրիւ յարմարութեան վարելոյ ՚ի տան․ և զմիւս մասն Պատարագ առձայնեալ՝ փոքրագիր յարմարեալ, վարելի յեկեղեցւոջ․ յորում ամփոփին աղօթք նուիրելիք ՚ի ժամ սրբոյ Պատարագին ։

՚Ի վերջ բանիցս աղերս թախանձանաց արկեալ ընդ հանուր Սիրելի Ազգիս, խոնարհաբար աղաչեմք՝ հաճեսցի բարեմտութեամբ ընկալնուլ ՚ի բարի զայս դուզնաքեայ աշխատանս մերոց վաստակոց, և ներողամիտ լիցի մերումն համարձակութեան՝ և թերութեանցն որ ՚ի սմին․ զի ըստ չափու նուաստ կարեաց անզօր զօրութեան մեր և եռանդեան, զօ-
զուտ ընդ հանուր Ազգիս ունելով նպատակ՝ և զպայծա-

ռութեան նախնի որոց Հարցն մերոց, վաստակեցաք յայ-
գւոյն Աստուծոյ՝ ի խնամածութեան աստուածատունկ բու-
սոց, ի տեսիլ զարգացման ի պայծառափայլ փաղփիւնս
մշտադալար առաքինութեանց, տնկելոց ի ձեռն Աղօ-
թից· որովք ճոխացեալ կեղպարանաբխեցին ի տեղ
նմանութեան չնաշխարհիկ հաւուց՝ ի հոգևոր Պարտէզ ե-
րանութեան հաճոյապէս հանգուցեալ օթևանեցին· զգայ-
լալիս բարեբանութեանց գեղգեղելով՝ ի մեծվայելչու-
թիւն բարերար Արարչին· և այսու օրինակաւ աներևոյթ
Աջոյն կերտելոյն, կերտեսցէ յաւերակն Ազգիս՝ անխարամա-
տեալ կերտուած բարեպաշտութեան, ի փառս ամենակալին
Աստուծոյ։


ENGRAVED BY RAMDHON SORNOKER

# ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑ

## ԳԱՀՏՕՆ ԱՌԱՒՕՏԵԱՆ·

ՕՐՀՆԵԱԼ Տէր Աստուած համագոյ և միասնական անբաժանելի սուրբ Երրորդութիւն Հայր և Որդի և Հոգի սուրբ· միայն Սուրբ, միայն Տէր· Արարիչ և խնամող ամենայն եղելոց· փառք քեզ՝ փառաւորեալդ յաւիտեան·

Սաղմոս·

Օրհնեալ ես դու Տէր, ուսո՛ ինձ զարդարութիւնս քո· Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիւնս քո, և զգովութիւնս քո խօսեսցի բերան իմ· Օրհնեսցից զքեզ 'ի կեանս իմ, և յանուն քո համբարձից զձեռս իմ· Ուրախ եղէց և ցնծացայց 'ի քեզ Աստուած իմ· եկեսցեն յիս գթութիւնք քո և կեցից· Ես օրհնեսցից զօրհնութիւնս քո Տէր, և ցնծացայց առաւօ-

տուց յողորմութեան քում․ Ըստ յողորմութիւնս քո Տէր յուսացայ․ ցնծացաւ սիրտ իմ 'ի փրկութեան քում․ օրհնեսցի զՏէր զբարերարդ իմ, Ո՜ օրհնապատ օրհնեսցի զքեզ և գովեսցի զանուն սուրբ քո յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից ․

Աղօթք ․

Աստուած ամենակալ, անեղ՝ անսկիզբն ․ ամենազօր՝ անքննելի Էութիւն ․ Ստեղծող և արարիչ համայն եղելոց՝ երևելեաց և աներևութից ․ Միայն Սուրբ, միայն Տէր ․ ահաւոր և սքանչելի․ պարածածկեալ 'ի փառս անհասանելի փառաց և սրբութեան յաւիտենից, վերամբարձ յանմատոյց բարձունս ահեղ Աթոռոյդ մշտնջենաւոր լուսոյ ․ և ամենայն ուրեք անպարփակ․ որ անսչութեամբ նկատեալ խնամս զարարածս քո ամենայն, ծագեալ 'ի վերայ ամենեցուն զլոյս սիրոյ քո և ողորմութեան ․ Հաճոյ լիցին առաջի քո՝ տկար բանք մեղապարտ սրտի յանցաւոր և սխալական ծառայիս ․ մտցե՛ն աղօթք իմ 'ի տաճար սուրբ քո, և խոնարհեսցէ ունկն քո 'ի խնդրուածս իմ․ Ըստ առատ ողորմութեան քում ծագեա զնշոյլ մշտնջենաւոր լուսոյդ շնորհաց, 'ի քաստեղծեալ հոգիս, 'ի լուսաւորել զՄիտ

զգաստացուցանել զԿամս, և ուղղել զԲանս իմ․ 'ի սրբել զՄիտս, և բարեկարգել զԿիրս և զՑանկութիւնս իմ․ որպէս զի կարող եղէց խոտորիլ 'ի չարէ, և գործել զբարի, գնալ յօրէնս պատուիրանաց քոց, և վարել զկեանս առաքինութեան և խաղաղութեան, առ 'ի ընդունելի և հաճոյ լինել առաջի քո․ և հանապազ օրհնել զքեզ արժանաւորապէս, և 'ի վեր ընծայել զաղօթս իմ, և ընդունիլ 'ի քէն զհայցուածս իմ վայելչականս․ զի առ 'ի քէն են բարիք ամենայն, և քո՛ են փառք՝ իշխանութիւն և զօրութիւն․ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից․ ամէն․

Սրբասացութիւն․

Սո՛ւրբ․ Սո՛ւրբ․ Սո՛ւրբ․ Տէր զօրութեանց Աստուած ամենակալ․ լի՛ են երկինք և երկիր փառօք քո․ օրհնութիւն 'ի բարձունս․

Օրհնեալ Հայր սուրբ՝ Աստուած ճշմարիտ․

Օրհնեալ Որդի սուրբ՝ Աստուած ճշմարիտ․

Օրհնեալ Հոգի սուրբ՝ Աստուած ճշմարիտ․

Օրհնեալ համագոյ միասնական և անբաժանելի սուրբ Երրորդութիւն, յաւիտեանս յաւիտենից․ ամէն․

Օրհներգ ·

Լոյս արարիչ լուսոյ՝ առաջին լոյս · բնակեալդ ՚ի լոյս անմատոյց՝ Հայր երկնաւոր · ՚ի դասուց լուսեղինացն օրհնեալ · ՚ի ծագել լուսոյ առաւօտուս ծագեա՛ ՚ի հոգիս մեր զլոյս քո իմանալի ։

Լոյս ՚ի լուսոյ ծագումն՝ արեգակն արդար · անճառ ծնունդ Հօր Որդի · յառաջ քան զարև անուն քո գովեալ ընդ Հօր · ՚ի ծագել ·

Լոյս ՚ի Հօրէ բղխումն՝ աղբիւր բարութեան · Հոգիդ սուրբ Աստուծոյ · մանկունք եկեղեցւոյ ընդ հրեշտակս զքեզ բարեբանեն · ՚ի ծագել ·

Լոյս երրեակ և մի անբաժանելի՝ սուրբ Երրորդութիւն · զքեզ ընդ երկնայնոցն երկրածինքս միշտ փառաւորեմք · ՚ի ծագել ·

Անեղանելիդ Աստուած՝ Հայր ամենակալ · ընկա՛լ զաղաչանս մեր՝ քոց պաշտօնէից ·

՚ի Հօրէ ծագումն անճառ՝ Արեգակն արդար · ծագեա՛ ՚ի յանձինս մեր՝ զլոյսդ ողորմութեան ·

՚ի Հօրէ բղխեալ Հոգի՝ Աղբիւր բարութեան · լուսով քով լցո՛ զմեզ՝ յայսմ առաւօտուս ։

Երեք անձինք և մի բնութիւն, մի Աստուածութիւն. զքեզ խոստովանիմք յաւէտ առ Երրորդութիւն։

Աղօթս Օրհնութեան.

Օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց, օրհնեալ փառաւորեալ անուն քո յաւիտեան։ Յաւիտենից մինչև յաւիտեանս դու ես Աստուած. և սուրբ է անուն քո։ Բարձրեալ ես դու յերկինս Աստուած. և յամենայն երկիր են փառք քո։ Մեծ ես դու Տէր, և ամենևին սքանչելիս. և դու միայն ես Աստուած։ Հզօր և սքանչելի ես դու Տէր ՚ի բարձունս. մեծ է զօրութիւն քո, և իմաստութեան քո ոչ գոյ թիւ։ Տէր Աստուած զօրութեանց. ո՞ նման է քեզ. հզօր ես դու Տէր և ճշմարտութիւն քո շուրջ է զքև։ Տէր Տէր զի սքանչելի է անուն քո յամենայն երկրի. դու ահաւոր ես. և ո՞վ կարէ կալ առաջի քո։ Տէ՛ր Թագաւոր յաւիտեանս յաւիտենից, համբարձաւ մեծվայելչութիւն քո ՚ի վեր քան զերկինս։ Արքայութիւն քո արքայութիւն ամենայն յաւիտենից. և իշխանութիւն քո յազգէ մինչև յազգ։ Յարդարութիւն և յիրաւունս հաստատեալ է Աթոռ քո, Ողորմութիւն և ճշմարտութիւն գնան առաջի երե-

սայ քոյ. Արդարութիւն քո արդարութիւն
յաւիտենից. և օրէնք քո ճշմարիտ են։ Գը-
թութիւնք քո բազում են Տէր, և յերկինս
է ողորմութիւն քո։ Արդարութիւն քո որ-
պէս լերինք Աստուած. իրաւունք քո որպէս
խորս բազումս։ Սկիզբն բանից քոց ճշմար-
տութիւն է. յաւիտեան են ամենայն իրա-
ւունք արդարութեան քո։ Քո են երկինք
և քո է երկիր. զաշխարհս լրիւ իւրով դու
հաստատեցեր։ Որպէս զի մեծ են գործք
քո Տէր, զամենայն ինչ իմաստութեամբ ա-
րարեր, և լցաւ երկիր ստեղծուածովք քովք.
Նորա անցանեն և դու կաս և մնաս յաւիտեան։
Աստուած թագաւոր մեր յառաջ քան զյա-
ւիտեանս, որ արարեր զփրկութիւն 'ի մէջ
երկրի։ Որպէս զի մեծ են գործք քո Տէր.
և յոյժ խոր են խորհուրդք քո։ Մեծ և-
ղև մինչև յերկինս ողորմութիւն քո. մին-
չև յամպս ճշմարտութիւն քո։ Արդար ես
Տէր՝ և զարդարութիւն սիրես. զուղղութիւն
տեսանեն երեսք քո, և հատուցանես իւրա-
քանչիւր ըստ գործս իւր։ Բարձր ես Տէր
առ ամենեսեան, և գթութիւն քո 'ի վերայ
ամենայն արարածոց քոց. բանաս զձեռն քո
և լցուցանես զամենեսեան քաղցրութեամբ

կամօք քով։ 'ի Քէն է Տէր աղբիւր կենաց և լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս։ Աստուած իմ ես դու, խոստովան եղէց քեզ։ Աստուած իմ ես դու, և բարձր արարից զքեզ։ Դու ստեղծեր զիս և եդեր զձեռն քո 'ի վերայ իմ, և ամենայն բարիք իմ 'ի քէն են։ Դու Աստուած զգեցուցեր ինձ զզօրութիւն, և եդեր յամբծութեան զճանապարհս իմ. աջ քո ընկալաւ զիս, և խրատ քո կանգնեաց զիս իսպառ։ Զօրութիւն իմ և ապաւէն իմ. օգնական իմ և փրկիչ իմ դու ես Տէր զօրութեանց, և ես յուսամ 'ի քեզ։ Օրհնեցից զքեզ Տէր 'ի կեանս իմ, և ուրախ եղէց 'ի քեզ յամենայն ժամ։ Զօրհանապազ օրհնեցից զքեզ, և գովեցից զանուն սուրբ քո յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից։ Բարձր առնեմ զքեզ Աստուած իմ և թագաւոր իմ. ապաւէն իմ և փրկիչ իմ. և օրհնեմ զանուն սուրբ քո յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից։ Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն։

Մաղթանք։

Փառք քեզ Տէր յաղագս ամենայնի, և օրհնեալ են կամք քո։ Գոհանամ զքէն. զի պահեալ հասուցեր զիս յայս ժամ առաւօ-

տուս ։ Շնորհեա́ ինձ խաղաղութեամբ և ըստ կամաց քոց անցուցանել զօրս զայս, և զկեանս իմ ազատեա՝ ամենից մեղաց և փորձանաց ։

Աղօթք ։

Յարևելից մինչև ՚ի մուտս արևու օրհնեալ ես Տէր Աստուած, և անուն քո սուրբ է և աճեալ ընդ ամենայն տիեզերս ։ Քաղցրասցին սաղմոսերգութիւնք և աղօթք իմ առաջի քո. եղիցին խոստմունք յարդարութեանց քումմէ ՚ի սպառութիւն իմ, և եկեսցէ ողորմութիւն քո ՚ի վերայ իմ, և փառաւորեսցի ամենասուրբ անուն քո ։ Արժանի արա զիս կալ ՚ի պատուիրանի քում, և զքեզ երգել գոհութիւնս զխաղս, Հօրն Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն ։

Աղօթք ։

Տէր երկնի և երկրի, արարիչ ամենայն արարածոց՝ երևելեաց և աներևութից. առ քեզ կարդամք յամենայն ժամ. զի ընդ ամենայն տեղիս է տէրութիւն քո, և արքայութիւն քո ամենեցուն տիրէ ։ Շնորհեա́ ինձ երկիւղիւ ՚ի սպասաւոն քո կանխել հանապազ, սիրել զքեզ ՚ի բոլոր սրտէ և ՚ի բովանդակ մի-տաց. և յամենայն զօրութենէ իմմէ պահել

զպատուիրանս քո ։ Համբառնալ առ քեզ զձեռս իմ 'ի սրբութիւն տուանց մեղաց՝ երկմտութեան և բարկութեան, և գտանել 'ի քէն զշնորհս և զողորմութիւն՝ և զառաքինասէր գործոց զյաջողութիւն ։ Զի դու ես Տէր կենաց, և Աստուած ողորմութեանց. և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն ։

Աղօթք ։

Զքեզ, որ յամենայնի գթած և մարդասէր Տէրդ ես, աղաչեմ հանապազ՝ զի զօրացուսցես զիս օր ըստ օրէ կալ 'ի կարգի կոչմանս և կրօնաւորութեան իմոյ ։ Թեթևացո Տէր զքաղցր լուծ քո 'ի վերայ իմ. զի կարացից կալ 'ի պատուիրանի քում. և զհաճոյսն անել առաջի քո յամենայն ժամ. 'ի տուէ և 'ի գիշերի հրեշտակային երգակցութեամբ արժանապէս զքեզ օրհնել. զքեզ գովել. և քեզ գոհութիւն և փառս մատուցանել՝ ամենազօր տէրութեանդ, այժմ և միշտ և յաւիտեանս . ամէն ։

Աղօթք ։

'Ի գիշերի և 'ի տունջեան և յամենայն ժամու՝ զքեզ աղաչեմ, և 'ի քէն խնդրեմ

զողորմութիւն մարդասէր Տէր ։ Լո՛ւր և այժմ ինձ մեղաւորիս, և խոնարհեցո՛ ունկն քո 'ի խնդրուածս իմ, զի մի՛ ունայն լիցի վաստակ ծառայիս · այլ համարեա՛ զաշխատութիւնս իմ 'ի գործ արդարութեան և 'ի պըտուղ աստուածպաշտութեան ։ Ընկա՛լ Տէր զաղօթս և զերկրպագութիւնս իմ, և պարգեւեա՛ ինձ զողորմութիւն քո առատապէս · ծածկեա՛ զիս ընդ հովանեաւ ամենազօր Աջոյ քո · զօրացո՛ զիս Տէր՝ զօրութեամբ սուրբ Հոգւոյդ · պահեա՛ զիս հանապազ ընդ խնամով քով, և արա՛ առ իս նշան բարի, 'ի գովեստ և 'ի փառաբանութիւն անուանդ քում սրբոյ ։ Զի 'ի քո փառս կատարի յամենայն արարածոց մշտնջենաւոր փառաբանութիւն 'ի բարձունս, Հօր և Որդւոյ և Հոգւոյդ Սրբոյ · այժմ և միշտ և ։

Երգ ։

Փառք 'ի բարձունս Աստուծոյ · և յերկիր խաղաղութիւն՝ 'ի մարդիկ հաճութիւն ։ Եւ օրհնութիւն քեզ 'ի բարձունս · օրհնեալ ես Տէր Աստուած մեր · օրհնեմք զքեզ և գովեմք զքեզ ։ Խոստովանիմք Տէր զքեզ և երկիրպագանեմք քեզ · փառաւորեմք զքեզ · գոհանամք Տէր զքէն վասն մեծի փառաց

քոյ։ Տէր թագաւոր՝ սուրբ երկնային, Աստ-
ուած և Հայր ամենակալ։ Տէր և Որդի Հօր
միածին՝ Յիսուս Քրիստոս և սուրբ որդի։
Տէր Աստուած գառն աստուածոյ և որդի Հօր,
որ առեր զմերս 'ի կուսէն։ Ողորմեցար բար-
ձեր զմեղս աշխարհի։ Եւ արդ ընկալ զա-
ղաչանս մեր։ Սուրբդ որ նստիս ընդ աջմէ
Հօր՝ ողորմեա մեզ։ Զի դու միայն սուրբ՝
դու միայն բարձրեալ ես, դու միայն տէր մեր
Յիսուս Քրիստոս։ Տէր և Հոգիդ սուրբ
որ 'ի փառս՝ Աստուած ընդ Հօր. ամէն։

Եւ յամենայն ժամ օրհնեմք զքեզ, Տէր.
և գովեմք զանուն սուրբ քո՝ յաւիտեան և
յաւիտեանս յաւիտենից։ Արժանի արա Տէր
զօրս զայս խաղաղութեամբ և առանց մե-
ղաց պահեա զմեզ։ Օրհնեալ ես տէր Աստ-
ուած հարցն մերոց, գովեալ և փառաւո-
րեալ է անուն սուրբ քո յաւիտեանս ամէն։
Օրհնեալ Տէր, ուսո՛ ինձ զարդարութիւնս
քո. էրէյ» յրէնէ՛։ Տէր ապաւէն եղեր մեր յազգ-
է յազգ։ Ես ասացի Տէր ողորմեա ինձ և
բժշկեա զանձն իմ. եւ մեղայ քեզ։ Ցո՛յց
մեզ Տէր զողորմութիւնս քո. և զփրկութիւնս
քո տուր մեզ. Տէր ողորմութիւն քո յաւի-
տեան. զգործս ձեռաց քոց մի՛ անտես առ-

ներ․ Տէր իմ զքեզ ապաւէն ինձ արարի․
ուսո՛ ինձ առնել զկամս քո՝ զի դու ես Աստ-
ուած իմ։ Ի քէն է Տէր աղբիւր կենդա-
նութեան, և լուսով երեսաց քոց տեսանեմք
զլոյս։ Ձգեա՛ զողորմութիւնս քո՝ որք
ճանաչեն զքեզ Տէր։

Աղօթք․

Զառաւօտու աղօթս՝ և զբանաւոր պաշ-
տօնս, ընկա՛լ ամենակալ ամենամեծդ Աստ-
ուած, 'ի քո անապական և յերկնային խո-
րանսդ։ Ձգեա՛ առ իս զարդարութեան
և զիմաստութեան զլոյս քո․ արա՛ զիս որդի
լուսոյ և որդի տունջեան․ որպէս զի 'ի գալ
աւուրս՝ երկիւղածութեամբ վարեցից ըզ-
կեանս իմ, և առանց գայթակղութեան կա-
տարեցից։ Զի դու ես օգնական և փրկիչ
իմ և քեզ վայելէ փառք՝ իշխանութիւն և
պատիւ․ այժմ և միշտ և․

Աղօթք․

Գոհանամ զքէն Տէր Աստուած, որ եր-
ևելի լուսով քով զուարճացուցեր զամենայն
արարածս քո․ իսկ իմանալի լուսով պատուի-
րանաց քոց՝ զամենեսեան լուսաւորեցեր ըզ-
հաւատացեալս 'ի քեզ։ Զօրացո՛ և զիս Տէր

'ի պահպանութիւն պատուիրանաց քոց 'ի տունջեանս յայսմիկ և յամենայն ժամանակի. որպէս զի լուսաւորեալ մտօք՝ միշտ զհաճոյս քո արարից, և հանդերձեալ բարեացդ հասից ընդ ամենայն սուրբս քո. շնորհօք և մարդասիրութեամբ Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի. որում վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն։

Օրհնեք

Անսկիզբն Հայր՝ առաջին լոյս անճառելի. որ 'ի լուսոյ լոյս ներգործեալ զիմանալեաց դասսն. օրհնեալ ես յաւիտեան։

Գահակիցդ Հօր, 'ի լուսոյ լոյս ծագումն Որդի. որ արարեր 'ի պայծառ փառաց քոց ըղհրեղինացն զօրս. օրհնեալ։

'Ի Հօրէ բղխումն՝ փառակից Որդւոյ, Հոգիդ անեղ. որ ստեղծեր 'ի յոգիս կատարեալ զհոգեղինացն դասս. օրհնեալ։

Որ ընդ հողեղէն բնութեանս մերոյ խառնեցեր զբանական հոգի, ունել զօրութիւն ընդունելոյ զաստուածայինն և զհոգևոր զշնորհս իջեալ 'ի վերուստ. օրհնեալ։

Որ յոչնչէ զգոյացուցեր զերկինս և զերկիր, և քաղցր անուշութեամբ խնամես զա-

բարածս քո․ օրհնեալ։

Որ հայիս քաղցրութեամբ յարարածս քո՝ Հայր ամենակալ․ օրհնեալ։

Որ իջեր 'ի փրկել զարարածս քո՝ Որդի միածին․ օրհնեալ։

Որ խնամես տեսչութեամբ զարարածս քո՝ Հոգիդ ճշմարիտ․ օրհնեալ։

Որ ստեղծմամբ ըստ պատկերի քո Տէր՝ պատուեցեր զմեզ․ օրհնեալ։

Որ շնորհօք սուրբ Հոգւոյդ լուսաւորեցեր զմեզ․ օրհնեալ։

Որ զգթութիւնդ քո զառատ հեղեր յերկնից 'ի մեզ․ օրհնեալ։

Մաղթանք։

Գոհութեամբ և ճշմարիտ խոստովանութեամբ անդադար փառաւորեմ զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին․ և հայցեմ զխաղաղութիւն և զողորմութիւն քո պարգևեա՛ ամենայն արարածոց քոց և ինձ բազմամեղիս։

Աղօթք։

Գոհանամ զքէն Տէր Աստուա՛ծ իմ որ զարթուցեր զիս 'ի հանգստենէ քնոյ շնորհիւ ողորմութեան քո։ Զարթո՛ զմիտս իմ արդարութեամբ առ քեզ․ զի տեսցեն աչք իմ զփրկութիւն քո։ Եկեսցէ և բնակեսցէ

առ իս շնորհ Աստուածութեան քո, եւ ողորմութիւն քո հովանի եւ պահապան լիցի 'ի վերայ իմ: Եւ արժանի արա զծառայս քո 'ի տուէ եւ 'ի գիշերի եւ յամենայն ժամու՝ խորհիլ միշտ `ի սէր պատուիրանաց քոց· եւ գոհանալով փառաւորել զՀայր եւ զՈրդի եւ զսուրբ Հոգին· այժմ եւ միշտ եւ :

Աղօթք

Օքէն գոհանամ Տէր Աստուած իմ, որ շնորհեցեր ինձ զհանգիստ քնոյ խաղաղութեամբ· եւ զարթուցեալ ժամանեցուցեր զիս կանխել յերկրպագութիւն ահաւոր եւ փառաւորեալ անուանդ քում սրբոյ· Տուր ինձ Տէր՝ աղաչեմ զքեզ, խաղաղութեամբ անցուցանել զամենայն ժամանակս կենաց պանդխտութեան իմոյ· եւ երկիւղիւդ քո ամրացո՛ եւ պահեա՛ զիս : Որպէս զի զգուշութեամբ եւ անարատ վարուք կրօնաւորեալ եւ կենցաղավարեալ յայսմ աշխարհիս, ժամանեցայց յանքոյթ եւ 'ի խաղաղ նաւահանգիստ յաւիտենական 'ի կեանսդ : Շնորհօք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի, ընդ որում քեզ Հօր եւ Հոգւոյդ սրբոյ, վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ· այժմ եւ միշտ :

Աղօթք

Երկրպագեմք քեզ Տէր Աստուած իմ ան-ցեալ ընդ երկայնութիւն գիշերիս, և մա-տուցանեմ զառաւօտու աղօթս իմ։ Զքեզ Տէր օրհնեմ և փառաւորեմ. և զքեն Տէր գոհանամ, որ արժանի արարեր զգիշերս խա-ղաղութեամբ անցուցանել, և հասանել 'ի ժամ առաւօտուս։ Արժանաւորեա զիս Տէր անճառ խոստմանց քոց՝ զոր խոստացար սի-րելեաց քոց Ճշմարիտ Աստուած՝ Յիսուս Քրիստոս, Տէր մեր. կեցո և ողորմեա ամե-նայն արարածոց քոց և ինձ բազմամեղիս։

Աղօթք

Սուրբ ես Տէր Աստուած հզօր և փա-ռաւորեալ, որ նստիս 'ի փառս յաւիտենա-կան աթոռոյդ՝ 'ի վեր քան զքրովբէս, և լոյս ծագես յարարածս քո։ Լուսաւորեա զիս Տէր 'ի ժամ առաւօտուս. որպէս զի 'ի ծագել լուսոյ տունջեանս՝ ծագեսցէ առ իս գութ մարդասիրութեան քո։ Հեռացո յինէն Տէր զխաբէութիւն սատանայի, և զբռնու-թիւն նորա խորտակեա, աղօթիւք և բարե-խօսութեամբ ամենայն սրբոց. յորոց հանա-պազ փառաւորեալ գովի ամենասուրբ Եր-րորդութիւնդ. այժմ և միշտ և յաւիտեանս։

Երգ Աղօթական Սրբոյն Ներսեսի Շնորհալւոյն ։

Առաւօտ լուսոյ · արեգակն արդար · առ իս լոյս ծագեա ։ Բղխումն 'ի Հօրէ · բըղխեա 'ի հոգւոյս · բան քեզ 'ի հաճոյս · Գանձդ ողորմութեան · զանձիդ ծածկելոյ · գիւտ զիս արա ։ Դուռն ողորմութեան · դաւանողիս բաց · դասեցո վերնոց ։ Երրեակ միութիւն · եղելոց խնամող · և ինձ ողորմեա ։ Զարթիր Տէր յօգնել · զարթո զթմբրեալս · զուարթնոց նմանիլ ։ Էջ Հայր անսկզբն · էակից Որդի · և միշտ սուրբ Հոգի ։ Ընկալ զիս գթած · ընկալ ողորմած · ընկալ մարդասէր ։ Թագաւոր փառաց · թողութեանց տուող · թող ինձ զյանցանս ։ Ժողովող բարեաց · ժողովեա և զիս · ժողովս յանդրանկաց ։ Իբրեւ ունէր հայցեմ · 'ի մարդասիրէդ · ինձ բըժշկութիւն ։ Լեր կեանք մեռելոյս · լոյս խաւարելոյս · լուծանող ցաւոյս ։ Խորհրդոց գիտող · խաւարիս շնորհեա · խորհուրդ լուսաւոր ։ Ծնունդ Հօր ծոցոյ · ծածկելոյս ստուերաւ · ծագեա զլոյս փառաց ։ Կենարար փրկիչ՝ կեցո զմեռեալս · կանգնեա զգլրեալս ։ Հաստեա հաւատով, հաստատեա յուսով · հիմնեցո սիրով ։ Ձայնիւս աղաչեմ · ձե-

ռօքս պայծառիմ. ձիր բարեաց շնորհեա՛ ։ Ա՝ամ-
բարառ լուսոյ. զեկավար ճարտար. զօղեալս
ամբոխից՛ ։ Ճառագայթ փառաց. ճանապարհ
ինձ ցո՛յց. ձեռնել 'ի յերկինս ։ Մ՝խածնեալ
Հօր. մո՛յծ զիս յառագաստ. մաքուր հարսա-
նեաց ։ Յորժամ գաս փառօք. յահագին ա-
ւուրն. յիշեա՛ զիս Քրիստոս ։ Նորոգող հնու-
թեանց. նորոգեա՛ և զիս. նորոգ զարդարեա՛ ։
Շնորհատու բարեաց. շնորհեա՛ զքաւութիւն՝
շնորհեա՛ զթողութիւն ։ Ուրախացո՛ Տէր.
ոգւոյս փրկութեամբ. որ վասն իմ'ի սուգ ։
Զար մշակալին. չար սերմանց նորին. չո-
րացո՛ զպտուղ ։ Պարգևիչ բարեաց. պար-
գևեա՛ ինձ. պարտուցս թողութիւն ։
Դուռ շնորհեա՛ աչացս. ջերմ հեղուլ ար-
տօսր. ջնջել զյանցանս ։ Ա՛նեալին քաղ-
ցու. ռամ հոգւոյս արբ՛. ռահ ցոյց ինձ
լուսոյ ։ Մէր անուն Յիսուս. սիրով քաղ
ճմլեա՛. սիրտ իմ քարեղէն ։ Վասն զը-
թութեան. վասն ողորմութեան. վերստին կե-
ցո՛ ։ Տէրնչարչարողդ մեղեալս. ամ՛ր ինձ յա-
դենալ. Տէր Յիսուս Քրիստոս ։ Բարունդ
երկնաւոր, բանեա՛ զաշակերտս. բանից երկ-
նայնոց ։ Յօղ արեան քո Տէր. ցօղեա՛ 'ի հո-
գիս. ցնծասցէ անձն իմ ։ Խնծեալս

մեղօք․ լուծեալ աղաչեմ․ լուսել յիս քա-րիս ։ Փրկիչ բոլորից․ փութա զիս փրկել․ փորձութեանց մեղաց ։ «Քաւիչ յանցանաց քաւեա զօրհնաբանս․ քեզ երգել զփառս ։

Մաղթանք ։

Մատեն աղօթք իմ ՚ի տաճար սուրբ քո․ և խոնարհեսցի ունկն քո ՚ի խնդրուածս իմ։ Լուր ինձ Տէր գթութեամբ քով․ և կեցո զիս ողորմութեամբ քով ։ Մի՛ յիշեր զմեղս իմ Աստուած, այլ քաւեա և փրկեա զիս ՚ի փորձանաց և յանօրէնութեանց ։ Օգնեա ինձ Աստուած փրկիչ իմ, վասն փառաց անուան քո ։

Աղօթք ։

Հայր գթութեանց և Աստուած ամե-նայն մխիթարութեանց, որ գթութեամբ քով մխիթարես զամենայն արարածս քո, և լնուս զամենայն պէտս նոցա առատապէս․ Լուր Տէր ձայնի պաղատանաց անարժան ծառայիս քո և ընկալ զաղաչանս իմ։ Անցո յինէն զցա-սումն պատուհասի յանցանաց իմոց՝ բարե-րարութեամբդ քով․ ներեա ինձ, քաւեա և թող զմեղս իմ․ և արժանաւորեա գոհու-թեամբ փառաւորել զքեզ ընդ Որդւոյ և սրբոյ Հոգւոյդ․ այժմ և միշտ և յաւիտեանս ։

Աղօթք։

Խնդրութիւն մեր և կամք՝ որ 'ի Հօ-
րէ առաքեցար, միածին Որդի Աստուծոյ Տէր
մեր և փրկիչ Յիսուս Քրիստոս ։ Տո՛ւր ինձ
զխնդրութիւն քո, զոր շնորհեցեր սրբոց
քոց Առաքելոց՝ փչմամբ քո 'ի նոսա զկեն-
դանացուցիչ և զամենազօր Հոգի քո սուրբ ։
Որպէս զի և ես խաղաղացեալ յամենայն աշ-
խարհական սահեցմանց, եղէց տաճար և բնա-
կարան Աստուածային շնորհացդ . և զոհա-
նալով փառաւորել զՔեզ ընդ Հօր և սուրբ
Հոգւոյդ՝ Քրիստոս Աստուած իմ . այժմ և
միշտ և յաւիտեանս . ամէն ։

Աղօթք։

Խաղաղութեամբ քով Հոգւդ սուրբ
Աստուած ճշմարիտ, որ 'ի վեր է քան զամե-
նայն միտս և զխորհուրդս , մխիթարեա զանձն
ծառայիս քո՝ ընդունելով զաղաչանս իմ ։ Ան-
ցո յինէն զցասումն պատուհասի յանցանաց
իմոց բարերարութեամբդ քով . ներեա ինձ
և քաւեա և թող զմեղս իմ . և արժանաւո-
րեա գոհութեամբ փառաւորել զՔեզ ընդ Հօր
և Որդւոյն միածնի . այժմ և միշտ ։

Աղօթք ։

Ընկեալ առաջի քո՝ բարերար և բազում ողորմ Աստուած, աղաչեմ ամենայն սրտիւ իմով և խնդրեմ զողորմութիւն 'ի քէն․ որպէս խոստացար ծառայից քոց և ասացեր՝ զամենայն զոր ինչ խնդրիցէք հաւատով յանուն Որդւոյ 'ի Հօրէ՝ տացի ձեզ ։ Շնորհեա՛ և այժմ հաստատեցելոյս 'ի քեզ, և կատարեա՛ 'ի բարի զխնդրուածս իմ, զի 'ի քեզ եմ ապաւինեալ ։ Եւ քո առատ ողորմութեամբդ մխիթարեա՛ զիս 'ի կեանս յայսմիկ․ և առաջնորդեալ հասո՛ յանձառ երկնից արքայութիւնդ, 'ի փառաբանութիւն և 'ի պատիւ ամենասուրբ Երրորդութեանդ․ այժմ և միշտ ։

Աղօթք ։

Երկնաւոր խաղաղութեամբդ քով պարսպեալ պահեա՛ զանձն իմ Տէր զօրութեանց՝ վասն զի դու ես Աստուած խաղաղութեան և զանուն քո ամենազօր կարդամ յօգնութիւն տկար անձին իմոյ ։ Նայեա՛ յերկրպագութիւն իմ, և տուր ինձ առնել զարդարութիւն ճշմարտութեան․ և գոհութեամբ փառաւորել զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգին․ այժմ և միշտ և յաւիտեանս․ ամէն ։

Հայցուած ։

Առաջնորդեա՛ ինձ Տէր Աստուած իմ, և ուսո՛ ինձ գնալ 'ի ճանապարհս քո արդարութեամբ. պահեա՛ 'ի խաղաղութեան զկեանս իմ, և զգնացս 'ի հաճոյս քո ուղղեա՛ . ժամանեցո՛ զհոգևոր և զմարմնաւոր ընթացս ծառայիս քո՝ անարատ ճանապարհաւդ յաւիտենականն 'ի կեանսդ ։ Շնորհօք միածնի քո Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ եղև մեզ առաջնորդ կենաց և յոյս փրկութեան. ընդ որում օրհնեալ ես Հա՛յր ամենակալ՝ համդերձ կենդանարար և ազատիչ սուրբ Հոգւովդ. այժմ և միշտ և յաւէ ։

Սաղմոս ։

'Ի խորոց կարդամ առ քեզ Տէր Տէր լո՛ւր ձայնի իմում ։ Ունկն դի՛ր Աստուած աղօթից իմոց, և մի՛ անտես առներ զխնդրուածս իմ ։ Ես զքեզ աղաչեմ Տէր ընդ առաւօտս, լուիցես ձայնի իմում ։ Ես առ քեզ աղաղակեմ Տէր. առաւօտու աղօթք իմ ժամանեսցե՛ն առ քեզ ։ Լո՛ւր Տէր ձայնի խնդրուածոյ իմոյ յաղաչել ինձ առ քեզ, 'ի համբառնալ ձեռաց իմոց 'ի տաճար սուրբ քո ։ Նայեա՛ 'ի ձայն աղօթից իմոց Թա-

դաւոր իմ և Աստուած իմ։ Եղիցի ողորմութիւն քո ՚ի մխիթարել զիս՝ ըստ բանի քում, զծառայս քո։ Լսելի արա ինձ առաւօտու զողորմութիւն քո, զի ես ՚ի քեզ Տէր յուսացայ։ Ես յողորմութիւնս քո Տէր յուսացայ. ցնծասցէ սիրտ իմ ՚ի փրկութեան քում. օրհնեցից զՏէր զբարերարն իմ։ Ուրախ եղէց և ցնծացայց ՚ի քեզ Աստուած իմ. եկեսցեն յիս գթութիւնք քո և կեցից։ Կեցցէ անձն իմ օրհնեսցէ զքեզ, և իրաւունք քո օգնեսցեն ինձ։ Տէր ողորմութիւն քո յաւիտեան. զգործս ձեռաց քոց մի անտես առներ։ Յիշեա Տէր զգթութիւնս քո և զողորմութիւնս քո. որք են յաւիտենից։ Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն. և մի՛ խոտորիր բարկութեամբ ՚ի ծառայէ քումմէ։ Մի՛ թողուր զիս Տէր Աստուած իմ, և մի՛ ՚ի բացեայ առներ յինէն. հայեաց յօգնել ինձ Տէր փրկութեան իմոյ։ Աստուած Աստուած իմ նայեաց առ իս, մի՛ թողուր զիս. հեռի եղէ ՚ի փրկութենէ իմմէ վասն բանից յանցանաց իմոց։ Զմեղս մանկութեան իմոյ և զանգիտութեան իմոյ մի՛ յիշեր. այլ յիշեա զիս Տէր ըստ ողորմութեան քում, վասն քաղցրու-

թեան քո, զի քաղցր և ուղիղ ես։ Վասն անուան քո Տէր քաւեա՛ զմեղս իմ, զի բազում եղեն։ Ձեռք քո արարին և ստեղծին զիս. իմաստուն արա՛ զիս և ուսոյց զպատուիրանս քո։ Օ արթո՛ զաչս իմ, և նայեցայց 'ի սքանչելիս օրինաց քոց։ Դու լուսաւոր առնես զճրագ իմ Տէր Աստուած իմ, լո՛յս արա ինձ 'ի խաւարի։ Բարի են ինձ օրէնք բերանոյ քո՝ քան զհազարս ոսկւոյ և արծաթոյ։ Օրհնեալ ես դու Տէր, ուսո՛ ինձ զարդարութիւնս քո։ Ուսո՛ ինձ առնել զկամս քո, զի դու ես Աստուած իմ։ Առաջնորդեա՛ ինձ 'ի շաւիղս պատուիրանաց քոց. և 'ի ճանապարհս քո կեցո՛ զիս։ Օրհնագէտ արա՛ զիս Տէր 'ի ճանապարհի քում, և առաջնորդեա՛ ինձ 'ի շաւիղս քո ուղիղս։ Հաստատեա՛ զշաւիղս իմ 'ի ճանապարհի քում. զի մի՛ գայթակղեսցին գնացք իմ։ Խոնարհեցո՛ զսիրտ իմ 'ի վկայութիւնս քո, և մի՛ յագահութիւն։ Դարձո՛ զաչս իմ զի մի՛ տեսից զնանրութիւն. և մի՛ 'ի բացեայ առներ 'ի բերանոյ իմմէ զբան ճշմարտութեան մինչև յոյժ։ Բևեռեա՛ ընդ երկիւղ քո զմարմին. իմ զի 'ի դատաստանաց քոց երկեայց յոյժ։ Օ ճանապարհս մեղաց 'ի բաց

տրայ յինէն. և յօրէնս քո ողորմեա ինձ ։ Անձն իմ՝ ՚ի ձեռս քո է յամենայն ժամ. և առաջի քո է ամենայն ցանկութիւն իմ ։ Ո՜ անգործս իմ տեսին աչք քո, և ՚ի գիրս քո գրեցան ամենեքեան ։ Ո՜ որ ամենայն նախատինք իմ առաջի իմ են. և ամօթ երեսաց իմոց ծածկեաց զիս ։ Նեղութիւնք սրտի իմոյ բազում եղեն յոյժ. և ՚ի վշտաց իմոց հան զիս ։ Մի՛ ՚ի բացեայ առներ յինէն՝ զի նեղութիւնք մերձեալ են, և ոչ ոք է որ օգնէ ինձ ։ Նայեա առ իս և լո՛ւր ինձ զի տրտմեցայ ես ՚ի ձանձրանալ իմում և խռովեցայ ։ Դու Տէր մի՛ հեռի առներ զօգնութիւն քո յինէն, զի ՚ի քեզ յուսացայ ։ Օգնեա ինձ Տէր Աստուած իմ, և փրկեա զիս ըստ ողորմութեան քում, և պահեա զանձն իմ ։ Վասն անուան քո Տէր կեցուսցես զիս, արդարութեամբ քով հանցես ՚ի նեղութենէ զանձն իմ ։ Չափով եդեր զաւուրս իմ. և կայր զօրութեան իմոյ որպէս ոչ ինչ է ։ Պարծանք զօրութեան իմ դու ես Տէր. և ՚ի կամս քո բարձր եղիցի եղջիւր իմ ։ Քո եմ ես, և կեցո զիս ըստ գթութեան քում ։ Պահեա զիս Աստուած իմ, զի ես ՚ի քեզ յուսացայ. Տէր իմ ես դու և բարիք իմ ինձ ՚ի քէն են ։ Ողորմու-

թիւն քո Տէր զհետ իմ եկեսցէ զամենայն աւուրս կենաց իմոց, բնակել ինձ 'ի տան Տեառն ընդ երկայն աւուրս ։ Առ քեզ Տէր համբարձի զանձն իմ. Աստուած իմ 'ի քեզ յուսացայ, մի՛ ամաչեցից և մի՛ ծիծաղեսցին զինև թշնամիք իմ ։ Աչք իմ յամենայն ժամ առ քեզ Տէր. և դու հանես յորոգայթէ զոտս իմ ։ Դու ես համբերութիւն իմ Տէր. Տէր յոյս իմ 'ի մանկութենէ իմմէ ։ 'Ի քեզ հաստատեցայ ես յարգանդէ. յորովայնէ մօր իմոյ դու ես ապաւէն իմ. և առ 'ի քէն է օգնութիւն իմ յամենայն ժամ ։ Բաժին իմ ես դու Տէր, ընկա՛լ զծառայս քո 'ի բարի ։ Արա՛ ընդ ծառայի քում Տէր ըստ ողորմութեան քում. և զարդարութիւնս քո ուսո՛ ինձ ։ 'Ի քեզ Տէր յուսացայ, մի՛ թողուր զիս Աստուած իմ. յարդարութեան քում փրկեա՛ զիս և ապրեցո՛ զիս ։ Զճանապարհս իմ ուղիղ արա՛ ինձ ըստ բանի քում. և մի՛ տիրեսցեն ինձ ամենայն մեղք ։ Փորձեա՛ զիս Աստուած և ծանի՛ր զսիրտ իմ. և քննեա՛ զիս և ծանի՛ր զշաւիղս իմ, և տե՛ս թէ իցեն անօրէնութիւնք 'ի ճանապարհս իմ՝ առաջ-րդեա՛ ինձ 'ի ճանապարհս քո յաւիտենից ։ Միտ սուրբ հաստատեա՛ յիս Աստուած, և

Հոգի ուղիղ նորոգեա՛ 'ի փորի իմում։ Դի՛ր Տէր պահապան բերանոյ իմոյ՝ եւ դուռն ամուր շրթանց իմոց․ զի մի՛ խոտորեսցի սիրտ իմ բանիւ չարութեան։ Կեցուսցես զիս ըստ բազում ողորմութեան քում, եւ օրհնեցից զքեզ զամենայն աւուրս կենաց իմոց։ Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ․ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից․ ամէն։

Օրհներգ։

Սուրբ Աստուած․ Սուրբ եւ հզօր․ Սուրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա՛ ինձ՝ եւ ամենայն մարդկան։

Էակից բանդ Հօր եւ Հոգւոյն, թագաւոր յաւիտենից Քրիստոս․ որ իջեր յերկնից 'ի փրկութիւն ազգի մարդկան․ յանձն առեր զչարչարանս եւ զմահ վասն մեր․ օրհնեալ Տէր ողորմեա՛ ինձ։

Յանձառ փառաց խոնարհեցար 'ի մեր բնութիւնս՝ բանդ Աստուած, եւ մարմնացար անապական մարմնով, 'ի մի բնութիւն եղեալ առանց փոփոխման․ օրհնեալ Տէր ողորմեա՛ ինձ։

Օրհնեալ ես դու Քրիստոս Աստուած կեանքդ մահկանացուացս, որ յարեար 'ի մե-

ռելոց եւ կոխեցեր զմահ · ողորմեա՛ ինձ եւ ամենայն մարդկան ։

Տէր որ 'ի վերայ քերովբէից փառաւորանիս · քաղցրութեամբ խոնարհեալ ընկա՛լ զաղաչանս ։

Տէր որ շնորհեցեր ողորմութիւն ազգի մարդկան · քաղցրութեամբ ։

Տէր որ ուսուցեր մեզ յամենայն ժամ փառս տալ անուանդ քում սրբոյ · քաղցրութեամբ ։

Բանդ որ 'ի Հօրէ ելեալ մարմնացար 'ի կուսէն · խաչեցար կամաւ Հօր վասն մեր եւ զմեղս սպաներ · սուրբ Աստուած ողորմեա՛ ինձ ։

Որ յարարածոց ես անբովանդակելի , 'ի խաչափայտին բեւեռեալ զմահ կոխեցեր · սուրբ Աստուած ողորմեա՛ ինձ ։

Որ 'ի նախնումն զանկեալն 'ի ծառայութիւն մահու , պատուական մարմնով եւ արեամբ քո ազատեցեր · սուրբ Աստուած ։

Աղօթք ·

Որ էիր յառաջ քան զյաւիտեանս բանդ Աստուած · էակից Հօր եւ աթոռակից սուրբ Հոգւոյդ · որ եւ զնախաստեղծին պատուիրանազանցութիւն պղծոյն Ճաշակմանն , նշա-

նաւ ամենայաղթ խաչի քո ենթադրեալ, 'ի կենդանութիւն փոխեցեր. և զանօրէնութիւնս մեր 'ի նմա բևեռեալ, կեանս անապականս և զնորոգութիւն կենաց՝ յուսացելոց 'ի քեզ խոստացար։ Որոց մասնաւորիլ և զիս արժանի արա Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ ես օրհնեալ ընդ Հօր և ընդ սուրբ Հոգւոյդ. այժմ և միշտ։

Աղօթք։

Անդամանդեայ զօրութիւն և աղբիւր ամենաշնորհութեան՝ դու ես Քրիստոս Աստուած փրկիչ մեր. որ շնորհեցեր ինձ յառնել 'ի քնոյ և խոստովան լինել առ քեզ, վասն իրաւանց և արդարութեան քո։ Եւ այժմ աղաչեմ զքեզ Տէր Աստուած իմ, արա զիս արթուն և պատրաստ 'ի ժամ առաւօտու ընդ սուրբս քո, զի ընդ նոսին գոհանալով փառաւորեցից զքեզ ընդ Հօր և ընդ Հոգւոյդ սրբոյ. այժմ և։

Աղօթք։

Աստուած մշտնջենաւոր՝ Աստուած յաւիտենականդ, որ 'ի սուրբն աշխարհն էջեր ծագեցար. և լուսաւորեցեր զմեզ 'ի խաւարային մեղաց մերոց։ Որ վասն մեր 'ի չարչար-

ւորութիւն եկիր՝ անչափդ Աստուած․ և հե-
ղեալ ծաւալեցեր զշնորհս Հոգւոյդ սրբոյ
յառաքեալս քո։ Այժմ և յաւիտեանս ժա-
մանակաց՝ բարերարեալ ես ամենամեծդ Աստ-
ուած, ընդ Հօր և ամենասուրբ Հոգւոյդ․
ամէն ։

Աղօթք․

Որ 'ի քերովբէական և յանպատում հան-
գուցեալ ես յԱթոռ, և այցելու ես միշտ
արարածոց քոց։ Դու Տէր յառաջակայ ժա-
մուս և յաւէտ մինչ 'ի կենցաղոյս աւար-
տումն, տպաւորեալ միացո՛ զմիտս և զկամս
իմ ընդ ամենայն բարեգործութեան յորդոր-
մունս․ և խոստացելոց բարեացդ հաղորդ
լինել զիս արժանի արա՛, Տէր իմ և փրկիչ
Յիսուս Քրիստոս, որ ես օրհնեալ ընդ Հօր
և սրբոյ Հոգւոյդ․ այժմ և ։

Աղօթք․

Քում ամենազօր և յաղթող Տէրութեանդ
կրկնի ամենայն ծունր՝ յերկրպագութիւն,
և փառաւորի յամենեցունց թագաւորու-
թիւն քո։ Նայեա՛ յերկրպագութիւնս իմ,
և տո՛ւր ինձ առնել զարդարութիւն ճշմար-
տութեան։ Վասն զի դու ես Աստուած
խնամողութեան՝ որ բարձեր զթշնամութիւն

'ի մէջս, և արարեր զխաղաղութիւն յերկինս և յերկրի, հեռաւորաց և մերձաւորաց աւետարանեցեր զնոր պարգևս քոյին բարեացդ․ որում և զիս արժանաւոր արասցես մեծի շնորհացդ, դասելով ընդ ճշմարիտ երկրպագուս քո, Աստուած իմ, և Տէր իմ և փրկիչ Յիսուս Քրիստոս․ որ ես օրհնեալ ընդ Հօր և ընդ սուրբ Հոգւոյդ․ այժմ և ։

### Աղօթք ։

Տէր զօրութեանց՝ որ կամաւոր մահուամբ քով կենդանացուցեր զմեզ 'ի մեռելութենէ մեղաց մերոց, և բեւեռեցեր զկնիք դատապարտութեան մերոյ 'ի Խաչին, և շնորհեցեր ազատութիւն ազգի մարդկան, 'ի ծառայութենէ ապականութեան՝ յազատութիւն փառաց, հեղմամբ արեան քո սրբոյ ։ Ընկալ և այժմ զաղաչանս իմ, և յաջողեա ինձ ուղիղ հաւատով և առաքինասէր վարուք կեալ յայսմ աշխարհիս, և արժանաւոր լինել յաւիտենական և երկնային ուրախութեանցն ընդ ամենայն սուրբս քո․ և գոհանալով փառաւորել զքեզ ընդ Հօր և սրբոյ Հոգւոյդ․ այժմ և միշտ ։

Աղօթք.

Խաղաղարար Աստուած և հաստիչ խաղաղութեան, հաստատեա զանձն իմ քոյով խաղաղութեամբդ, որով ունիս յիւրաքանչիւր կարգի զամենայն արարածս քո, ուղիղ հրամանաւդ մատակարարելով. վասն զի այդ եւս է կամք քո՝ խաղաղականն և հագեւոր սիրով կալ մեր առ միմեանս, և սպասել արթուն մտօք յայտնութեան միածնին Աստուծոյ, և փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի. որում արժանաւոր եղէց հանդիպիլ ամպովք ընդ առաջ Տեառն, յօդս. զուարթերես կոչեսցես յաջմէ քումմէ՝ ընդ սուրբս և օրհնիցեն անուանդ քո սրբոյ, և ժառանգեցից զպատրաստեալն ՚ի սկզբանէ աշխարհի սրբոց քոց թագաւորութիւնդ. և ընդ նոսին գոհանալով փառաւորել զքեզ ընդ Հօր և ամենասուրբ Հոգւոյդ. այժմ և միշտ.

Մաղթանք

Լուսով քո Քրիստոս ամենեքեան լուսաւորեցաք, և ՚ի սուրբ Խաչ քո հաւատացեալքս ապաւինեցաք. Լեր ինձ Աստուած փրկիչ իմ. տուր ինձ զխաղաղութիւն քո. և արա՛ առ իս զողորմութիւն քո.

Հայցուած ։

Ցօղեա՛ Տէր զցօղ բարերար ողորմութեան քո 'ի մեղուցեալ անձն ծառայիս. շիջո՛ զբոց հնոցի յանցանաց իմոց, և փրկեա՛ զիս 'ի յաւիտենական հրոյն ։ Լուսաւորեա՛ և սուրբ պահեա՛ զմիտս իմ, զի մի՛ խաւարեսցայց 'ի մեղաց և 'ի ցանկութենէ աշխարհի. այլ արժանի եղէց պահել զպատուիրանս քո, առնուլ զպսակն լուսոյ և կենաց զոր խոստացար Սիրելեաց քոց. Ճշմարիտդ Աստուած, Յիսուս Քրիստոս Տէր մեր. կեցո՛ և ողորմեա՛ ։

Աղօթք ։

Առաջնորդ կենաց և պարգևիչ խաղաղութեան Քրիստոս Աստուած իմ, առաջնորդեա՛ ինձ գնալ 'ի ճանապարհս քո արդարութեան, և խաղաղութեամբ ժամանել 'ի նաւահանգիստն կենաց և փրկութեան, շնորհօք ողորմութեան քո. զի դու ես օգնական և փրկիչ մեր, և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ ։

Հայցուած ։

Զգեցո՛ ինձ Տէր Աստուած զդէն արդարութեան, զօրաւոր և յաղթող լինել ընդդէմ սատանայական պատերազմաց, և զամե-

նայն հրեղէն նետս 'նորա շիջուցանելով՝ անկասկած եղէց յիրաց խաւարային գնացից, 'ի գայթակղութենէ դիւին 'ի հասարակ աւուր ։ Եւ զգաստացեալ վայելչական տունջեանս՝ առաքինութեամբ կացից 'ի փրկութիւն անձին իմոյ, 'ի պատիւ և 'ի փառս սըրբոյ Երրորդութեանդ ․ այժմ և միշտ ։

Աղօթք ։

Փառաւորեալ և օրհնեալ ես Աստուած ամենակալ, որ ծագեցեր զլոյս առաւօտու յարարածս քո ․ ծագեա՛ Տէր և զառատ ողորմութիւն քո 'ի վերայ փառաբանչաց անուան քո՝ և ամենայն ազգի մարդկան, և 'ի վերայ ազգիս Հայոց ․ 'ի վերայ իմայնոցս ամենեցուն, և 'ի վերայ մեղաւոր ծառայիս, և կեցո՛ հզօր աջով քով ․ և ուղղեալ աջողեա՛ զամենայն գործս 'ի բարին ։

Աղօթք

Տէր տունջեան և գոյացուցիչ գիշերոյ որ արարեր զտիւ 'ի զբօսանս բարեգործութեան՝ 'ի փրկութիւն անձանց մերոց, և զգիշեր 'ի հանգիստ քնոյ տկարացեալ բնութեան մերոյ ։ Իսկ այժմ զարթուցեալ բացեր զբերան իմ յօրհնաբանութիւն ահաւոր և փառաւորեալ անուանդ քում սըրբոյ ։ Ընկա՛լ

Տէր զաղաչանս իմ. և աջողեա ինձ ուղիղ հաւատով և առաքինասէր վարուք 'ի սոյն պաշտօն քո կանխել միշտ և հանապազ. և սովին կանոնիւս անդադար փառաւորել զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին, այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն։

Հայցուածք.

Աղաչեմ զքեզ Տէր Աստուած շնորհեա զշնորհ ողորմութեան քո ամենայն արարածոց. զխաղաղութիւն ամենայն աշխարհի և ազանց. և հաստատութիւն սրբոյ Եկեղեցւոյ քո։

Շնորհեա Տէր զառատ բարիս համօրէն ազգի մարդկան, և ազգիս Հայոց՝ զօգնութիւն և զօրութիւն 'ի կատարումն գործոց բարեաց։

Շնորհեա Տէր ազատութիւն և մխիթարութիւն որք 'ի վիշտս և 'ի նեղութեան իցեն. և հիւանդաց առողջութիւն և բժշկութիւն ցաւոց։

Շնորհեա Տէր զբարեխառնութիւն օդոց և զառատութիւն բուսոց և պտղոց, և լից զպիտոյս արարածոց քոց ըստ գթութեան քում։

Շնորհեա Տէր զխաղաղ և զանվտանգ գնացս ճանապարհորդաց ծովու և ցամաքի,

և աղջամբ ժամանակացս յիւրաքանչիւր տեղիս։

Շնորհեա՛ Տէր ազգիս Հայոց զսէր, զհամակամութիւն, և զմիաբանութիւն. և կանգնեա՛ զմեզ 'ի գլորմանէս՝ հզօր աջով քով, և փառաւորեա՛։

Շնորհեա՛ Տէր ատելեաց և թշնամեացն իմոց զողորմութիւն և զթողութիւն. և չարագործացն իմոց՝ զբարիս պարգևեա՛, և դարձո՛ 'ի չարեացն։

Շնորհեա՛ Տէր զքաւութիւն և զթողութիւն բազում յանցանաց իմոց, և զերծո՛ զիս 'ի փորձանաց՝ որոց ո՛չ կարիցեմ համբերել։

Շնորհեա՛ ինձ Տէր զմիտս բարիս, զկամս արդարութեան և զբան ուղիղ. զխորհուրդս բարեշնորհս, և զվարս առաքինութեան։

Շնորհեա՛ ինձ Տէր զսիրտ սուրբ, զխիղճ յստակ, և զկիրս բարեկարգս. զխաղաղութիւն մտաց, և զբաւարարութիւն սրտի։

Շնորհեա՛ ինձ Տէր զգնացս ուղիղ՝ 'ի ճանապարհս արդարութեան և խրատանց. և զյօժարութիւն գործելոյ միշտ զբարիս։

Շնորհեա՛ ինձ Տէր արժանաւորիլ անվախճան կենացդ երկնից, և ժառանգել զարքայութիւն քո յաւիտենից, շնորհօք ողորմութեան քո։

Շնորհեա ինձ Տէր զհովանի հզօր աջոյդ, և պահեա զիս յամենայն փորձութեանց և 'ի վտանգից հոգւոյ և մարմնոյ՝ յայսմիկ աշխարհի ։

Շնորհեա ինձ Տէր զօգնութիւն Հրեշտակի խաղաղութեան՝ և սրբոյ խաչիդ, 'ի պահպանութիւն տկար անձին իմոյ ։

Շնորհեա ինձ Տէր զամենայն պէտս հոգւոյ և մարմնոյ իմոյ, որ օգուտ և բարի իցեն ինձ. և զյաջողութիւն բարի գործոց իմոց ։

Շնորհեա Տէր ինձ և իմոցս ամենից՝ զառատ ողորմութիւն քո, և ազատեա և առանց փորձանաց պահեա մինչ 'ի վախճան ։

Շնորհեա Տէր և կատարեա զհայցուածս իմ, բարեխօսութեամբ սրբոյն Աստուածածնի, սրբոյ Լուսաւորչին և համօրէն Սրբոց քոց. ամէն ։

Աղօթք Տէրունական

Հայր մեր որ յերկինս ես, Սուրբ եղիցի անուն քո ։ Եկեսցէ արքայութիւն քո ։ Եղիցին կամք քո, որպէս յերկինս՝ և յերկրի ։ Զհաց մեր հանապազորդ՝ տուր մեզ այսօր. և թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց ։ Եւ մի տանիր զմեզ 'ի փորձութիւն ; այլ փրկեա

'ի չարէն. զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Երգ Սրբոյն Ներսիսի Շնորհալւոյն.

Օրհնեմք զքեզ Հայր անսկիզբն, Էից էակ 'ի յանդգոյից. բարձր ձեռօք նիւթ 'ի Հողոյ՝ և ստեղծեր մարդ 'ի պատկեր քո. գլուխն ոտից խոնարհեցաւ, զի զպատուիրան քո մոռացաւ. դարձեալ ասեմք ընդ անառակին թէ, Հայր մեղաք քեզ 'ի յերկինս։

Երկնաւորացն անքննելի՝ եղեր մարդկան տեսանելի. զգեցար պատկեր Հողեղինի, Պատկերդ Հօր՝ անփոփոխելի. ելեր յերրորդ ժամ'ի խաչին՝ վասն Ադամայ նախաստեղծին. ընդ աւազակի քում խաչակցին՝ արժանացո զմեզ դրախտին։

Թագաւոր Թագաւորաց՝ առատատուրդ զ Հոգի շնորհաց. ժողովելոցն 'ի վերնատանն՝ առաքելոցն երկոտասան. 'ի Հրոյ լեզուս երևեցար՝ յոգիս նոցա վերաբնակար. յոր յանուն քո ժողովելոցս՝ էջ և առ մեզ յերրորդ ժամուս։

Դաւանութիւն.

Հաւատամք 'ի մի Աստուած. Հայր ամենակալ. յարարիչն երկնի և երկրի, և-

րևելեաց և աներևութից . Իբր 'ի մի Տէր Յիսուս Քրիստոս . Որդին Աստուծոյ . ծընեալն յԱստուծոյ Հօրէ՝ միածին, այսինքն յէութենէ Հօր : Աստուած յԱստուծոյ . Լոյս 'ի լուսոյ . Աստուած ճշմարիտ . յԱստուծոյ ճշմարտէ՝ Ծնունդ՝ և ոչ արարած, Նոյն ինքն 'ի բնութենէ Հօր . որով ամենայն ինչ եղև յերկինս և 'ի վերայ երկրի երևելիք և աներևոյթք : Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան՝ իջեալ 'ի յերկնից մարմնացաւ՝ մարդացաւ՝ ծնաւ կատարելապէս 'ի Մարիամայ սրբոյ կուսէն՝ Հոգւովն սրբով . որով էառ զմարմին զհոգի և զմիտ . և զամենայն որ ինչ է 'ի մարդ՝ ճշմարտապէս և ոչ կարծեօք : Չարչարեալ, խաչեալ, թաղեալ . յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ 'ի յերկինս՝ նովին մարմնով նստաւ ընդ աջմէ Հօր : Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր՝ 'ի դատել զկենդանիս և զմեռեալս . որոյ թագաւորութեան ոչ գոյ վախճան : Հաւատամք և 'ի Սուրբ Հոգին . յանեղն և 'ի կատարեալն . որ խօսեցաւ յօրէնս և 'ի մարգարէս և յաւետարանս . որ էջն 'ի յորդանան . քարոզեաց զառաքեալսն . և

բնակեցաւ 'ի սուրբսն . Հաւատամք և 'ի մի միայն ընդհանրական և յառաքելական եկեղեցի . 'Ի մի մկրտութիւն . յապաշխարութիւն . 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց . 'ի յարութիւն մեռելոց . 'ի դատաստանն յաւիտենից՝ հոգւոց և մարմնոց . Յարքայութիւնն երկնից , և 'ի կեանսն յաւիտենականս . Իսկ՝ որք ասեն էր երբեմն . յորժամ ոչ էր Որդի . կամ էր երբեմն . յորժամ ոչ էր Սուրբ Հոգի . կամ թէ՝ յոչէից եղեն , կամ յայլմէ էութենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ և կամ ըզՍուրբ Հոգին . և թէ՝ փոփոխելիք են կամ այլայլելիք՝ զայնպիսիսն նզովէ կաթողիկէ և առաքելական սուրբ եկեղեցի :

'Ի սրբոյ Լուսաւորչէն մերմէ ասացեալ :

Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս՝ երկրպագանելով սըրբոյ Երրորդութեանն և միոյ Աստուածութեանն , Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ : Այժմ և միշտ և յաւէ :

Աղօթք Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ :

Արքա՛յ երկնաւոր . Թագաւոր բարձրեալ . Տէր բոլորից . ամենից ակնկալութիւն . ստեղծող տեսականաց . Հաստիչ իմանալեաց

պատճառ եղանութեանց · կազմիչ հանդեր-ձերոց · տուիչ լուսոյ · ուխտ առաւօտու · պատրաստիչ վաղորդենի · երեւեցուցիչ երե-կորի · տարրիչ խաւարի · արուեստաւոր բարեհնար · իմաստութեան գործօնեայ · քաւարան օրհնեալ · հալիչ մեղանաց · հալածիչ ցաւոց · քակիչ դառնութեանց · պահպանարան հանգստեան · հնարք նիր-հման · յարմարիչ քնոյ · պարգեւիչ ննջման · շնչոյ յարակարգութիւն · զգայութեան տեւողութիւն · ցրիչ ցնորից · յեղանակիչ անրջոց · փոխարկութիւն զարհուրմանց · պլպլութիւն տխրութեանց · խափանիչ խիթմանց · ընդարձակիչ կարծեաց · համա-դրութիւն ծփմանց · ահագնութիւն խար-դախմանց · հարուածիչ դիւաց · փախու-ցիչ ախտից · ընկղմիչ գայթագղութեանց ։

Պաշտպանեա՛ երկնաստեղծ ձեռամբդ · զօրացո՛ բարձրացեալ քո աջովդ · ամփո-փեա՛ ամենակալդ թեւօք · ծածկեա՛ Աստու-ածութեան խնամօքդ · ամրացո՛ վերակա-ցութեամբ վերնոյնոցդ · շուրջ անակի պարս-պեա՛՝ զումարտակօքդ անմահից · 'ի յամե-նուստ պարփակեա՛՝ կցորդութեամբ հրեշ-տակացդ · վանեա՛ զընդդիմամարտն իմ՝ զի-

նուորութեամբ զուարթնոցդ · պատսպարեմ զսասանեալս՝ Աստուածածնիդ մաղթանօք· զքանակս անդրանկացդ՝ բարեկարգեամ լինձ պահապան : Ի՛այ ընդ աչաց դիմաց՝ և զմտաց իմ ախտանելիս · զգաստ արա ընդ ոգւոցս՝ և զծանրաբեռն կրիցս դանդաղութիւն · վերացո՛ Տէր 'ի զգայութեանցս՝ զմածեալս յիմարութիւն · բարձ միայն բարեգործ՝ զպատրուակիս թանձրութիւն : Ընդ սկզբան բերմանս լուսոյ՝ զողորմութիւն քո ծագեա · ընդ ելից արեւուն՝ արդարութեան արեգակնդ 'ի յանձկութիւն սրտիս մտցէ · Ճառագայթ քո փառացդ՝ 'ի յիմաստից խորհրդանոց ջահեսցէ · խաչիդ տեառնագրութիւն՝ ընդ շունչս և ընդ մարմինս համասփիւռ տարածեսցէ : Յանձն առնեմ քեզ յաւուրս՝ զքո յարմարեալ տադաւարս՝ պահպանեա ոգւոյս որ 'ի սմին · Զի դու ես Աստուած անքննին, առ ամենեսին բաւական, և յամենայնում բովանդակ, օրհնեալ յաւիտեանս · ամէն ·

Նորին Դարձեալ ·

Իսկ արդ՝ վասն զի արթնականն մեր զուարթութիւն՝ քեզ նմանումն իմն է համարեալ, իսկ 'ի խոր թմրութիւն լռելն՝

վասն ուղիղ հաւատոյն 'ի քեզ՝ անթարթափ
բացութիւն աչաց. ուղղեա՛ Հոգւոյդ քո
իմաստութեամբ զյաջողուած ձեռինս գոր-
ծոց՝ ընդ հեծութեան ձայնիս մաղթանաց։
Զօրացո՛ Տէր՝ 'ի հանդէս բարի ճգնո-
ւորական արի վաստակոց. կցորդ լեր կա-
րեացս ուխտաւորութեան. թեթեւս կացո՛ զաշ-
խատութեանս այս սկիզբն. արագեա՛ միշտ
կարող՝ զյառաջադրեալ ձեռնարկերտս. դիւ-
րաւորս ընթացո՛ 'ի յաւարտումն լրմանն։
'Ի վախճան իբրն՝ բերկրութեամբ զիս
հասո՛. ժամին կոչուածս՝ 'ի հանդի-
պումն յաւուրն. կցորդ լեր ուղւոյն՝ ճանա-
պարհիս ընթացից. 'ի թռիչս ամբարձման՝
փութացուսցես յօգտակարն. ընդ աջմէ իմ
լիցիս՝ 'ի վատնելի ծանրութեանն. զձայն
քո լուեցո՛ 'ի յանձկութեանն պահու. մա-
տամբ քո ազդեա՛՝ 'ի սահմանին անձկու-
թեան. հարթեա՛ զխորոց՝ ամենաչար խա-
փանմանն. Հոգեղէնին առաքմամբ, բառ
Ամբակումայ, ինձ հնարեա՛. բան ինձ շը-
նորհեա՛ 'ի յատենի բազմութեանն. իմաս-
տութիւն յիս անկեա՛՝ 'ի հանդիպման քըն-
նութեան։ Ամպով կամաց քոց հովանացեր
հրաշապէս. հանդարտեցո՛ փայլիւք կեսաց՝

զծովլուս մըրրիկ. սանձեա՛ զաստեաց կենցաղոյս պատկեր՝ քոյին հրամանաւդ. քանզի թէ աստ ողորմութիւն քո Տէր կամեսցի. այս լուծութիւն կոհակաց կարծր է քան զվէմ. և թէ 'ի ցամաքի անտես անկցես, իբր զանկայուն՝ անդութիւն յատակիս 'ի ներքոյ սաստի հասեալ սատանի ;

Արդ ընկա՛լ Յիսուս՝ զպաղատանացս ձեռնարկութիւն՝ քեզ 'ի հաճութիւն, և արա՛ ինձ զամենակարծն զայթագղութիւն՝ մեծ վստահութիւն. Որպէս 'ի ջրահեղձոյց ամենակործանն զարու, որք 'ի հարթ տարածման զետնի առանց երկիւղի յանհոգս կէին, յողորմութենէդ ամոյն մնացեալ՝ կորուսան. իսկ ընդ հովանաւոր մածուածով լաստին՝ յոգնատատան հիմանն հայթայթանօք, յանուն զթածին յեցեալ պահեցան. ընդ որս՝ և զաղաչողս մշտատատան՝ 'ի նաւահանգիստն խաղաղութեան մարդասիրապէս ալեծեալ ապրեցո՛. փարձս 'ի քոյոցդ ընդ իս բերելով հողեոր շահից, զատորաբերս այս սատարութիւն պարտուցս ըքեալ բանից առակաւ, 'ի քեզ Տէր անկայց մնացեալ խապաս անբաժանելի. օրհնեալ յամենայնի. Եւ կցորդելով այսմ մաղ-

թևանաց հոգեղէնքն ամենամաքուրք՝ ընդ հոգեզինացն մարտիրոսաց, որք ջրով և հրով փորձեցան, և յելից գերբնմանն ընդ մեր խնդրեցին, և մեզ յիշատակ թողին օգնութեան, տասցեն ընդ մեզ համբառնաբար զուգամամնութեամբ՝ եղիցի · եղիցի,



## ՊԱՇՏՕՆ ԵՐԵԿՈՅԵԱՆ·

ՕՐՀՆԵԱԼ Տէր Աստուած հարազոյ և միասնական անբաժանելի սուրբ Երրորդութիւն, Հայր և Որդի և Հոգի Սուրբ. Տէր և Պահպանիչ ամենայն արարածոց. միայն Սուրբ. և միայն օրհնեալ յաւիտեանս. փառք քեզ Տէր՝ յաղագս ամենայնի. փառք քեզ։

Սաղմոս.

Տէր Աստուած փրկութեան իմոյ, 'ի տուէ կարդացի. և 'ի գիշերի առաջի քո։ Ուղիղ եղիցին աղօթք իմ, որպէս խունկ առաջի քո Տէր. համբարձումն ձեռաց իմոց՝ պատարագ երեկոյի։ 'Ի քեզ յուսացաւ սիրտ իմ. օգնեցաւ և զուարճացաւ մարմին իմ, և ես կամօք իմովք խոստովան եղէց քեզ։ Օրհնեցից զքեզ Տէր 'ի կեանս իմ, և ուրախ եղէց 'ի քեզ յամենայն ժամ։ Խոստովան եղէց քեզ Տէր՝ զի լուար ինձ, և եղեր ինձ 'ի փրկութիւն։ Լուր ինձ Տէր. նայեա՛ 'ի ձայն աղօթից իմոց 'ի կարդալ իմում առ

քեզ . Եւ յողորմութիւնս քո Տէր յուսա-
ցայ . ցնծասցէ սիրտ իմ 'ի փրկութեան
քում . օրհնեցից զՏէր զբարերարդ իմ .
Բարձր անուանեմ զքեզ Աստուած իմ և Թա-
գաւոր, ապաւէն իմ և փրկիչ . և օրհ-
նեմ զանուն սուրբ քո յաւիտեան և յաւի-
տեանս յաւիտենից .

Սրբասացութիւն .

Սուրբ . Սուրբ . Սուրբ . Տէր զօրու-
թեանց . Աստուած ամենակալ . լի են եր-
կինք և երկիր փառօք քո . օրհնութիւն 'ի
բարձունս . օրհնեալ յաւիտեանս .
Օրհնեալ Հայր սուրբ՝ Աստուած ճշմարիտ .
Օրհնեալ Որդի սուրբ՝ Աստուած ճշմարիտ .
Օրհնեալ Հոգի սուրբ՝ Աստուած ճշմարիտ .
Օրհնեալ համագոյ և միասնական անբաժա-
նելի սուրբ Երրորդութիւն, այժմ և միշտ
և յաւիտեանս յաւիտենից . ամէն .

Օրհնեցք .

Սուրբ ես Տէր զօրութեանց՝ որ բնա-
կեալդ ես 'ի յերկինս, և բարեբանիս 'ի սրբ-
բոց քոց . Երկնային զօրութիւնք Սերով-
բէք և Քերովբէք՝ անդադար օրհնեն
սուրբ զանունդ քո . Քահանայք ընդ նո-

ուին պաշտօնեայք և ժողովուրդք , երկր-պագեմք Տէրութեանդ քում ։ Այսօր որ յառաջ քան զյաւիտեանս , 'ի Հօրէ ա-ռաքեցար . և լուսով իմանալեաւ լցեր զարարածս , օրհնեալ ես Թագաւոր յաւի-տենից ։ Որ զլոյսն 'ի սկզբանէ հաստատեցեր վերստին , և զխաւարն անգիտութեան՝ յարութեամբդ քո հալածեցեր . օրհնեալ ։ Աստի և ես լուսաւորեալս՝ ընդ լուսեղէն զուարթնոցն , երգեցից ցնծութեամբ 'ի հան-գստեան երեկոյիս . օրհնեալ ։ Մտցեն ա-ղօթք իմ Տէր 'ի տաճար սուրբ քո , և ա-ռաքեա 'ի մեզ Տէր զօգնութիւն 'ի լեռնէ սրբոյ քումմէ ։ Հովանասցէ աջ քո Տէր 'ի վերայ ստեղծուածոց քոց , և առաքեա ։ Օ երեկոյի աղօթս իմ ընկալ Տէր , բարեխօ-սութեամբ ծնողի քո , և առաքեա ։

Աղօթք ։

Օրհնեալ Տէր . որ բնակեալդ ես 'ի բար-ձունս , և օրհնեալ են փառք մեծութեան քո . որ հաստատեցեր զլուսաւորս 'ի բար-ձունս , և 'ի յերկնից լոյս ծագեցեր ընդ ամենայն տիեզերս ։ Արարեր զարեգակն լու-սաւոր տուընջեան . զլուսին և զաստեղս լու-սաւոր գիշերոյ , և զլոյս ճրագի ։ Դու ես

լոյս գովելի, սուրբ և առաջին լոյս. և 'ի քէն փախնու խաւարն ։ Օ՜ լոյս քո կենդանի Տէր ծագեա 'ի սիրտս մեր. զի օրհնեալ է անուն սուրբ փառաց քոյ, և քեզ երգեմք զօրհնութիւն և զփառս՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ. այժմ և միշտ ։

Աղօթս ։

Օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց, և օրհնեալ է անուն սուրբ քո յաւիտեան ։ Յաւիտենից մինչև յաւիտեանս դու ես Աստուած, և սուրբ է անունն քո ։ Աստուած իմ ես դու, խոստովան եղէց քեզ. Աստուած իմ ես դու և բարձր առաւել զքեզ ։ Դու ես որ հաներ զիս յարգանդէ. յոյս իմ 'ի ստեանց մօր իմոյ. մի հեռի առներ զօգնութիւն քո յինէն ։ Ցուցեր ինձ զճանապարհս քո կենաց. լցուցեր զիս ուրախութեամբ երեսաց քոց, 'ի քաղցրութենէ վայելչութեան աջոյ քո մինչև իսպառ ։ Փրկեցեր զանձն իմ 'ի մահուանէ, զաչս իմ յարտասուաց, և զոտս իմ 'ի գայթակղութենէ. հաճոյ եղէց առաջի քո յերկրին կենդանեաց ։ Դու Տէր յաւիտեան կաս. և յիշատակ քո յազգէ մինչև յազգ ։ Ամենեքեան որպէս ձորձս մաշեսցին՝ որ-

պէս վերարկուս փոխեսցես զնոսա և փոխեսցին ։ Բայց դու նոյն իսկ ես , և ամք քո ոչ անցանեն ։ և ողորմութիւն քո յաւիտեանս յաւիտենից 'ի վերայ երկիւղածաց քոց ։ և արդարութիւն քո յորդւոց մինչև յորդիս ։ Ամենեքեան քեզ սպասեն ։ տաքես զոգի քո և ստանան զնոսա , և նորոգես զերեսս երկրի ։ Դարձուցանես զերեսս քո 'ի նոցանէ և խռովին ։ Հանես զոգի 'ի նոցանէ պակասին և 'ի հող դառնան ։ Դու ես պաշտպան իմ Տէր , և 'ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ ։ Թէպէտ և գնացից ես 'ի մէջ ստուերաց մահու ոչ երկեայց 'ի չարէ , զի դու Տէր ընդ իս ես ։ Եկեսցէ 'ի վերայ իմ ողորմութիւն քո Տէր , և փրկութիւն քո ըստ բանի քում ։ Կեցցէ անձն իմ և օրհնեսցէ զքեզ , զի դու փրկեցեր զիս ։ Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ ։ այժմ և միշտ և յաւիտեանս ։ ամէն ։

Օրհներգ ։

Լոյս զուարթ՝ սուրբ փառաց , անմահի Հօր երկնաւորի՝ սրբոյ կենարարի , Յիսուս Քրիստոս ։ Եկեալքս 'ի մտանել արեգական տեսաք զլոյս երեկոյին ։ Օրհնեմք զՀայր և զՈրդին և զսուրբ Հոգին Աստու-

ծոյ ։ Արժանաւորեա՛ զիս յամենայն ժամ օրհնել զանուն փառաց ամենասուրբ Երրորդութեանդ , որ տաս զկենդանութիւն . վասն որոյ և աշխարհս զքեզ փառաւորէ ։

Գոհութիւն ։

Հասեալ 'ի ժամ երեկոյիս՝ համբառնալով զձեռս փառաւորեմ զքեզ Տէր Աստուած իմ, որ շնորհեցեր ինձ զօրս խաղաղութեամբ անցուցանել և հասանել 'ի ժամ երեկոյիս ։ Արժանաւորեա՛ զիս Տէր սուրբ սրտիւ և մաքուր խորհրդով՝ գոհաբանութիւն մատուցանել Տեառն Աստուծոյ ամենակալին ։ Ողորմեա՛ ինձ Տէր Աստուած ըստ մեծի ողորմութեան քում, և կեցո՛ զիս ընդ արարածոց քոց 'ի փառս անուան քում ,

Աղթանք ։

Լո՛ւր ձայնի խնդրում Տէր Աստուած . ընկա՛լ զաղաչանս իմ, զհամբարձումն ձեռաց իմոց . և զբանս աղօթից . սրբեալ զերեկոյի պատարագս 'ի հոտ անուշից . 'ի հաճոյս քեզ պատրաստեալ ։ Յաւե՛լ յիս Տէր ամենակալ , զհաւատ՝ զյոյս՝ զսէր և զամենայն գործս առաքինութեան . որպէս զի

ըստ կամաց քոց բարեսիրաց՝ միշտ կրօ-նաւորեալ բարեպաշտութեամբ, 'ի տուէ և 'ի գիշերի՝ արժանաւոր եղէց յաղագս անձին իմոյ փրկութեան, և վասն հոգւոր կենացս՝ աղաչել զքեզ Տէր. և գտանել 'ի քէն զշնորհս և զողորմութիւն. և զոհանալով փառաւորել զհայր և զՈրդի և զսուրբ Հոգին. այժմ և միշտ.

Աղօթք.

Գոհանամ զքէն Տէր Աստուած, որ ողորմութեամբ քով առաջնորդեցեր զիս 'ի գործս տունջեան, և շնորհեցեր ինձ գալ հասանել 'ի հանգիստ գիշերիս. պահելով 'ի փորձանաց և 'ի վտանգից. Իսկ այժմ համբառնալով զձեռս իմ 'ի սրբութիւն, խոստովան լինիմ ծածկագիտին Աստուծոյ զգաղտնիս սրտի իմոյ, զոր ինչ մեղայ այսօր խորհրդով՝ բանիւ կամ գործով. զղջանալով զայնցանէ՝ և յուսալով յողորմութիւն քո. Իսկ աղաչեմ զքեզ մարդասէր Տէր, լեր պահապան անձին իմոյ՝ ըստ բազում գթութեան քում, և առաջնորդեալ հասուսցես զիս 'ի հանգիստ բարութեան քո, 'ի փառաբանութիւն ամենասուրբ Երրորդութեանդ, յաւիտեանս յաւիտենից. Ամէն.

Աղօթք ·

Փառք քեզ Տէր Աստուած, որ պարգևեցեր ինձ զօրս զայս բարեաւ և խաղաղութեամբ անցուցանել · շնորհելով զամենայն պիտոյս անձին իմոյ · Տուր ինձ Տէր զառաջիկայ գիշերս անխռով և զուարթութեամբ անցուցանել և առանց մեղաց, փրկելով 'ի չարեաց և յամենայն վտանգից հոգւոյ և մարմնոյ · և պահեալ 'ի խաղաղութեան հասուսցես զիս 'ի լոյս վաղորդեան, 'ի փառաբանութիւն անուանդ քում սրբոյ ·

Հայցուած ·

Շնորհատու բարեաց՝ յամենայնի առատ և անմահ Տէր · աղաչեմ զքեզ փարատեա յանձինէ իմմէ զաղջամղջին և զխաւարային խորհուրդս · 'ի պատրանաց բանսարկուին պահեա զիս · և շնորհեա հաւատով ապաւինել յամենասուրբ Երրորդութիւնդ, 'ի Հայր և Որդի և 'ի սուրբ Հոգիդ, այժմ և միշտ և ·

Աղօթք ·

Քեզ երկիր պագանելով Տէր իմ Յիսուս Քրիստոս, գոհանամ զքէն յաղագս խաղաղութեամբ անցուցանելոյ յինէն զտկարութիւն տունջեանս, Տուր ինձ Տէր՝

աղաչեմ զքեզ, զերեկս և զառաջիկայ գի-
շերս առանց մեղաց և առանց գայթակ-
ղութեան անցուցանել. Հաստատուն կալ
և մնալ 'ի հաւատ, 'ի յոյս, 'ի սէր և 'ի
պատուիրանապահութեան քում, խնդրելով
զխաղաղութիւն ամենայն աշխարհի, և եկե-
ղեցւոյ քում սրբոյ զհաստատութիւն, և
անձին իմոյ զփրկութիւն. որպէս և ընդու-
նելով 'ի քէն զհայցուածս իմ. զմեծվայ-
ելչական փառաբանութիւն միշտ 'ի բար-
ձունս առաքեմ, ամենազօր Տէրութեանդ
Քրիստոս Աստուած մեր. այժմ և միշտ և։

Օրհներգ.

Սուրբ Աստուած Սուրբ և հզօր, Սուրբ
և անմահ, որ խաչեցար վասն մեր. ողորմեա
ինձ, և ամենայն արարածոց քոց։

Որ 'ի Հօրէ լուսոյ՝ լոյս ծագեցար մեզ և
կեանք, միածին Որդի Հօր համագոյակից
ողորմեա։

Որ անսկիզբն յէութեան՝ եկիր յաշխարհ,
մարմնացար 'ի Կուսէն յաղագս մերոց պար-
տեաց. ողորմեա։

Որ 'ի վերայ ես քան զմիտս և զխորհուրդս
խաչի համբերելեալ փրկեցեր զմեզ.
ողորմեա։

Որ դարձուցեր զմաքսաւորն 'ի գիտութիւն ճշմարտութեան, դարձո՛ և զիս զմոլորեալս. և ողորմեա՛,

Որ գթացար 'ի կին քանանացի, գթա՛ և յիս 'ի մեղաւորս, և թո՛ղ ինձ զյանցանս. և ողորմեա՛,

Որ յարութիւնդ ես տիեզերաց` Որդի՛դ միածին, մի՛ անտես առներ զիս, այլ թո՛ղ զմեղս իմ. և ողորմեա՛,

Աղօթք.

Յոյս կենաց, ընդունող աղօթից, քաւիչ մեղաց, և կատարիչ խնդրուածոց. Քրիստոս Աստուած իմ. ընկա՛լ զպաղատանս իմ 'ի ժամ երեկոյիս` բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին և աղաչանօք ամենայն սրբոց քոց. Լո՛ւր ինձ Տէր և ողորմեա՛, ներեա՛ քաւեա՛ և թո՛ղ զմեղս իմ. արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զքեզ` ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյդ. այժմ և.

Սաղմոս խրատական.

Մե՛րձ է Տէր առ ամենեսեան որք կարդան առ նա ճշմարտութեամբ. զկամս երկիւղածաց իւրոց առնէ, աղօթից նոցա լսէ և կեցուցանէ զնոսա. Պահէ Տէր զամենեսեան որք սիրեն զնա, և զամենայն մեղա-

ւորս սատակէ Տէր ։ Ապաքէն որպէս 'ի պատկերի չըքի մարդ և 'ի զուր խռովի . գանձէ և ոչ գիտէ ո՞ւմ ժողովէ ։ Ո՞վ է մարդ՝ որ կեցցէ և ոչ տեսցէ զմահ . սպառին որպէս ծուխ աւուրք նորա , և ոսկերք նորա որպէս խռիւ չորանան և ցրուին ։ Զի մարդոյ որպէս խոտոյ են աւուրք նորա , և որպէս ծաղիկ վայրի այնպէս ծաղկէ . շնչէ 'ի նմա հողմ և ոչ է , և ոչ ևս երևի տեղի նորա ։ Ընդ առաւօտս որպէս դալարի բուսցի , ընդ առաւօտս որպէս դալարի զուարճասցի և ծաղկեսցի . ընդ երեկոյս թարշամեսցի՝ չորասցի և անկցի ։ Արդարք ժառանգեսցեն զերկիր , և բնակեսցեն յաւիտեանս յաւիտենից 'ի նմա . որպէս զարմաւենիս ծաղկեսցին , որպէս զմայրս լիբանանու բազումք եղիցին՝ տնկեալք 'ի տան Տեառն , և 'ի գաւիթս Աստուծոյ ծաղկեսցին ։ Աչք Տեառն 'ի վերայ արդարոց , և ականջք նորա 'ի վերայ աղօթից նոցա ։ Բանակ հրեշտակաց Տեառն շուրջ է զերկիւղածովք իւրովք , և պահէ զնոսա ։ Ողորմութիւն Տեառն յաւիտեանս յաւիտենից 'ի վերայ երկիւղածաց իւրոց և արդարութիւն նորա յորդւոց մինչև յորդիս ։ Բարի

առնէ Տէր բարեաց, և այնոցիկ ոյք ուղիղ են սրտիւք.

Երանեալ են անբիծք ՚ի ճանապարհի, և ոյք գնան յօրէնս Տեառն. Երանի այն որ երկնչի ՚ի Տեառնէ, և գնայ ՚ի ճանապարհս նորա. Հաստատէ Տէր զարդարս, և ճանաչէ զաւուրս անբծից. Ժառանգութիւն նոցա յաւիտեան եղիցի. Սկիզբն զգօնութեան երկիւղ Տեառն. իմաստութիւն բարի ամենեցուն՝ որ առնեն զնա. և օրհնութիւն նորա մնայ յաւիտեանս յաւիտենից.

Աղօթք.

Տէր Աստուած իմ, դու պահեա զիս խաղաղութեամբ ՚ի գիշերիս յայսմիկ. և յամենայն ժամանակի. Ընդ սուրբ երկիւղ քո բնակեալ պահեա զմիտս՝ զխորհուրդս և զկամս իմ. որպէս զի յամենայն ժամ.քև պահպանեալ եղէց յորոգայթից թշնամւոյն. և քեզ մատուցից զօրհնութիւն և զփառս՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն.

Աղօթք.

«Մուծեա՛ց Տէր բարերար ողորմութեամբ քով՝ ՚ի յերկրպագութիւն տաճարիս քո.

և խաղաղացո՛ զանձն իմ յամենայն սատա-
նայական խռովութեանց և յաշխարհական
զբօսանաց ։ Ո՛ Հրեշտակ խաղաղութեան քո
առաքեա՛ առ իս, որ եկեալ պահեսցէ զիս
անխռով՝ 'ի տուէ և 'ի գիշերի · յարթնու-
թեան և 'ի Հանգստեան իմում, որպէս զի
բարեպաշտութեամբ և արժանաւորապէս
քեզ Տեառնդ ծառայելով 'ի կեանս յայսմիկ,
ժամանեցայց յաւիտենական երկնից արքայ-
ութեան քո, զոր պատրաստեցեր 'ի
սկզբանէ աշխարհի սրբոց քոց ։ Եւ ընդ-
նմին գոհանալով փառաւորել զՀայր և
զՈրդի և զսուրբ Հոգին · այժմ և միշտ
և յաւիտեանս · ամէ՛ն ։

Հայցուած ։

Հրեշտակի խաղաղութեան յանձն ա-
ռու զանձն իմ Տէր զօրութեանց, որ ե-
կեալ պահեսցէ զիս անխռով 'ի տուէ և 'ի
գիշերի, յարթնութեան և 'ի Հանգստեան
իմում · ամբողջ պահելով զՀոգի և զմարմին
իմ՝ մինչև 'ի կատարումն ժամանակի կենաց
իմոց ։ Եւ այժմ աղաչեմ զքեզ Տէր Աստու-
ած իմ, զՀանգիստ գիշերիս շնորհեա՛ խա-
ղաղութեամբ անցուցանել · և Հասանիլ 'ի
պաշտօն առաւօտու՝ յերկրպագութիւն և

'ի փառաբանութիւն ամենասուրբ Երրորդութեանդ , զի դու ես արարիչ լուսոյ և հաստիչ գիշերի . և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ . այժմ և միշտ և յաւիտեանս . ամէն ։

Աղօթս ։

Խոնարհեցո՛ Տէր զունկն քո և լո՛ւր ինձ , զի աղքատ և տնանկ եմ ես ։ Լո՛ւր ինձ Տէր զի քաղցր և մեծ է ողորմութիւն քո . ըստ բազում գթութեան քո հայեա՛ յիս , և մի՛ դարձուցաներ զերեսս քո 'ի ծառայէ քումմէ , զի նեղեալ եմ ես ։ Աղքատ և ցաւած եմ ես , հայեա՛ յանձն իմ և փրկեա՛ զիս ։ Զի դու գիտես զնախատինս իմ , զամօթ իմ , և զպատկառանս իմ . դու ծանեար զանզգամութիւն իմ , և յանցանք իմ 'ի քէն ոչ ծածկեցան ։ Զանգործս իմ տեսին աչք քո , և 'ի գիրս քո գրեցան ամենեքեան . խաւարն 'ի քէն ոչ խաւարեսցի , և գիշերն որպէս տիւ լուսաւոր եղիցի ։ Անօրէնութիւնք իմ բարձրացան քան զգլուխ իմ . որպէս բեռն ծանր՝ ծանրացան 'ի վերայ իմ ։ Ոչ է խաղաղութիւն ոսկերաց իմոց յերեսաց մեղաց իմոց . հարաւ որպէս խոտ և ցամաքեաց սիրտ իմ .

կցեցաւ ոսկր իմ 'ի մարմին իմ ։ Զկականե-ցան 'ի ցաւոց կերանք իմ, և ամք իմ յոգ-ւոց ելանելոյ ։ Աղքատացաւ 'ի տկարու-թենէ զօրութիւն իմ. և ոսկերք իմ խռո-վեցան ։ Աւուրք իմ որպէս հովանի անցին. և ես որպէս խոտ ցամաքեցայ ։ Թ՛է զա-նօրէնութիւնս քննես Տէր Տէր ո՞ կարէ կալ առաջի քո. այլ 'ի քէն է քաւու-թիւն և ողորմութիւն բազում ։ Զ անօ-րէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ ։ Քեզ միայն մեղայ Տէր և չար առաջի քո արարի ։ Մ՛եղայ Տէր մեղայ . և զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ ։ Աղաչեմ և խնդրեմ 'ի քէն թո՛ղ ինձ Տէր . թո՛ղ ինձ և մի կո-րուսաներ զիս ընդ անօրէնութեան իմոյ ։ Դարձո՛ զերեսս քո 'ի մեղաց իմոց, և զամե-նայն անօրէնութիւնս իմ քաւեա՛ յինէն ։ Տէր մի սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս, և մի բարկութեամբ քով խրատեր զիս ։ Մ՛ի յաւիտեան բարկանար ինձ Տէր, և մի յիշեր զչարիս իմ. այլ յիս ցո՛յց ըզ-քաղցրութիւնս քո՝ որ անարժան եմ ։ Ի ա՛ւր ինձ գթութեամբ քով, և մի մատ-ներ 'ի դատաստան ընդ ծառայի քում, զի

ոչ արդարանայ առաջի քո ամենայն կենդա-
նի ։ Լսելի արա՛ ինձ զխնդութիւն և զու-
րախութիւն , և ցնծասցեն ոսկերք իմ տա-
ռապեալք ։ Թո՛յլ արա՛ ինձ զի հանգեայց
մինչ չև երթեալ իցեմ աստի ո՛չ ևս գը-
տանիցեմ ։ Ողորմութիւն քո Տէր զհետ իմ
եկեսցէ զամենայն աւուրս կենաց իմոց ,
բնակել ինձ 'ի տան Տեառն ընդ երկայն
աւուրս ։ Անձն իմ 'ի ձեռս քո յամենայն
ժամ ․ քո եմ ես և կեցո՛ զիս ։ Չափով
եղեր զաւուրս իմ , և կար զօրութեան
իմոյ ոչ ինչ է , և ամենևին ընդունայն է
ամենայն մարդ մահեղի ։ Մինչև յալևորել
և 'ի ծերանալ Աստուած իմ մի՛ թողուր զիս ․
այլ պահեա՛ զիս և օգնեա՛ ինձ ։ Մի՛ ըն-
կենուր զիս Տէր 'ի ժամանակս ծերութեան ․
'ի պակասել զօրութեան իմոյ մի՛ թողուր
զիս ։ Լեր իմ Աստուած ապաւէն , և տեղի
ամուր կեցուցանել զիս ․ զի հաստատու-
թիւն իմ և ապաւէն իմ դու ես ։ Պահեա՛
զիս Աստուած՝ ըստ ողորմութեան քում ,
և կեցո՛ զիս 'ի գթութեան քում ։ Ողոր-
մեա՛ ինձ զի հիւանդ եմ ես , և բժշկեա՛
զանձն իմ զի խռովեցան ոսկերք իմ ։ Լո՛յս
տուր Տէր աչաց իմոց՝ զի մի՛ երբէք ննջե-

ցից 'ի մահ. զի ո՛չ ոք է որ 'ի մահու յիշէ
զքեզ, կամ 'ի դժոխս խոստովան առնի առ
քեզ: Մ՛երձեցաւ անձն իմ 'ի հող, Տէր
կեցո՛ զիս ըստ բանի քում: Պահեա՛ զանձն
իմ սուրբ Տէր, և փրկեա՛ զծառայս քո
Աստուա՛ծ իմ՝ որ 'ի քեզ յուսացայ: Ողոր-
մեա՛ ինձ Տէր զի առ քեզ աղաղակեցի զօր-
հանապազ. ուրա՛խ արա՛ զանձն ծառայի
քո. զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:
Զի դու Տէր քաղցր և ուղիղ ես. բազում-
ողորմ առ ամենեսեան՝ որք կարդան առ
քեզ: Ունկնդիր Տէր աղօթից իմոց. և
նայեա՛ 'ի ձայն խնդրուածոց իմոց: Ա-
ռաքեա՛ Տէր զլոյս քո և զճշմարտութիւն
քո, զի առաջնորդեսցեն ինձ և հանիցեն
զիս 'ի լեառն սուրբ և 'ի յարկս քո: Երևե-
ցո՛ զերեսս քո 'ի ծառայս քո, և ուսո՛ ինձ
զարդարութիւնս քո: Եղիցի ձեռն քո 'ի
կեցուցանել զիս, և բանիւ քո փրկեա՛ զիս:
Օգնեա՛ ինձ և ապրեցո՛ զիս, և ըստ բանի
քում խնամոցն արա՛ զիս: Ապրեցո՛ զիս
Տէր՝ ի մարդոյ չարէ, յառնէ անիրաւէ փր-
կեա՛ զիս: Մ՛ի մատներ զիս Տէր 'ի ցան-
կութիւն մեղաւորաց, ոյք խորհեցան վասն
իմ ընդ վայր հարկանել զիս: Պահեա՛ զիս

յորդայլթէ որ թագուցաւ ինձ, 'ի գայ-թակղութենէ գործողին զանօրէնութիւն ։ Պահեա զիս որպէս բիբ ական. ընդ հովա-'նեաւ թեւոց քոց ծածկեսցես զիս յերեսաց ամբարշտաց՝ ոյք տառապեցուցին զիս ։ Արի Տէր ժամանեա 'նոցա և խափանեա զնո-սա. փրկեա զանձն իմ յամբարշտաց, 'ի սրոյ և 'ի ձեռաց թշնամւոյն ։ Յազգէ՝ որ ոչ է սուրբ, 'ի մարդոյ մեղաւորէ 'նենգաւորէ փրկեա զիս ։ Խաղաղութեամբ յայս և 'ի սոյն 'ննջեցից և զարթեայց, զի դու Տէր միայն՝ առանձին յուսով քո բնակեցուցեր զիս ։ Կեցուսցես զիս ըստ բազում ողորմու-թեան քում. և օրհնեցից զքեզ զամենայն աւուրս կենաց իմոց ։ Փառք Հօր և Որ-դւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և յաւի-տեանս. ամէն ։

Երգ Մաղթողական ։

Հայր բարեգութ՝ որ գթացար յազգս մարդկան, առաքեցեր զմիածինդ 'ի փրկու-թիւն. կարող յամենայնի և հզօր. ողորմեա ինձ Տէր բարերար ։

Մ՛ի յիշեր զմեղս իմ և զյանցանս՝ որ բազում են յոյժ. այլ շնորհեա զթողու-թիւն. և ողորմեա ։

Ծագեա՛ 'ի հոգի իմ խաւարին՝ զլոյս շնորհաց քո բանի. և ուղղեա՛ զիմ կամս խոտին. և ողորմեա՛:

Արարիչ Աստուած և ստեղծիչ մարդկան, մի՛ անտես առներ զծառայս, այլ շնորհեա՛ զքաւութիւն. և ողորմեա՛:

Հայր սուրբ և գթած, խոստովանիմ որպէս զանառակ որդին. թո՛ղ ինձ զմեղս իմ. և ողորմեա՛:

Որդի միածին և փրկիչ մեր Քրիստոս, որ բարձեր զմեղս աշխարհի քո խաչելութեամբ. ողորմեա՛:

Հոգի ճշմարիտ պահպանիչ արարածոց, պահեա՛ զիմ հոգի՝ քո անհուն շնորհօք. և ողորմեա՛:

Աղօթք:

Հայր գթած, բարեխնամող արարիչ ամենայն արարածոց. ընկա՛լ զաղաչանս իմ 'ի ժամ երեկոյիս՝ որ առատ ես առ ամենեսեան պարգևօք բարերարութեան քո: Ողորմեա՛ Տէր ամենայն աշխարհի և եկեղեցւոյ քում սրբոյ. ողորմեա՛ ազգիս Հայոց, իմայնոցս ամենեցուն՝ և ինձ մեղաւորիս, ըստ առատ գթութեան քում: Ողորմեա՛ հիւանդաց, շատցելոց, ճանապարհորդաց,

նաւորդաց, խոստովանողաց, ապաշխարո-ղաց, և ամենայն Հոգւոց Հանգուցելոց ։ Ո՛վ դու Տէր ամենակալ՝ գիտես զպէտս մեր և զկարիս, տուեալ քան զոր իմանամք և խնդրեմք. և մատակարարես մեզ զբա-րիս քո՝ ըստ ողորմութեան և գթութեան քում. և քեզ՝ ընդ Որդւոյ և ամենասրբոյ Հոգւոյդ, վայելէ փառք՝ իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ. և ։

Աղօթք ։

Տէր բարերար, որ մեծաւ գթութեամբ քով պատրաստեցեր զյաւիտենական հա-գիստն՝ առաքինութեամբ աշխատելոցն. և կոչեցեր առ քեզ՝ քաղցր ձայնիւ, զծանրաբեռնեալսն և զաշխատեալսն մե-ղօք, Հանգիստ նոցա խոստանալով ։ Ողոր-մեա՛ և ինձ Տէր, անխռով խաղաղութեամբ զգիշերս զայս անցուցանել. և 'ի ծանրու-թենէ մեղաց՝ զաշխատեալս ապահովեա՛ ողորմութեամբ քով. և արժանաւորեա՛ մշտնջենաւոր Հանգստեանն՝ ընդ ամենայն սուրբս քո. զի գոհանալով փառաւորեցից զքեզ ընդ Հօր և ամենասուրբ Հոգւոյդ. այժմ և միշտ ։

Աղօթք ։

Պարգևատու բարեաց և աղբիւր խաղաղութեան՝ Հոգիդ սուրբ Աստուած ճշմարիտ . յամենայն սատանայական խռովութեանց խաղաղացո զմիտս իմ և զխորհուրդս , 'ի գիշերիս յայսմիկ և յամենայն ժամանակի ։ Որպէս զի առաջնորդեալ յանցաւոր կենցաղոյս շնորհօք քով՝ ժամանեցից յաւիտենական երկնից արքայութեան քո , զոր պատրաստեցեր 'ի սկզբանէ աշխարհի վասն որդւոց քոց . և ընդ նոսին գոհանալով փառաւորեցից զքեզ՝ ընդ Հօր և Որդւոյդ միածնի . յաւիտեանս յաւիտենից . ամէն ։

Աղօթք վասն ամենայն հաւատացելոց ։

Բարերար և բազումողորմ Աստուած , քո անճառ գթութեամբդ և անբաւ մարդասիրութեամբդ՝ յիշեա զամենայն հաւատացեալս 'ի քեզ , և ողորմեա ամենեցուն . օգնեա և փրկեա յիւրաքանչիւր վտանգից և 'ի փորձութեանց . և շնորհեա զպէտս կարեաց ամենեցուն , և արժանաւորեա զամենեսեան գոհութեամբ փառաւորել զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգիդ . այժմ և միշտ և յաւիտեանս . ամէն ։

Օրհներգ Մաղթողական ։

Յանսկզբնական ծոցոյ Հօր խոնարհեցար Բանդ մարմնացար 'ի Կուսէն, վասն փրկութեան մերոյ. աղաչեմ զքեզ յիշեա՛ զիս, և կեցո՛ քո անբաւ շնորհօք ։

Անոխակալ քաղցրութեամբ Որդի՛ Աստուծոյ. հաճեցար բառնալ զմեղս աշխարհի՝ քո խաչելութեամբ. աղաչեմ զքեզ բա՛րձ և զմեղս իմ, և կեցո՛ քո անբաւ շնորհօք ։

Կամաւորական մահուամբ քո լուծեր զերկունս մահու. և արժանի արարեր թողութեան յանցանաց, քաւիչ քո արեամբ. աղաչեմ զքեզ ջնջեա՛ զմեղս իմ, և կեցո՛ քո անբաւ շնորհօք ։

Որ փոխանակ մեղաւորաց՝ զմեռանիլ յանձն առեր. իջանելով 'ի դժոխս՝ փրկեցեր 'ի մեղսասէր բանդէն զգերեալսն. աղաչեմ զքեզ փրկեա՛ զիս 'ի դժոխոց, և կեցո՛ քո անբաւ շնորհօք ։

Բարեբանեմ զանչափ քո զմարդասիրութիւնդ, որ երեքօրեայ յարուցեալ՝ ըզկենդանութիւն պարգևեցեր աշխարհի. աղաչեմ զքեզ շնորհեա՛ ինձ զկեանս յաւիտենից, քո անբաւ շնորհօք ։

Աղօթք ։

Փարատեա՛ զցաւս, և բժշկեա՛ զախտս և զհիւանդութիւնս հոգւոյ և մարմնոյ, յինէն և 'ի ժողովրդենէ քումմէ՝ Տէր Աստուած մեր. և շնորհեա՛ զկատարեալ առողջութիւն նշանաւ ամենայաղթ խաչի քո՝ որով բարձեր զանկարութիւն ազգի մարդկան, և դատապարտեցեր զթշնամին կենաց և փրկութեան մերոյ. որ առաքեցար 'ի Հօրէ 'ի բժշկութիւն ազգի մարդկան՝ միածին Որդի Աստուծոյ Տէր մեր և փրկիչ՝ Յիսուս Քրիստոս ։ Դու ես կեանք մեր և փրկութիւն, բարերար և բազումողորմ Աստուած, որ միայն կարող ես թողուլ զմեղս, և մերժել զախտս և զհիւանդութիւնս 'ի մէնջ. որում և յայտնի են պէտք կարեաց մերոց՝ պարգևիչդ բարեաց, պարգևեա՛ զառատ ողորմութիւն քո 'ի վերայ ամենայն արարածոց քոց, և անարժան ծառայիս, ըստ իւրաքանչիւր պիտոյից. որով և հանապազ փառաւորեալ գովի ամենասուրբ Երրորդութիւնդ Հօր և Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ. յաւիտեանս յաւիտենից. ամէն ։

Աղօթք ·

Թագաւո՛ր խաղաղութեան, օգնական և փրկիչ անձանց մերոց ՝Քրիստոս Աստուած մեր. պարսպեալ պահեա՛ զմեզ՝ սուրբ և հզօր Խաչիւդ քով, յամենայն վտանգից գիշերիս. և ողորմեա՛ ։

Աղօթք ։

Անձն իմ՚ի ձեռս քո է յամենայն ժամ, և 'ի սուրբ խաչ քո ապաւինիմ Թագաւո՛ր երկնաւոր. և զբազմութիւն սրբոց քոց բարեխօս ունիմ առ քեզ ։ Որ երկայնամիտ ես առ ամենեսեան, մի՛ անտես առներ զապաւինեալս 'ի քեզ, այլ պահեա՛ և պահպանեա՛ ընդ հովանեաւ սուրբ և պատուական խաչի քո 'ի խաղաղութեան, և փրկեա՛ յերևելի և յաներևոյթ թշնամւոյն, և արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյդ. այժմ և միշտ ։

Երգ Մաղթողական ։

Որ Որդիդ ես և բանդ Աստուած, հաւասարակից ընդ Հօր յէութեան, առ քեզ կարդամ մարդասէր, ողորմեա՛ ինձ բազմամեղիս ։

Որ իջեր յերկնից վասն մեր, և զյանցանս Ադամայ մերոյ բնութեամբ բարձեր 'ի

խաչին. բա՛րձ զմեղս իմ Տէր, և ողորմեա՛ ։

Որ լուծեր զիշխանութիւն մահու՝ կամաւորական մահուամբ քո Քրիստոս. ընկա՛լ զմաղթանս իմ, և ողորմեա՛ ։

Որ թագաւորդ ես յաւիտենից Քրիստոս Աստուած, ընկա՛լ զծառայս քո 'ի բարի, և շնորհեա՛ ինձ յաջակողմեան քում դասիլ ։

Յորժամ կարգի աթոռ տէրութեանդ քո, և հաստատի ատեան դատաստանին, խնայեա՛ 'ի ծառայս քո, և շնորհեա՛ ։

Յորժամ հարկանի փող գալստեան քո Տէր, յայնժամ զարհուրեալ դողան արարածք 'ի յահէ քումմէ, շնորհեա՛ ։

Յահարեկ լուսոյ ծագման քո Տէր ցնծան դասք առաքելեաց, 'ի վերայ լուսեղէն ամպոյն, շնորհեա՛ ։

Անոխակալ բազմագո՛ւթ Տէր. մի՛ անտես առներ զմեղուցեալս՝ յահագին աւուրն. այլ շնորհեա՛ ։

Որ ունիս իշխանութիւն մահու և կենացն յաւիտենից. աղաչեմ զքեզ ազատեա՛ զիս 'ի մահուանէ, և շնորհեա՛ ինձ զկեանս յաւիտենից ։

Աղօթք ·

Քրիստոս Որդի Աստուծոյ անոխակալ և բարեգութ · գթա՛ քո արարչական սիրովդ 'ի Հոգիս համօրէն հանգուցեալ ծառայից քոց՝ իմոց և օտարաց · յիշեա՛ զնոսա յաւուր մեծի գալստեան արքայութեան քո · արա՛ զնոսա արժանի ողորմութեան, քաւութեան և թողութեան մեղաց · դասաւորեալ պայծառացո՛ ընդ սուրբս քո յաջակողման դասուն ։ Զի դու ես Տէր և արարիչ ամենեցուն, դատաւոր կենդանեաց և մեռելոց · և քեզ վայելէ փառք՝ իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ ։

Օրհնութիւն ·

Օրհնեալ թագաւորութիւնն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ · այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից · ամէն ։

Աղօթք Տէրունական ·

Հայր մեր որ յերկինս ես · և այլն ։

Ելք ·

Շնորհեա՛ մեզ Տէր 'ի գիշերիս՝ զերկնային զխաղաղութիւն քո · և պահեա՛ զմեզ 'ի պատրանաց թշնամւոյն՝ ամենայաղթ զօրութեամբ սուրբ Խաչի քո · Տէր Աստուած

փրկութեան իմոյ՝ 'ի տուէ կարդայի և գիշերի առաջի քո։ Մտցե՛ն աղօթք իմ առաջի քո Տէր. խոնարհեսցի ունկն քո 'ի խնդրուածս իմ։ Եկեսցէ առ մեզ Տէր պահապան 'ի քէն, և պահեսցէ զմեզ յամենայն ժամ։ Առաքեա՛ 'ի մեզ Տէր զզօրութիւն սուրբ Խաչիդ. որ պահեսցէ զմեզ յամենայն ժամ։ Արժանի արա՛ Տէր, զերեկս զայս խաղաղութեամբ և առանց փորձութեան անցո՛ զմեօք։ Արժանաւորեա՛ Տէր, զգիշերս զայս խաղաղութեամբ և առանց մեղաց պահելով զմեզ։ Ընդ մեզ Տէր Աստուած եղիցի ողորմութիւն քո, և աջ քո հովանի լիցի յամենայն ժամ։ Եւ փա՛ռք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ։

Երգ սրբոյն Ներսեսի Շնորհալւոյն։

Նայեա՛ց սիրով Հայրդ գթա՛ծ 'ի քո ստեղծեալ գործս ձեռաց. և զբանակս Հրեշտակաց՝ տո՛ւր պահապան մեզ տըկարացս. փրկեա՛ զանձինս 'ի փորձանաց՝ 'ի խաւարի շրջող դիւաց. զի 'ի տունջեան և գիշերի՝ տացուք քեզ փառս անլռելի։ Էին անեղ անսկզբան՝ ծընունդ անճառ

որդի և բան․ որ արարեր զտիւ գործոյ՝ և զգիշեր 'ի հանգիստ քնոյ․ տուր 'ի նըն-ջել աչաց մարմնոյ՝ արթուն լինել մեզ ըստ հոգւոյ․ զի ։ Րաբուն հոգւոց բանաւորաց՝ աղբիւր լուսոյ բաշխող շնորհաց․ 'ի փակել դրանց բնութեան մարմնոց՝ լոյս տուր աչաց սրտից մերոց․ 'ի գիշերաց առ քեզ կանխել՝ ընդ հրեղինացն օրհնաբանել․ զի ։ Սուրբդ սրբոց երրորդութիւն՝ զմեզ մաքրեա քեզ բնակութիւն․ շնորհեա ընդ մանկանցն առագաստի՝ հանգչել ընդ քեզ 'ի յանկողնի․ տուր ըղձայցուած բարեկամին՝ զփոխ երից նկանակին․ զի ։ Երևելի լոյս ստեղծեր՝ զտիւ և զգիշեր բաժանեցեր , ծագեա մեզ Տէր 'ի գիշերի՝ զճառագայթս իմանալի , տուր յամենայն ժամանակի՝ զպահպանող աջ քո հովանի․ զի ։ Սէրդ քո հուր արկեալ յերկիր՝ բորբոքեսցի 'ի հոգիս մեր․ զխորհուրդ սրտից մեր մաքրեսցէ՝ զլոյս գիտութեան քո փայլեսցէ․ 'ի քնոյ մահու զմեզ զարթուսցէ՝ զմիտս բոցով քո վառեսցէ , զի ։ 'Ի քեզ նայիմք լոյս անմատոյց՝ 'ի ըզգայական ծածկեալ լուսոյ․ որ վասն մեր եղար 'ի դրի՝ և ննջեցեր 'ի տապանի ․

առ մեզ ՚ննջեա՛ արթուն բնութիւն ՚ հեր-
քեա՛ զչարին ներգործութիւն ՚ ․ զի ։ Ծիդ
լուսոյ անստուերի ՚ պաղատանօք կամք ա-
ռաջի ․ որ փակեալ դրամբք յերկնին ․
երևեցար մետասանին ․ ընդ Թովմայի առ
քեզ գոչեմք ՚ Տէր և Աստուած զքեզ դա-
ւանեմք ․ էջ և առ մեզ յերկրիս ՚ և
տուր զողջոյն քո 'ի հոգիս ։ Բանեալքս
զքեզ Տէր աղաչեմք՝ մեզ ․ յօգնութիւն նայ-
ել հայցեմք ․ պահապանդ Իսրայէլի ՚ ան-
ձանց մերոց լեր հովանի ՚ ․ օթեա՛ առ մեզ
խաղաղարար զի ՚ննջեսցուք անխռովաբար ․
և ընդ առաւօտս կանխեսցուք ՚ օրհնել
զքեզ ընդ Հօր հոգւով ։ Գոչմամբ փողոյն
Գաբրիէլի ՚ որ 'ի վերջնումն գիշերի ․ լսել
արա զմեզ արժանի ՚ և յաջակողմն օղեաց
դասի ․ անշէջ վառեալ զլոյս լապտերաց
ըստ իմաստուն հինգ կուսանաց ․ զի ընդ
փեսայիդ 'ի յառագաստ ՚ հարսունք հոգ-
ւով մտցուք 'ի փառս ։ Հալածեա՛ 'ի մէնջ
Տէր նշանաւ Խաչի քո զընդդիմամարտ
և զաներևոյթ զազանն ․ և մի տար յապա-
կանութիւն զքո ժառանգութիւնս ։ Բարե-
խօսեա՛ վասն մեր Աստուածածին Մարիամ,
որ ծնար զՏէր Աստուած որ հովուէրն զԻս-

բայէլ․ ամենայօր և սքանչելի փառօքն իւրովք ։

Երգ ։

՚Ի քէն հայցեմք Հայր գթութեանց և Աստուած մխիթարութեանց․ ՚ի տխրական գիշերային մրրկեալ ժամուս․ մխիթարեա զմեզ ՚ի տրտմութեանց մերաց․ և շնորհեա զուրախութիւն գործովք արդարութեան․ աղաչանօք սուրբ Աստուածածնին՝ և ամենայն արդարոց ։ Ըստ քաղցրագոյն Աստուածային քո հրամանի կոչման՝ Որդի Աստուծոյ, եկեալ եմք առաջի քո յերեկոյիս աշխատեալք և ծանրաբեռնեալք․ թեթևացո ՚ի ծանրութեանց մերաց զանձինս․ և զօրացո բառնալ կամաւ զքաղցր լուծ քոյ պատուիրանաց․ աղաչանօք ։ Պաղատիմք առ քեզ հոգւով ՚ի հանգստեան հասեալ ժամուս՝ մարդասէր Հոգի Աստուծոյ․ յորժամ նորոգես զերեսս երկրի և վերստին ստանաս զոգիս մարդկան․ նորափետուր զարդարեա զննջեցեալսն մեր՝ զծնեալսն ՚ի քէն սուրբ աւազանէն․ աղա ։ Ո՛վ կենդանարար անարատ ծնողի քո՝ արկանեմք առաջի անոխակալ Տէրութեանդ քո․ յորժամ գաս փառօք Հօր դատել զթշնամին խաչի քոյ

ներեա՛յ անցանաց մերոց՝ բարեխօսութեամբ մօր քո և կուսի. աղաչեմք զքեզ Տէր պահպանեա՛ զմեզ ընդ հովանեաւ Խաչի քո սուրբ։ Հաղորդս արա՛ և զմեզ Տէր՝ ընդ սրբոց քոց առաքելոյն, որք արժանի եղեն տեսանել զքեզ 'ի յարութեան քո, արժանաւորեա՛ Տէր տեսանել զքեզ 'ի միւս անգամ քո գալստեանն. օրհնութիւն առաքոցին 'ի բարձունս։ 'Ի նաւիլ քո յատենի դատաւոր ահեղ, աղաչանօք սուրբ Աստուածածնին՝ յիշեա՛ զննջեցեալսն մեր, յորժամ գայցես անճառ փառօք. քանզի քո են փառք յաւիտեանս. ամէն։

Աղօթք Հասարակաց։

Հաւատով խոստովանիմ, և երկիրպագանեմ քեզ՝ Հօ՛ր և Որդի և սուրբ Հոգի. անեղ և անմահ բնութիւն, արարիչ հրեշտակաց և մարդկան և ամենայն եղելոց. ողորմեա՛ քո արարածոց, և ինձ բազմամեղիս։

Հաւատով խոստովանիմ, և երկիրպագանեմ քեզ՝ անբաժանելի լոյս, միանական սուրբ Երրորդութիւն և մի աստուածութիւն, արարիչ լուսոյ՝ և հալածիչ խաւարի, հալածեա՛ 'ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց և անգի-

տութեան , և լուսաւորեա՛ զմիտս իմ 'ի ժամուս յայսմիկ՝ աղօթել քեզ 'ի հաճոյս , և ընդունիլ 'ի քէն զխնդրուածս իմ . և ։

Հա՛յր երկնաւոր Աստուած ճշմարիտ , որ առաքեցեր զՈրդիդ քո սիրելի 'ի խնդիր մոլորեալ ոչխարին . մեղայ յերկինս և առաջի քո . ընկա՛լ զիս որպէս զանառակ որդին , և զգեցո՛ ինձ զպատմուճանն զառաջին՝ զոր մերկացայ մեղօք . և ողորմեա՛ ։

Որդի՛ Աստուծոյ՝ Աստուա՛ծ ճշմարիտ , որ խոնարհեցար 'ի Հայրական ծոցոյ՝ և առեր մարմին 'ի սրբոյ կուսէն Մարիամայ , վասն մերոյ փրկութեան . խաչեցար՝ թաղեցար և յարեար 'ի մեռելոց . և համբարձար փառօք առ Հայր . մեղայ յերկինս և առաջի քո . յիշեա՛ զիս որպէս զաւազակն յորժամ գաս արքայութեամբ քով . և ։

Հոգի՛ Աստուծոյ՝ Աստուա՛ծ ճշմարիտ , որ իջեր 'ի Յորդանան և 'ի վերնատունն . և լուսաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ աւազանին . մեղայ յերկինս և առաջի քո . մաքրեա՛ զիս վերստին Աստուածային հրով քով՝ որպէս հրեղէն լեզուօք սուրբ զառաքեալսն , և ։

Անեղ բնութիւն , մեղայ քեզ մտօք իմովք՝

Հոգւով և մարմնով իմով. մի՛ յիշեր զմեղս իմ զառաջինս՝ վասն անուանդ քում սրբոյ, և ողորմեա՛։

Տեսո՛ղ ամենայնի, մեղայ քեզ՝ խորհրդով բանիւ և գործով, ջնջեա՛ զձեռագիր յանցանաց իմոց. և գրեա՛ զանուն իմ 'ի դպրութեան կենաց, և ողորմեա՛։

Քննո՛ղ գաղտնեաց, մեղայ քեզ՝ կամայ և ակամայ, գիտութեամբ և անգիտութեամբ. թողութիւն շնորհեա՛ մեղաւորիս. զի 'ի ծննդենէ սուրբ աւազանին մինչև ցայսօր՝ մեղուցեալ եմ առաջի Աստուածութեանդ քո՝ զգայարանօք իմովք և ամենայն անդամօք մարմնոյս, և ողորմեա՛։

Ամենախնամ Տէր՝ դի՛ր պահապան աչաց իմոց զերկիւղ քո սուրբ՝ ոչ ևս հայել յաղտս, և ականջաց իմոց՝ ոչ ախորժել լսել զբանս չարութեան, և բերանոյ իմոյ՝ ոչ խօսիլ զստութիւն, և սրտի իմոյ՝ ոչ խորհիլ զչարութիւն, և ձեռաց իմոց՝ ոչ գործել զանիրաւութիւն, և ոտից իմոց՝ ոչ գնալ 'ի ճանապարհս անօրէնութեան. այլ ուղղեա՛ զշարժումն սոցա լինել միշտ ըստ պատուիրանաց քոց յամենայնի, և ողորմեա՛։

Հո՛ւր կենդանի Քրիստոս՝ զհուր սիրոյ

քո զոր արկեր յերկիր, բորբոքեա՛ յանձն իմ, զի այրեսցէ զախտ հոգւոյ իմոյ, և սրբեսցէ զխիղճ մտաց իմոց. և մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ, և վառեսցէ զլոյս գիտութեան քո ՚ի սրտի իմում, և ողորմեա՛ ։

Իմաստութիւն Հօր Յիսուս, տո՛ւր ինձ իմաստութիւն՝ զբարիս խորհիլ՝ և խօսիլ՝ և գործել առաջի քո յամենայն ժամ. ՚ի չար խորհրդոց՝ ՚ի բանից և ՚ի գործոց փրկեա՛ զիս. և ողորմեա՛ ։

Կամեցո՛ղ բարեաց Տէր կամարար. մի՛ թողուր զիս ՚ի կամս անձի՛ն իմոյ գնալ, այլ առաջնորդեա՛ ինձ լինել միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց, և ողորմեա՛ ։

Արքա՛յ երկնաւոր՝ տո՛ւր ինձ զարքայութիւն քո, զոր խոստացար սիրելեաց քոց. և զօրացո՛ զսիրտ իմ ատել զմեղս, և սիրել զքեզ միայն, և առնել զկամս քո. և ։

Խնամո՛ղ արարածոց, պահեա՛ նշանաւ խաչի քո զհոգի և զմարմին իմ ՚ի պատրանաց մեղաց, ՚ի փորձութեանց դիւաց և ՚ի մարդոց անիրաւաց, և յամենայն վտանգից հոգւոյ և մարմնոյ, և ողորմեա՛ ։

Պահապա՛ն ամենայնի Քրիստոս, աջ քո հովանի լիցի ՚ի վերայ իմ. ՚ի տուէ և ՚ի գի-

չերի · 'ի նստիլ 'ի տան, 'ի գնալ 'ի ճանապարհ, 'ի ննջել և 'ի յառնել, զի մի երբէք սասանեցայց · և ողորմեա՛ ։

Աստուա՛ծ իմ՝ որ բանաս զձեռն քո և լնուս զամենայն արարածս ողորմութեամբ քով, քե՛զ յանձն առնեմ զանձն իմ · դու հոգա՛ և պատրաստեա՛ զպէտս հոգւոյ և մարմնոյ իմոյ՝ յայսմհետէ մինչև յաւիտեան ․ և ։

Դարձուցի՛չ մոլորելոց, դարձո՛ զիս 'ի չար սովորութեանց իմոց 'ի բարի սովորութիւն, և բևեռեա՛ 'ի հոգի իմ զսոսկալի օր մահուն, և զերկիւղ գեհենին, և զսէր արքայութեանն · զի զգուշացայց 'ի մեղաց՝ և գործեցից զարդարութիւն · և ողորմեա՛ ։

Աղբի՛ւր անմահութեան, աղբերացո՛ 'ի սրտէ իմմէ զարտասուս ապաշխարութեան որպէս պոռնկին · զի լուացից զմեղս անձին իմոյ՝ յառաջ քան զելանելն իմ յաշխարհէս · և ողորմեա՛ ։

Պարգևի՛չ ողորմութեան, պարգևեա՛ ինձ ուղղափառ հաւատով և բարի գործով, և սուրբ մարմնոյ և արեան քո հաղորդութեամբն գալ առ քեզ · և ողորմեա՛ ։

Բարերա՛ր Տէր, հրեշտակի բարւոյ յանձն արասցես զիս՝ քաղցրութեամբ աւանդել

զհոգի իմ, և անխռով անցուցանել ընդ չար ոգիսն՝ որք են ՚ի ներքոյ երկնից. և ողորմեա ։

Լոյս ճշմարիտ Քրիստոս, արժանաւորեա՛ զհոգի իմ ուրախութեամբ տեսանել զլոյս փառաց քոց ՚ի կոչման աւուրն, և հանգչել յուսով բարեաց՝ յօթևանս արդարոց՝ մինչև յօր մեծի գալստեան քո. և ։

Դատաւո՛ր արդար. յորժամ գաս փառօք Հօր՝ դատել զկենդանիս և զմեռեալս, մի՛ մտաներ ՚ի դատաստան ընդ ծառայի քում, այլ փրկեա՛ զիս ՚ի յաւիտենական հրոյն, և լսելի արա՛ ինձ զերանաւէտ կոչումն արդարոց՝ յերկնից արքայութիւնդ. և ողորմեա ։

Ամենողորմ Տէր, ողորմեա ամենայն հաւատացելոց ՚ի քեզ, իմոց և օտարաց, ծանօթից և անծանօթից, կենդանեաց և մեռելոց. շնորհեա՛ և թշնամեաց իմոց և ատելեաց զթողութիւն՝ որ առ իս յանցանաց, և դարձո՛ զնոսա ՚ի չարեացն, զոր ունին վասն իմ. զի ողորմութեանդ քում արժանի եղիցին. և ողորմեա ։

Փառաւորեա՛լ Տէր, ընկա՛լ զաղաչանս ծառայիս քո, և կատարեա՛ ՚ի բարի զխնդր-

ուածս իմ՝ բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին, և Յովհաննու Մկրտչին, և սրբոյն Ստեփաննոսի նախավկային, և սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, և սրբոց Առաքելոց՝ Մարգարէից՝ Վարդապետաց՝ Մարտիրոսաց՝ Հայրապետաց՝ Ճգնաւորաց՝ Կուսանաց՝ Միանձանց՝ և ամենայն Սրբոց՝ երկնաւորաց և երկրաւորաց. Եւ քեզ փառք և երկրպագութիւն՝ անբաժանելի սուրբ Երրորդութեանդ՝ յաւիտեանս յաւիտենից. Ամէն.

Աղօթք սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն.

Ընկալ քաղցրութեամբ՝ Տէր Աստուած հզօր, զգառնացողիս զաղաչանս. մատիր զթութեամբ՝ առ պատկառեալս դիմօք. փարատեա՛ ամենապարգև, զամօթական տխրութիւնս. բարձ յինէն՝ ողորմած. զանբերելի ծանրութիւնս. անջրպետեա՛ հնարաւոր. զմահացու կրթութիւնս, օտարեա՛ միշտ յաղթող, զխաբողին հաճութիւնս. բացատրեա՛ վերնային. զմոլելոյն մառախուղ. կնքեա՛ կեցուցիչ՝ զկորուսչին ընթացմունս. ցրուեա՛ ծածկատես՝ զըմբռնողին չար դաւմունս. խորտակեա՛ անքննելի՝ զմարտողին դիմեցմունս.

Տեառնագրեմ քո անուամբդ՝ զլուսանցոյց երդ յարկիս. պարփակեմ քո ձեռամբդ՝ զառաստաղ տաճարիս, գծագրեմ քո արեամբդ՝ զմուտ սեմոց սենեկիս. կերպացո՛ զքո նշանդ՝ 'ի հետս ելից մաղթողիս. ամրացո՛ քո աջովդ՝ զհանգստեանս խշտի, մաքրեսցես 'ի հաղբեց՝ զծածկարան անկողնոյս. պահեսցես քո կամօքդ՝ զտառապեալ անձն հոգւոյս. անխարդախս արտացես՝ զքո շնորհեալ շունչ մարմնոյս. կացուսցես շրջափակ՝ զպար զօրուդ երկնայնոյ. կարգեսցես 'ի դիմի՝ ընդդէմ դիւացն դասու. Տո՛ւր հանգիստ բերկրութեան մահահանգոյնս նիրհման՝ 'ի խորութեան գիշերիս, բարեխօսութեամբ հայցուածոց սրբբուհւոյ Աստուածածնիդ, և ամենայն ընտրելոց. Ամփոփեալ պարուրեմ զպատուհան տեսութեանց զգայարանացս իմաստից՝ անզարհուրելի զետեղմամբ, 'ի ծփական խռովութեանց կենցաղական զբաղմանց, անրջական երազոց, խօլականաց ցնորից, յիշատակաւ քո յուսոյդ՝ անվթանելի պաշտպանեալ. Եւ սթափեալ վերստին 'ի նինջմանէ ծանրութեան՝ ամենազգաստ արթնութեամբ հոգենորոգ զուարթութեամբ 'ի

քեզ արժանացեալ, զայս ձայն մաղթանաց՝ բուրմամբ հաւատոց, քե՛զ՝ ամենօրհնեալ Թագաւո՛ր փառաց անճառելի, փառաբանողաց երկնագումար խմբից երգակցեալ՝ յերկինս առաքել: Ո՛վ դու փառաւորեալ ես յամենայն արարածոց յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Նորին դարձեալ:

Տէ՛ր տէր զթութեանց և Աստուած ողորմութեանց. անուն մեծութեան. ձայն ահաւորութեան. կոչումն սաստկութեան. լուր անհասութեան. բարբառ զօրութեան. հնչումն հիացման. յուսադրութիւն բարեպաշտութեան ամենողորմ քաղցրութեան: Յորմէ երկուցեալ սասանին ամենայն բնութիւնք եղելոց՝ 'ի քո սպառնալեաց ահեղապտուցման. սաւառնին Սերովբէք. ամփոփին Քերովբէք. պարուրին պարք լուսակերպից. երկնչին հիացմամբ բոլոր պետութիւնք վերնոցն. նոյնք ցնծան զօրութեամբ մեծաւ 'ի մինաւակատս բերկրութեան. զարհուրին դևք. ընկրկին չարութեանցն զունդք. պակասին խաւարասիրացն հոգիք. անդնդոց մատնին հրեշտակք օտարին: Ապալին նշանաւ Խաչին՝ յաղ-

ճակատունք դիմամարտին . փակլին 'ի ստորին բանակի՝ քինաւոր Ամաղեկացիքն . անխզելի հանդուցիւք պաշարին խումբք հակառակորդին . արգելլին անզերծ զընդանաւ՝ մահաղինացն կաճառք . պնդին 'ի մետաղս ահեղ հրամանիդ՝ այսականացն գումարք . պապանձին կարկեալ՝ ընդդիմաբանիցն դասակցութիւնք . պարտանդին հիւծմամբ կորստեան՝ աներեւութից ժողովք . անլուծ շղթայիւք նեղին՝ տաքելութիւնք դերաքրիստոսին ։

Ահա կարկառեմ մատամբք ձեռինս՝ ըդտեառնադրութիւն նշանիդ 'ի ժամ գիշերիս , որ ո՛չ մթանաս խաւարաւ անգիտութեան՝ ամենեւի՛ն տեսականութիւն , քա՛ն թէ 'ի լոյս անմատոյց հանդուցեալ բնակես ։ Ընկա՛լ զաղաչողս վտանգաւոր գոհաբան՝ ընդ պահպանութեամբ թեւոց հզօրիդ . փըրկեա՛ 'ի ցնորից՝ եկամուտ պղտորութեանց . սուրբ արա՛ զզգայարան հայելեաց՝ սրտիս նկատմանց . ամրացո՛ փայտիւդ կենաց 'ի տխրական անրջոց . արեամբ քո սրսկեա՛ զշրջարկութիւն կայից . զհետս ելումից՝ կաթուածով կենարար կողիդ գծագրեա՛ . երդոյն պահպանարան՝ քառակերպիդ ձե-

ակերպութիւն եղիցի . հանդէպ տեսութեան աչաց ամբարձման՝ փրկականդ քո կրից խորհուրդ առդիցէ . ընդ բարաւոր յարկիս՝ չարչարանաց քոց գործի հասցէ . զծառայդ օրհնութեան՝ հաւատք յուսոյ իմոյ կախեսցէ : Որդե՛լ Տէր սովաւ զատակիչն հողւոյ . մոյէ անխափան՝ պաշտպանն լուսոյ . և ընդ սաստիկ ծանրութեան ցաւոցս՝ և զբեռն պարտեացս թեթևացո , զոր ՚ի լռարանի մտացս ամփոփման մահճացս անկողնի՝ ուշաբերեալ դ յուսահատութեանցն դառն պտղոցն , խոստովանիմ ամենադեղցանհամար մասունս գործոց չարաչար անօրէնութեանցս :

Համդո՛ զվստահեալս ՚ի բազմածուփս աշխատութենէ . բա՛րձ զտաղնապ տարակուսանաց ոդւոյս կործանման , զդառնութիւնն ընդ վշտացն . զհեծութիւնն ընդ կարեացն . զանձկութիւնն ընդ թշուառութեանցն . զհառաչմունսն ընդ խորտակմանցն . զբեկութիւնսն ընդ ապշութեանցն . զթմբրութիւնն . ընդ շրտամանցն . զարբեցութիւնն ընդ յիմարութեանցն . զթերամտութիւնն ընդ խելագարութեանցն , զատուածսիրոյն և զհրայլին ջերմութիւն աղուական

ախտին ։ Օժանդակ լե՛ր տկարութեան բազմատխուրս տարտամութեան , բարեգործ աջոյդ շնորհի ․ ձեռամբդ նորոգողի ․ մատամբդ կենսաբաշխի ․ փառօքդ մշտափայլի ․ յարակայութեամբդ անեղծի ․ երեսօքդ զուարթականի ․ խնկութեամբ էիդ պաշտելի ․ բարձրութեամբդ երկրպագելի ։ Հասո՛ ըղ-չարաչար հեծութիւն կորստականս խեղդմանս ․ զնոր գիւտ չարին ․ զհին խարդախութիւն բանսարկուին ․ զօտար ազդեցմունս ՝ 'ի մահ կրթողին ․ զանյարմարական երեւոյթս՝ հանապազորդեան եղեռնագործին ․ զառ աջս հնարադրութեանն դժնդակ դեւին ․ զողոքական բոցաշնչութիւն ձգող կախարդին ։ Պահեա՛ 'ի ներքոյ հանգստեան մեծօրինակ այսր դադարման՝ յաներեւոյթ մտածութեանց ․ 'ի մանաւոր սխալութեանց ․ 'ի մեծագոյն գայթակղութեանց ․ 'ի փոքրագոյն ունայնութեանց ․ 'ի խաբեբայ չար ձանձրութեանց ։ Հեռացո՛ զանհանդէպ մտածութիւն՝ 'ի զգայութեանց ծառայից յանցաւորի ․ զկիրս բարկելիս ․ զվարս թշնամանելիս ․ զդիպուածս պատահելիս ․ զհետս վրիպելիս ․ զպատիրս ձայնելիս ․ ըզխորհուրդս անգոնելիս ․ զաւելաբանու-

թիւնս ՚նշկահելիս ։ Ա՛նսխալ հոգւով և ան-
շաղախ մարմնով զապաւինեալս ՚ի քեզ հան-
դերձեա՛, ՚ի շնչմանէ հողմոց, ՚ի զարկմանէ
բռնութեանց, ՚ի բախմանէ փոթորկաց,
՚ի յոսմանէ մրրկաց. ՚ի յարձակմանէ
գազանաց ։ ՚Ի կափման աչացս՝ հայեցու-
ած սրտիս մի՛ ստուերասցի, այլ զուար-
թասցի պայծառասցի վայելչասցի. ընդ քեզ
փայլեսցի՝ Տէր Յիսուս Քրիստոս, լու-
սաւոր վառմամբ անշիջանելեաւ ։ Քանիւ
քո սրբեա՛ զպատսպարանս բազմականիս՝ ՚ի
խորամանկութեանց, ՚ի զբաղմանց, ՚ի քո
աւելի յիշատակաց, ՚ի վերնամարտ մտած-
մանց, ՚ի քրէական մոլորութեանց, ՚ի տխ-
րանենդ անշնորհութեանց, յաստուածընդ-
դէմ հերձուածութեանց ։ Գնդիւք վերնայ-
նոցդ՝ վերակացու ի՛նձ լիցիս, պետու-
թեամբք, իշխանութեամբք, զօրաւորօքն
անյաղթականաց՝ մաքուր մատակարարաց
սուրբ Աստուածութեանդ. առաքեալքն՝
աւետեաց աւետարանաւն. մարգարէքն՝
կատարանօքն. մաղթանօք երջանկացն՝ ՚ի
կատարածի աւուրն ընծայեալ. Որովք նեհ-
րեցից երկիւղիւ ըստ քեզ՝ արամութեամբ.
և զարթեայց շնորհօք քո՝ կրկին ուրախա-

լեւամբ . եթէ վհատութեամբ ննջեցից , յարեայց դարձեալ հոգեւորական բերկրութեամբ . եթէ ընկղմեսցայց մեղանօք, կանգնեսցայց վերստին զատեալ ՚ի խղճէ անաղտ ամբծութեամբ ։

Լուր խնդրուածոց ամենահաւատ ձայնիս հեծութեան՝ միայն բազմագութ , բարեխօսութեամբ սրբոյ Աստուածածնին եւ ամենայն արդարոց եւ նահատակաց ընտրելոց ։ Եւ քեզ փառք յամենեցունց՝ նմին զոյգմամբ վերառաքեսցեալ սրբովք զուարթնոցն անմահականաց դասուց , ՚ի զովեստ Հօր քո Աստուծոյ մերոյ , եւ Հոգւոյդ սրբոյ բնաւից հաստողի եւ նորոգողի , յաւիտեանս յաւիտենից . ամէն ։



# ԳԻՍԳԻՍ ԱՂՕԹՔ

—00000—

## ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԿԵՐԱԿՐՈՑ

Սաղմոս ։

Տէր եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո ։ Օրհնեա՛ անձն իմ զՏէր, և մի մոռանար զամենայն տուրս նորա ։ Ո՟ լնու 'ի բարութենէ զցանկութիւն քո, քաւէ զմեղս քո և բժշկէ զամենայն հիւանդութիւնս քո ։ Ո փրկէ յապականութենէ զկեանս քո · պսակէ զքեզ ողորմութեամբ և գթութեամբ ։ Աչք ամենեցուն 'ի քեզ հային Տէր, և դու տաս կերակուր 'ի ժամու · տաս դու նոցա և կերակրեն · բանաս զձեռն քո և լցուցանես զամենեսեան քաղցրութեամբ կամօք քովք ։ Հաներ զհաց յերկրէ · զինի ուրախ առնէ, իւղ զուարթ և հաց հաստատէ զսիրտ մարդոյ ։ Ելանէ մարդ 'ի գործս իւր և 'ի

վաստակս ձեռաց իւրոց մինչև յերեկոյ ։ Աչք Տեառն 'ի վերայ երկիւղածաց իւրոց · և որք յուսան յողորմութիւն նորա ։ Փրկել 'ի մահուանէ զանձինս նոցա, և կերակրել զնոսա 'ի սովու ։ Քաղցր է Տէր առ ամենեսեան, և գթութիւն նորա 'ի վերայ ամենայն արարածոց իւրոց ։ Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ · զի ամենայն բարիք իմ 'ի քէն են . և նորոգեսցի որպէս արծուոյ մանկութիւն իմ ։

### Օրհնութիւն և Մաղթանք ։

Օրհնեա՛ Տէր Աստուած զկերակուր և զըմպելիս, և շնորհեա՛ ինձ պարկեշտութեամբ վայելել 'ի բարեացս, զոր գթութեամբ քով պարգևեցեր 'ի պէտս կարեաց մարմնոյ ։ Շնորհեա՛ Տէր՝ զի եղիցին բարիքս այսոքիկ՝ 'ի վերանորոգութիւն և յառողջութիւն մարմնոյս · 'ի կազդուրումն զօրութեան և կարողութեանց իմոց . որպէս զի՝ մարթացայց 'ի վաստակս գործոց բարեաց, և 'ի կատարումն պատուիրանաց և հաճոյից քոց կանխել միշտ · և զի արժանացայց հաղորդ դառնիլ անանց և անապակ բարեացդ, և յաւիտենական կենացդ՝ յարքայութեան քում · և գոհութեամբ փառա-

ւորել զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին, այժմ և միշտ

Յետ Կերակրոյն ։

Փառք քեզ Աստուած, փառք քեզ · լցայ 'ի բարութեանց քոց · գոհանամ զքէն Տէր՝ որ հանապազ կերակրես զիս ։

Գոհութիւն և Հայցուածք ,

Գոհանամ զքէն Տէր Աստուած, զի պարգևօք բարութեան քո յագեալ լցուցեր զպէտս մարմնոյս, և զկարիս ցանկութեան սրտիս · զուարճացուցանելով զոգիս, և կազդուրելով զզօրութիւնս անձին իմոյ ։ Աղաչեմ զքեզ Տէր, անսպառ և անհատ արասցես զլիութիւն սեղանոյս՝ յառատ բարեաց քոց, շնորհելով օր ըստ օրէ զամենայն պէտս կարեաց իմոց, բարերարութեամբ և գթութեամբ քով ։ Եւս առաւել լցուսցես զոգիս զուարթութեամբ, և զսիրտս բաւականութեամբ և չափաւորութեամբ, որպէս զի առաքինութեամբ կենցաղավարեալ՝ առաւելայց միշտ 'ի գործս բարութեան, և հաճոյ եղէց առաջի քո · և ընկալայց զշնորհս և զզօրութիւն Հոգւոյդ սրբոյ · և հոգևոր կերակրոյդ հաղորդ գտայց յարքայութեան քում · զի զա

տուս զկենդանութիւն , և քո՛ են փառք՝
և զօրութիւն , յաւիտեանս յաւիտենից .
ամէն ։

—ooooo—

## ԱՂՕԹՔ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԵԱՆ ։

Սաղմոս ։

Աստուած յօգնել ինձ նայեա՛ց . և
Տէր յընկերել ինձ փութա՛ ։ Ցո՛յց ինձ
ճանապարհ յո՛ր և գնացից , զի առ քեզ
Տէր համբարձի զանձն իմ ։ Ողորմութիւն
քո Տէր զհետ իմ եկեսցէ զամենայն աւուրս
կենաց իմոց . և հոգի քո բարի առաջնոր-
դեսցէ ինձ 'ի յերկիր ուղիղ ։ Փրկեա՛ զիս
'ի թշնամեաց իմոց Տէր , զի զքեզ ապաւէն
ինձ արարի ։ Վասն անուան քո Տէր կեցու-
ցես զիս , արդարութեամբ քով հանցես 'ի
նեղութենէ զանձն իմ ։ Թէպէտ և գնացից
ես 'ի մէջ ստուերաց մահու , ո՛չ երկեայց 'ի
չարէ , զի դու Տէր ընդ իս ես ։ Տո՛ւր զօրու-
թիւն ծառայի քո . կեցո՛ զորդի աղախնոյ
քո . և արա՛ առ իս նշան բարութեան ։

Մաղթանք ։

Տէր ուղղեա՛ զգնացս իմ 'ի ճանապարհս
խաղաղութեան և յաջողեա՛ զշաւիղս իմ 'ի

բարի և յանդորրու ։ Առաջնորդեա ինձ գնալ միշտ ՚ի ճանապարհս արդարութեան և յօրէնս քո, ՚ի կեանս յայսմիկ փորձանաց ։

Աղօթք ։

Առաջնորդ կենաց և պարգևիչ խաղաղութեան Յիսուս Աստուած փրկիչ իմ, լեր ընդ իս յամենայն ժամ. և մի թողուր զիս ՚ի ձեռանէ քումմէ ։ Յաջողեալ ուղղեա զգնացս իմ ՚ի բարի և ՚ի խաղաղութեան. փրկեա և զերծո զիս ՚ի փորձանաց, ՚ի վտանգից, ՚ի չար պատահմանց և ՚ի թշնամեաց ։ Պահեա զիս ընդ հովանեաւ հզօր Աջոյ քո, և շնորհեա ինձ խաղաղութեամբ և խնդութեամբ վերստին դառնալ և հասանել ՚ի քաղցր տեղի բնակութեան իմոյ. զի քո է զօրութիւն և փառք յամենայնի՝ յաւիտենից յաւիտեանս. ամէն ։

Գոհութիւն ։

Գոհանամ զքէն Տէր Աստուած իմ, որ ողջամբ հասուցեր զիս ՚ի տեղիս յայս, անվտանգ պահելով յամենայն պատահարաց ։ Աղաչեմ զքեզ Տէր, եղիցի հանապազ ՚ի վերայ իմ Ակն քո ամենատես, և Աջ քո ամենազօր. և ողորմութեամբ քով խնամեա զամենայն պէտս իմ վայելչականս ։ Պահեա

զիս յերկիւղի քում և յօրէնս քո, և ապատեալ զերծ զիս յորոգայթից թշնամեաց և 'ի մարդոց անիրաւաց ։ Շնորհեա ինձ Տէր զզգօնութիւն՝ զզգաստութիւն և զառողջութիւն մտաց և մարմնոյ, զի ըստ հաճոյից քոց կենցաղավարեալ, կատարեցից զպաշտօն իմ և զգործս. և բարեպաշտութեամբ վերադարձայց 'ի զուարճալի տուն իմ, և գոհանալով փառաւորել զքեզ. զի դու ես յոյս իմ և ապաւէն. և քեզ փառք և օրհնութիւն այժմ և յաւիտեանս. ամէն ։

—00000—

ԱՂՕԹՔ Ի ՍԿՍՈՒԱԾ ԳՈՐԾՈՑ ։

Զգործս ձեռաց իմոց բարէ և ուղիղ արա Տէր, և աջողեա օգնութեամբ քով ։ Օրհնեա Տէր զվաստակս իմ բարիս. և արդիւնաւոր արա 'ի լրումն պիտոյից ։ 'Ի քրտանց իմոց փոխարինեա ինձ զպէտս կարեաց իմոց, առատ ողորմութեամբ քով ։ Զուարճալի արա ինձ Տէր զգործս իմ և զպատաղմունս, և շնորհեա զի արդարութեամբ եղիցին հանապազ 'ի փառս քո ։

## ՄԱՂԹԱՆՔ ԱՌ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ·

Մեծացուցէ անձն իմ զՏէր, և ցնծացէ հոգի իմ Աստուծով փրկչաւ իմով ։

Վասն որոյ անարատ մօր քո և կուսի, Տէր ընկալ զաղաչանս մեր և կեցո զմեզ ։

### Մաղթանք առ Աստուածածին ։

Ողջոյն քեզ Մարիամ լի շնորհօք · ուրախ լեր բերկրեալ, Տէր ընդ քեզ ։ Օրհնեալ ես դու 'ի կանայս, և օրհնեալ է պտուղ որովայնի քո Յիսուս ։ Սրբուհի Մարիամ Մայր Աստուծոյ բարեխօսեա վասն մեր մեղաւորացս այժմ և 'ի ժամու մահուան մերոյ · ամէն

Ընկալնիմք ապաւէնի քո սուրբ Աստուածածին և աղաչեմք զանարատ զկոյսդ · բարեխօսեա վասն անձանց մերոց · և աղաչեա զմիածին զորդիդ փրկել զմեզ 'ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոց ։

### Օրհնութիւն Աստուածածնին

Որ զբանն Աստուած բաւական եղեր ծնանիլ միշտ Կոյս Մարիամ օրհնեալ ես դու 'ի կանայս ։

Որ գործարչակիցն Հօր զ՚խոնարհեալն զբանն Աստուած յորովայնի քում կրեցեր. օրհ.

Որ զանշօշափելին էից ՚ի գիրկս քո բարձեալ դիեցուցեր կաթնասուն. օրհնեալ.

Աստուածածին խորան լուսոյ ամփոփարա-փակ արփւոյն կենաց. որ եղեր արեւելք արեգակնն արդարութեան. և նստելոցս ՚ի խաւարի՝ լոյս ծագեցեր. օրհնեալ.

Անկիզբնական Բանին Հօր բնակարան, անարատ տաճար և տաղաւար, տեղի անտանելի լուսոյն՝ սուրբ Կոյս Մարիամ. օրհ.

Անապական տաճար և մորենի անկիզելի. որ զանշէջ Հուր աստուածութեան ՚ի քեզ տարեալ կրեցեր. որով բնութեանս կիզեալ չէջու կրից բոց. օրհնեալ.

Աստուածատունկ խնկաբեր ծառ՝ յանու-նուշահոտ բուրաստանէն. որ ՚ի գնացս հոգւոյն վտակաց անկեցար, և զանմահութեան պտուղն ետուր մեզ. օրհնեալ.

Բարեբանութիւն Աստուածածնի.

Դու ճշմարիտ արեւելք արեգակնն արդարութեան, յորմէ ծագեաց փրկութիւն տիեզերաց. բարեբանեալ և օրհնեալ յաւիտեան.

Դու լուծիչ երկանց, բարձող անիծից. ծագումն արեւու լուսոյն ճշմարտի, որով հերքեաւ խաւարն առաջին. բարեբանեալ:

Քեւ լուծան կնիք դատապարտութեան. եւ քեւ կանգնեցաւ մեղուցեալ Մայրն գլորեալ. բարեբանեալ:

Սիւն լուսոյ եւ ամպ հովանի՝ սուրբ Կոյս, որ ցօղեցեր 'ի մեզ զցօղն երկնային. բարե:

Գերահրաշ ծաղիկ՝ բուրեալ յԵդեմայ հոտ անմահութեան՝ ծննդոց Եւայի, յորմէ սփռեցաւ մահ ընդ տիեզերս. բարե:

Պարտէզ փակեալ աստուածատունկ Եդեմ, որ եւ ծառն կենաց 'ի մէջ դրախտի քո՝ 'ի հողւոյն անկեալ, անմահական պտղոյն ելից զտիեզերս. բարեբանեալ:

Սերոբէ հողեղէն, եւ մարմնաւոր քերոբէ, որ զանտեսն 'ի նոցունց յորովայնի քում կրեցեր. բարեբանեալ:

Հայցուածք Բարեխօսութեան:

Ցնծա Մարիամ, արեգական արդարութեան արեւելք. եւ աղաչեա զոր 'ի քէն զծնեալն Աստուած վասն մեր, զի դարձուսցէ վերստին զմեզ 'ի դրախտին ժառանգութիւն:

Որ անապական ծննդեամբ քո լուծեր զերկունս նախամօրն , Մարիամ մայր Աստուծոյ . բարեխօսեա առ միածին Որդին , լուծանել զկապանս մեղաց մերոց . և աղաչեա փրկել զանձինս մեր 'ի փորձութենէ :

Աղբիւր կենաց բղխեալ յԵդեմայ՝ սուրբ Աստուածածին . որով արբեցաւ երկիր ծարաւուտ Հոգւոյն իմաստիւք . առ մեզ մաղթեա աղբիւրս արտասուաց մաքրել զմեզ 'ի մեղաց :

Որ վառեցար 'ի յարփւոյն , և ոչ կիզար ըստ մորենւոյն . ետուր զհացն կենաց՝ կերակուր բանաւորաց . բարեխօսեա առ Քրիստոս՝ ջնջել զգիր մեղաց մերոց :
Յարփւոյն լուսոյ ծագումն՝ 'ի քեզ վառեաց զճրագ մարմնոյ՝ լոյս աշխարհի . որով գտեալ զպատկերն իւրական , վերստին նորոգեաց յառաջին կերպարան . բարեխօսեա նորոգել զմեզ 'ի հնութենէ մեղաց :
Մարիամ կոյս անարատ , զանապական փեսայդ աղաչեա զի հաշտեսցի ընդ այրի եղեալ հոգիս , և միաւորեսցէ դարձեալ սիրով ընդ հեռացեալն 'ի նմանէ :

Տաճար լուսոյ անստուերին , և առա-

դատ անձառ բանին, որ զնախնւոյ մօրն Եւայի բարձեր զանէծսն տրտմալի. Հայցեմ յՈրդւոյ քո միածնի, Հօր հաշտութեանն միջնորդի, բառնալ 'ի մէնջ զխռովութիւն և տալ զօդւոց զխաղաղութիւն ։

Որ յիմանալի խորանս բարձրացուցեր զքեզ Մա՛յր Աստուծոյ, անձառելի փառօք՝ միածին Որդին. առ նա միշտ բարեխօսեա վասն անձանց մերոց, փրկել յամենայն չարէ, և տալ զկեանս յաւիտենից ։

Աղօթք.

Ընկա՛լ Տէր զաղաչանս իմ բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնի, անարատ ծնողի միածնի Որդւոյ քո. և հայցուածովք ամենայն սրբոց քոց ։ Լո՛ւր ինձ Տէր և ողորմեա՛, ներեա՛ քաւեա՛ և թո՛ղ ըզմեղս իմ. պարգևեա՛ զշնորհս քո. և արժանաւորեա՛ զիս կենացն յաւիտենից. 'ի փառս քո և Որդւոյդ միածնի և Հոգւոյդ սրբոյ. ամէն ։

## ԱՂՕԹՔ ԱՊԱՇԽԱՐԱՆԱՑ

### Ա. Սաղմոս.

Ողորմեա՛ ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան քում. ըստ բազում գթութեան քում քաւեա՛ զանօրէնութիւնս իմ ։ Առա-

ւել լուծ զիս յանօրէնութենէ իմմէ . և 'ի մեղաց իմոց սուրբ արա զիս ։ Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ, և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ ։ Քեզ միայն մեղայ Տէր . և չար առաջի քո արարի ։ Որպէս արդար երեւեսցիս 'ի բանս քո . և յաղթեսցես 'ի դատել քում ։ Անօրէնութեամբ յղացայ , և 'ի մեղս ծնաւ զիս մայր իմ ։ Դու Տէր զճշմարտութիւն սիրեցեր . զանյայտս և զծածկեալս իմաստութեամբ քով յայտնեցեր ինձ ։ Ցօղեա՛ յիս մշտկաւ , և սուրբ եղէց . լուա՛ և քան զձիւն սպիտակ եղէց ։ Լսելի՛ արա՛ ինձ Տէր զցնծութիւն և զուրախութիւն , և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք ։ Դարձո՛ զերեսս քո 'ի մեղաց իմոց . և զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա՛ յինէն ։ Սիրտ սուրբ հաստատեա՛ յիս Աստուած , և հոգի ուղիղ նորոգեա՛ 'ի փորի իմում ։ Մի՛ ընկենուր զիս Տէր յերեսաց քոց . և զհոգի քո սուրբ մի՛ հաներ յինէն ։ Տո՛ւր ինձ ցնծութիւն փրկութեան . և հոգւով պետութեան քո հաստատեա՛ զիս ։ Ուսուցից անօրինաց զճանապարհս քո , և ամպարիշտք առ քեզ դարձցին ։ Փրկեա՛ զիս յարենէ Աստուած Աստուած փրկութեան

իմոյ, ցնծասցէ լեզու իմ յօրդորութեան քում ։ Տէր եթէ շրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո ։ Թէ կամեցեալ էիր, պատարագս մատուցանէաք ․ բայց դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար ։ Պատարագ Աստուծոյ հոգի խոնարհ ․ զսիրտ սուրբ և զհոգի խոնարհ՝ Աստուած ոչ արհամարհէ ։ Բարի արա Տէր կամօք քովք Սիոնի, և շինեսցին պարիսպքն Երուսաղէմի ։ Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութեան, յորժամ ուխտից պատարագս հանցեն 'ի սեղան քո զուարակս ։

Բ․ Սաղմոս ։

Տէր լո՛ւր աղօթից իմոց, ունկն դիր խնդրուածոց իմոց ճշմարտութեամբ քով ․ Լո՛ւր ինձ արդարութեամբ քով ․ և մի՛ մտաներ 'ի դատաստան ընդ ծառայի քում ․ զի ոչ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի ։ Հալածեաց թշնամին զանձն իմ․ խոնարհ արար յերկիր զկեանս իմ ․ Նստոյց զիս 'ի խաւարի՝ որպէս մեռեալ յաւիտենից ։ Ձանձրացաւ յիս հոգի իմ, և սիրտ իմ խռովեցաւ յիս ։ Յիշեցի զաւուրս զառաջինս, խորհեցայ յամենայն գործս քո ․ յարարածս ձեռաց քոց խորհեցայ, և համ-

բարձի առ քեզ զձեռս իմ։ Անձն իմ որպէս երկիր ծարաւի է առ քեզ. վաղվաղակի լո՛ւր ինձ Տէր, զի նուաղեաց յինէն հոգի իմ։ Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն, նմանիցեմ այնոցիկ՝ որ իջանեն ՚ի գուբ։ Լսելի արա՛ ինձ առաւօտու զողորմութիւնս քո, զի ես ՚ի քեզ Տէր յուսացայ։ Ցո՛յց ինձ ճանապարհ՝ յոր գնացից. զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ։ Փրկեա՛ զիս ՚ի թշնամեաց իմոց, զի զքեզ ապաւէն ինձ արարի։ Ուսո՛ ինձ առնել զկամս քո, զի դու ես Աստուած իմ։ Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ յերկիր ուղիղ։ Վասն անուան քո Տէր՝ կեցուսցես զիս, արդարութեամբ քով հանցես ՚ի նեղութենէ զանձըն իմ։

Գ․ Սաղմոս։

Տէր լո՛ւր աղօթից իմոց, աղաղակ իմ առ քեզ եկեսցէ. և մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն։ Սպառեցան որպէս ծուխ աւուրք իմ, և ոսկերք իմ որպէս խռիւ չորացան։ Հարաւ որպէս խոտ և ցամաքեաց սիրտ իմ. մոռացայ ուտել զհաց իմ ՚ի ձայնէ հեծութեան իմոյ։ Կցեցաւ ոսկր իմ ՚ի մարմին իմ. նմանեցայ ես հաւալուսն

անապատի․ եղէ ես որպէս բու յաւերակի․ Տքնեցայ և եղէ ես որպէս ճնճղուկ միայն 'ի տանիս, յերեսաց բարկութեան սրտմտութեան քո․ զի դու բարձրացուցեր զիս և խոնարհեցուցեր զիս ։ Աւուրք իմ որպէս հովանի անցին․ և ես որպէս խոտ ցամաքեցայ ։ Պակասեցան 'ի ցաւոց կեանք իմ․ և ամք իմ յոգւոց ելանելոյ ։ Աղքատացաւ 'ի տկարութենէ՝ զօրութիւն իմ, և ոսկերք իմ խռովեցան ։ Քան զամենայն թշնամիս իմ եղէ ես նախատ դրացեաց իմոց յոյժ․ ահ և երկիւղ ծանօթից իմոց․ և ամենեքեան որք տեսանէին զիս արտաքս փախչէին յինէն ։ Մոռացեալ եղէ ես որպէս մեռեալ 'ի սրտէ․ և եղէ ես որպէս զանօթ կորուսեալ․ և լուայ զբամբասանս բազմաց որ շուրջ էին զինև ։ 'Ի խորոց կարդացի առ քեզ Տէր Տէր լուր ձայնի իմում, և եղիցին ականջք քո 'ի լսել զձայն աղօթից իմոց ։ Թէ զանօրէնութիւնս քննես Տէր Տէր ո՞ կարէ կալ առաջի քո, զի 'ի քէն է քաւութիւն ։ Զի 'ի քէն է ողորմութիւն բազում, և 'ի քէն է փրկութիւն․ և դու փրկես զերկիւղածս քո յամենայն նեղութեանց նոցա ։ Դու ես պաշտպան իմ

Տէր, և ՚ի ձեռս քո յանձն առնեմ զհո-
գի իմ. վարվարեա կեցուցանել զիս: Լեր
իմ Աստուած պաշտպան, և տուն ապաւինի
ապրեցուցանել զիս. զի հզօրիչ իմ և ա-
պաւէն իմ դու ես: Ի քեզ Տէր յուսա-
ցայ, մի՛ ամաչեցից յաւիտեան. յարդարու-
թեան քում փրկեա և ապրեցո զիս. ցի՛ն
ծառայից և ուրախ եղէց ՚ի փրկութեան
քում: Փրկեա զիս ՚ի ձեռաց թշնամեաց
իմոց, և ՚ի հալածչաց իմոց: Երևեցո զե-
րեսս քո ՚ի ծառայս քո. ապրեցո զիս Տէր
ըստ ողորմութեան քում. Տէր մի՛ յամօթ
եղէց. զի կարդացի առ քեզ:

Գ. Սաղմոս:

Տէր մի՛ սրտմտութեամբ քով յանդի-
մաներ զիս, և մի՛ բարկութեամբ քով խրա-
տեր զիս: Զի նետք հարան յիս, և յիս
հաստատեցաւ ձեռն քո. ո՛չ գոյ բժշկու-
թիւն մարմնոյ իմոյ՝ յերեսաց բարկութեան
քո. և ո՛չ է խաղաղութիւն ոսկերաց իմոց
յերեսաց մեղաց իմոց: Անօրէնութիւնք իմ
բարձրացան քան զգլուխ իմ. որպէս բեռն
ծանր ծանրացան ՚ի վերայ իմ: Նեխեցան
և փտեցան վէրք իմ՝ յերեսաց անզգամու-
թեան իմոյ. տառապեցայ և խոնարհ եղէ

յոյժ . զօրհանապազ տրտում գնայի , զի անձն իմ լի՛ եղև չարչարանօք . և ո՛չ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ : Չարչարեցայ և խոնարհ եղէ յոյժ , մռնչէի առ հեծութեան սրտի իմոյ . սիրտ իմ խռովեցաւ յիս , և եթող զիս զօրութիւն իմ . և լոյս աչաց իմոց խաւարեցաւ : Եղէ ես որպէս մարդ որ ո՛չ լսէ և ո՛չ գոյ խօսք 'ի բերան նորա . որպէս խուլ որ ո՛չ լսէ , և որպէս համր որ ո՛չ բանայ զբերան իւր : Զանօրէնութիւնս իմ պատմեցից , և հոգացայց վասն մեղաց իմոց . զի ես 'ի քեզ Տէր յուսացայ և դու լուիցես ինձ Աստուած իմ : Տէր առաջի քո է ամենայն ցանկութիւն իմ . և հեծութիւն իմ 'ի քէն ո՛չ ծածկեցաւ . և յանցանք իմ առաջի իմ են յամենայն ժամ : Զմեղս իմ ցուցից քեզ . և զանօրէնութիւնս իմ ո՛չ ծածկեցից 'ի քէն . պատմեցից ինձէն զմեղս իմ , և դու թողցես զամենայն ամբարշտութիւնս մեղաց իմոց : 'Ի բաց արա յինէն զտանջանս իմ . զի 'ի զօրութենէ ձեռին քո ես պակասեցայ : Մ՛ի թողուր զիս Տէր Աստուած իմ , և մի 'ի բացեայ առնիր յինէն . հայեա՛ց յօգնել ինձ Տէր փրկութեան իմոյ : Զի ո՞վ է համբերութիւն իմ , թէ ո՛չ

դու Տէր · կամ կեա՛ր զօրութեան իմոյ , թէ
ո՛չ 'ի քէն ։ Լո՛ւր Տէր աղօթից իմոց ·
ունկն դի՛ր խնդրուածոյ իմոյ , արտասուաց
իմոց մի՛ լռեր ։

Ե · Սաղմոս

Տէ՛ր մի՛ սրտմտութեամբ քով յանդի-
մաներ զիս , և մի՛ բարկութեամբ քով խրա-
տեր զիս ։ Ողորմեա՛ ինձ Տէր , զի հիւանդ
եմ ես , բժշկեա՛ զանձն իմ , զի խռովեցա՛ն
ոսկերք իմ ։ Անձն իմ յոյժ խռովեցաւ
յերեսաց մեղաց իմո՛ց , և դու Տէր մինչև
յե՞րբ թողուս զիս 'ի ձեռանէ քումմէ ։
Դա՛րձ Տէր և փրկեա՛ զանձն իմ · կեցո՛
զիս Տէր ըստ ողորմութեան քում ։ Վաս-
տակեցայ ես 'ի հեծութեան իմում · լուա-
ցի զամենայն գիշեր զմահիճս իմ , և ար-
տասուօք իմովք զանկողինս իմ թացի ։ Մի՛ն-
չև յե՞րբ Տէր մոռանաս զիս իսպառ · մինչև
յե՞րբ դարձուցանես զերեսս քո յինէն ։
Մի՛նչև յե՞րբ դնեմ զխորհուրդս յանձն իմ ,
և ցաւք սրտի իմոյ զաւուրս ։ Մի՛նչև
յե՞րբ բարձրանայ թշնամին 'ի վերայ իմ ·
Նայեա՛ և լո՛ւր ինձ Տէր Աստուած իմ ։
Խռովեցաւ 'ի սրտմտութենէ ակն իմ , և
մաշեցայ ես 'ի վերայ թշնամեաց իմոց · բա-

զում՛ եղեն՝ նեղիչք իմ, և բազումք յա-րեան ՚ի վերայ իմ։ Այլ դու Տէր օգնա-կան իմ ես, փառք իմ, և բարձրացուցիչ գլխոյ իմոյ։ Ես յողորմութիւնս քո Տէր յուսացայ, ցնծասցէ սիրտ իմ ՚ի փրկու-թեան քում, օրհնեցից զՏէր՝ զբարերարն իմ։ Վասն զի լաւ է ինձ ողորմութիւն քո քան զկեանս իմ, և շրթունք իմ գովես-ցեն զքեզ. բնակեցայց ՚ի յարկս քո յա-ւիտեան, և ծածկեցայց ընդ հովանեաւ թևո-ց քոց։ Եղիցի ողորմութիւն քո ի մխի-թարել զիս, ինկեսցեն յիս գթութիւնք քո և կեցից. և եղիցի սիրտ իմ անբիծ յարդարութեան քում. զի մի ամաչեցից։ Յիշեա՛ Տէր զգթութիւնս քո և զողորմու-թիւնս քո՝ որ են յաւիտենից. և առաջնոր-դեա՛ ինձ ՚ի ճշմարտութեան քում, և ու-սո՛ զիս, զի դու ես Աստուած փրկիչ իմ։

Զ. Սաղմոս։

Աստուա՛ծ Աստուա՛ծ իմ, ես առ քեզ առաւօտ առնեմ. ծարաւեաց առ քեզ հո-գի իմ. քանի՛ցպատիկ եւս և մարմին իմ։ Յերկիւղէ թշնամւոյն փրկեա՛ զանձն իմ, և ծածկեսցես զիս ՚ի ժողովոց չարաց. ՚ի բազմութենէ ոյք գործեն զանօրէնութիւն։

Այլ սրեցին որպէս զսուսեր զլեզուս իւրեանց · լարեցին զաղեղունս իւրեանց յիր դառնութեան , ձգել 'ի գաղտնիս այնոցիկ , որք ուղիղ են սրտիւք ։ Այլ զօրացուցին յանձինս իւրեանց զբանս չարութեան , և խորհեցան թաքուցանել ինձ որոգայթ ։ Զօրացան յիս թշնամիք և ատելիք իմ 'ի նանիր · ինչ զոր ոչ յափշտակեալ էր իմ՝ տուժէի նոցա ։ Աստուած դու ծանեար զանզգամութիւն իմ , և յանցանք իմ 'ի քէն ոչ ծածկեցան ։ Եղէ ես որպէս մարդ առանց օգնականի՝ և 'ի մեռեալս ազատ · լցան չարչարանօք անձն իմ , և կեանք իմ 'ի դժոխս մերձեցան · և համարեցայ ես ընդ այնոսիկ որք իջանեն 'ի գուբ ։ Յիս հաստատեցաւ սրտմտութիւն քո · զամենայն զբօսանս քո ածեր 'ի վերայ իմ · յիս հաստատեցաւ բարկութիւն քո · և արհաւիրք քո խռովեցուցին զիս ։ Նուաղեցայ ես 'ի բարկութենէ քումմէ , և 'ի սրտմտութենէ քումմէ խռովեցայ · ամենայն աւուրք իմ նուաղեցան , զի եղեր զմեզս իմ առաջի քո , և զկեանս իմ 'ի լոյս երեսաց քոց ։ Սիրտ իմ խռովեցաւ 'ի փորի իմում , և ես որպէս սուսեր 'ի խուսափել իմում պակասեցայ ,

և թօթափեցայ որպէս մարախ ։ Սիրտ իմ խռովեցաւ յիս , և երկիւղ մահու անկաւ 'ի վերայ իմ . ահ և դողումն եկն 'ի վերայ իմ, և ծածկեաց զիս խաւար ։ Յո՞ երթայց ես յոգւոյ քումմէ , կամ յերեսաց քոց ես յո՞ փախեայց ։ Թէ ելանեմ յերկինս դու անդ ես . թէ իջանեմ 'ի դժոխս՝ և անդր մօտ ես ։ Առցեն աղօթք իմ առաջի քո Տէր , խոնարհեսցէ ունկն քո 'ի խնդրուածս իմ ։ Լո՛ւր ինձ Տէր զի քաղցր է ողորմութիւն քո . ըստ բազում գթութեան քում հայեա՛ց յիս , և մի՛ դարձուցաներ զերեսս քո 'ի ծառայէ քումմէ , զի նեղեալ եմ ես . վաղվաղակի լո՛ւր ինձ, և փրկութիւն քո Աստուա՛ծ ընկալցէ զիս ։ Վաստակեցի ես առ աղաղակել, և կեր կերեցաւ կոկորդ իմ . նուաղեցին աչք իմ՝ առ յուսալ ինձ յողորմութիւն քո Աստուա՛ծ . Ես աղքատ և տնանկ եմ Աստուա՛ծ օգնեա՛ ինձ . օգնական և փրկիչ իմ ես՝ Տէր իմ մի՛ յամենար .

Է . Սաղմոս ։

Ընդէ՞ր Տէր մերժես զանձն իմ . կամ դարձուցանես զերեսս քո յինէն . Մի՞ թէ յաւիտենից մերժեսցես զիս Տէր . և ոչ ևս

յաւելուցուս 'ի հաճել և ես . կամ խո-
պառ արգելցես զողորմութիւնս քո յինէն .
կամ մոռասցիս զգթալ՝ Աստուած իմ և ես .
կամ արգելցես զգթութիւն քո՝ բարկու-
թեամբ քով ։ Աստուած 'ի սրբութեան
են ճանապարհք քո . ով է Աստուած մեծ
իբրև զքեզ . դու ես Աստուած որ առնես
զքանչելիս ։ 'Ի ծովու են ճանապարհք
քո . շաւիղք քո 'ի ջուրս բազումս . և հետք
քո ոչ երևին ։ 'Ի միտ առեր զխորհուրդս
իմ 'ի հեռաստանէ . զշաւիղս իմ և զվիճակ
իմ դու քննեցեր, և զամենայն ճանապարհս
իմ յառաջագոյն տեսեր . և դու ծանեար
զյետին իմ և զառաջին իմ ։ Զանգործս
իմ տեսին աչք քո, և 'ի գիրս քո գրեցան
ամենեքեան ։ Զօր ամենայն նախատինք
իմ առաջի իմ են . և ամօթ երեսաց իմոց ծած-
կեաց զիս ։ Երանի թէ յաջողեալ էին ինձ
ճանապարհք իմ 'ի պահել ինձ զարդարու-
թիւնս քո . յայնժամ ես ոչ ամաչէի 'ի
զգուշանալ ինձ 'ի պատուիրանս քո ։ Ժա-
մանեցին պահուց աչք իմ, խռովեցայ և
ոչ խօսեցայ . խորհեցայ զաւուրս զառաջինս
և զամս յաւիտենից յիշեցի . հոգայի և
տառապէր յիս հոգի իմ ։ Ոչ կամէր մխի-

թափել անձն իմ, հոգայի և նուաղէր յիս հոգի իմ. յիշեցի զԱստուած և ուրախ եղէ ։ Բարի է ինձ՝ զի խոնարհ արարեր զիս որպէս զի ուսայց զարդարութիւնս քո ։ Տէս զխոնարհութիւն իմ և զվաստակ իմ, և թող ինձ զամենայն զմեղս իմ. պահեա զանձին իմ և փրկեա զիս, զի մի՛ յամօթ եղէց ։ Կարօտացաւ անձն իմ ՚ի փրկութիւն քո, զի ես ՚ի բանս քո յուսացայ. Նայեա առ իս և ողորմեա ինձ. զի միամօր և աղքատ եմ ես ։ Նեղութիւնք սրտի իմոյ բազում եղեն յոյժ. և ՚ի վշտաց իմոց հան զիս ։ Մի՛ յաւիտեան բարկանար ինձ Տէր. և մի՛ ձգեր զբարկութիւն քո յազգէ մինչև յազգ ։ Դարձ առ իս Աստուած փրկիչ իմ, և դարձո զսրտմտութիւն քո յինէն ։ Աստուած զօրութեանց՝ դարձ, հայեաց յերկնից և տես. ցոյց ինձ զողորմութիւնս քո, և զփրկութիւնս քո տուր ինձ ։ Վասն անուան քո Տէր քաւեա զմեղս իմ, զի բազում եղեն ։ Արա ընդ ծառայի քում Տէր ըստ ողորմութեան քում. զարդարութիւնս քո ուսո ինձ, և յիրաւունս քո կեցո զիս ։ Օգնեա ինձ և ապրեցո զիս. ընկալ զծառայս քո ՚ի բարի, և բեւեռեա ընդ երկիւղ քո զմարմին

իմ. զի ՚ի դատաստանաց քոց երկեայց յոյժ :
Առաջնորդեա՛ ինձ ՚ի շաւիղս պատուիրանաց քոց. և հաստատեա՛ զիս ՚ի բանս քո : Զճանապարհս մեղաց ՚ի բաց արա՛ յինէն, և դարձո՛ զաչս իմ. զի մի՛ տեսից զունայնութիւն : Զճանապարհս իմ ուղիղ արա՛ ինձ ըստ բանի քում. և մի՛ տիրեսցէ ինձ ամենայն մեղք : Փրկեա՛ զիս ՚ի թշնամեաց իմոց Աստուած. յայնցանէ՝ որ յարուցեալ են ՚ի վերայ իմ ապրեցո՛ զիս : Փրկեա՛ զիս յայնցանէ, որք գործեն զանօրէնութիւն. յարանց արիւնահեղաց ապրեցո՛ զիս : Քոյ եմ ես և կեցո՛ զիս. կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ, և իրաւունք քո օգնեսցեն ինձ : Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն :

Երգ ՚Ներսիսի Շնորհալւոյ

Աշխարհ ամենայն, առ ՚ի նայեցեալք. ախտակից լերուք : Բանամ զշրթունս. բարբառիմ լեզուաւս. բողոքեմ զանձանէս. Տէր ողորմեա՛. Տէր ողորմեա՛. Տէր ողոր :
Գող եղէ մեղաց. գող կորստեան, զուր ինձ փորեցի : Գուեցի զանձն իմ.

դաւաճանեցի · դարան գործեցի · Տէր ։

Երբեմն էի լոյս , և այժմ եմ խաւար · և սատակեր մահու ։ Ո՜ ճարդ պատմեցից · զթիւ մեղաց իմոց · զի բազում են յոյժ · Տէր ։

Երկինք և երկիր · եկայք ողբացէք · եղկելի զանձն իմ ։ Ընտրեցի զչարն · ընկալայ կամաւ · զհոյլս մեղաց · Տէր ողորմեա ։

Թաւալիմ աղտով · թաւալիմ ՚ի մեղս · թօթափիլ չկարեմ ։ Քանտախտիւ լցեալ · ժահահոտ եղէ · ժամանակս բազումս · Տէր ։

՚Ի բաց մեկնեցայ · ՚ի սուրբ խորհրդոց · ՚ի բարեաց գործոց ։ Ես վարկաւ անձն իմ · լուսոյն հեռանալ · լինել ընդ խաւար · Տէր ողորմեա ։

Խորհուրդք չարին · խաբեն զհոգիս · խորտայգ առնեն ։ Ծածկեն անդնդօք · ծիծաղին զլորմամբս , ծանակ զիս առնեն · Տէր ողորմեա ։

Կամաւ կորեայ · կորկամեալս անձամբ · կանգնել ոչ կարեմ ։ Հուր մեղաց կիզող · հրդեհեաց որ յիս · հոգևոր բարիս ։ Տէր ։

Զարկեցայ մեղօք · ձայնեցին տեսողք · ձանձրացաւ հոգիս ։ Պեղի դառնութեան · զօղեալ ՚ի սիրտ իմ · զամպար իմ շիջաւ · Տէր ողորմեա ։

Ճաշակմամբ մեղաց · ճաշեցի զմահ · ճոխս աղքատացայ ։ Մեռեալ եմ հոգւովս · մոլորեալ մտօքս · միայն կամ մարմնովս · Տէր ։

Յորոգայթ մահու · յորսողին անկայ · յաղթեցայ յախտից ։ ՙՆետից թշնամւոյն · նշաւակ եղէ · ՙնոր միշտ խոցոտիմ · Տէր ։

Շուրջ պատեալ զինեւ · շունք բազումք եղեն · շաղախին արեամբս ։

Որս եղէ չարին · ուռկանաւ մեղաց · որսացաւ զանձն իմ · Տէր ողորմեա ։

Չարաչար վշտօք · չարչարի անձն իմ · չունիմ դադարումն ։ Պարտական գտայ · պարտուց յանցանաց , պարտեալս 'ի մեղաց · Տէր ողորմեա ։

Ջանամ զղջանալ · ջեռանիմ դարձեալ · ջեռնում հրով մեղաց ։ Ռաբբի կոչեցայ · ռակայ անուանիմ · ռամկական վարուքս , Տէր ողորմեա · Տէր ողորմեա · Տէր ողորմեա ։

Սիրով ցանկութեան · սատանիկ բարկութեամբ · սիրտ իմ խոցեալ է ։ Վիրօք յանցանաց · վշտանայ հոգիս · վարանեալ շրջիմ · Տէր ողորմեա ։

Տիրեցին ինձ չարք · տարագիր հանին · տիրական գրկացն ։ Րաբունւոյն բարւոյ · բախտական ձայնին · լսելոյ ոչ լուայ · Տէր ։

Ցանկութիւն չարեաց. ցանկալի դիմօք. ցաւեցոյց զանձս իմ. Իւրաքանչիւրոց. իւսմամբ խուռն ախտից. իւսեալ է հոգիս. Տէր ողորմեա։

Փութացիր անձն իմ. փախչիլ ՚ի չարեաց. փափագել բարեաց։ Բեղ միշտ մե՛րձ ծանիր. քուն մահու եկեալ. քննող դատաւոր. Տէր ողորմեա. Տէր ողորմեա։

Սուրբ Աստուածածնին բարեխօսութ̄, յիշեա Տէր և ողորմեա։

Աղօթք Մանասէի թագաւորին։

Տէր ամենակալ, Աստուած Աբրահամու՝ Իսահակայ՝ Յակոբայ և զաւակի նոցա արդարոց. ամենակա՛լ Տէր՝ թո՛ղ զմեղս իմ։ Որ արարեր զերկինս և զերկիր, և զամենայն զարդ նոցա. ամէն։ Որ կապեցեր զծով բանիւ հրամանի քո. փակեցեր զխորս. կնքեցեր ահաւոր և փառաւորեալ անուամբ քով. ամէն։ Անբաւ է մեծ վայելչութիւն փառաց սրբութեան քո. սաստիկ է բարկութիւն սպառնալեաց քոց ՚ի վերայ մեղաւորաց. անչափ և անքննին են ողորմութիւնք աւետեաց քոց. ամէն։ Դու Տէր բարձրեալ՝ գթած. երկայնամիտ՝ բազումողորմ,

և զղջանաս 'ի վերայ չարեաց մարդկան. ամե։ Դու Աստուած՝ ոչ եդեր ապաշխարութիւն վասն արդարոյն՝ Աբրահամու՝ Իսահակայ և Յակոբայ, որք ոչ մեղան քեզ. ամե։ Այլ եդեր ապաշխարութիւն վասն իմ մեղաւորիս, զի մեղայ աւելի քան զաւազ ծովու, և բազմացան անօրէնութիւնք իմ. ամենա։ Չեմ արժանի հայել և տեսանել զբարձրութիւնս երկնից, 'ի բազմութենէ անօրէնութեան իմոյ. ամե։ Կորացեալ եմ ես 'ի բռնութենէ կապանաց երկաթից. և ոչ գոյ ինձ հանգիստ. ամե։ Բարկացուցի զսրտմտութիւն. և զչար առաջի քո արարի. կանգնեցի պատկեր՝ և բազմացուցի զցասումըն անձին իմոյ. ամենա։ Եւ արդ Տէր՝ խոնարհեցուցանեմ զծունր սրտի իմոյ. և հայցեմ 'ի քաղցրութենէ քումմէ, ամենակալ։ Մեղայ՝ Տէր մեղայ. և զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ. ամենակալ։

Աղաչեմ և խնդրեմ 'ի քէն՝ թո՛ղ ինձ Տէր, թո՛ղ ինձ. և մի՛ կորուսաներ զիս ըստ անօրէնութեան իմոյ, ամե։ Մի՛ յաւիտեան բարկանար ինձ Տէր, և մի՛ յիշեր զչարիսն իմ. և մի՛ պարտաւորեր զիս ընդ իջեալսն 'ի ներքոյ երկրի չարեօք. ամե։ Զի դու

Աստուա՛ծ , Աստուած ապաշխարողաց ես . և յիս ցո՛յց զբարերարութիւնդ քո , որ անարժան եմ , ամէն : Կեցուսցե՛ս զիս ըստ բազում ողորմութեան քում . և ես օրհնեցից զքեզ զամենայն աւուրս կենաց իմոց . ամէն : Զքեզ Տէր օրհնեն ամենայն զուարթունք երկնից . և քո են փառք յաւիտեանս . Ամէն : Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ . այժմ և միշտ և :

Աղաչեմ և խնդրեմ'ի քէն Տէր , թո՛ղ ինձ զմեղս իմ : Բազումողորմ Տէր , ողորմեա՛ ինձ : Աստուա՛ծ՝ քաւեա՛ զիս զմեղաւորս 'ի մեղաց , և կեցո՛ , Աստուա՛ծ գթա՛ յիս 'ի մեղուցեալ ծառայս . և ողորմեա՛ ինձ բազմամեղիս : Ամէն օրհնեալ սրբուհի՝ և միշտ կոյս Աստուածածին Մարիամ , բարեխօսեա՛ առ Տէր վասն իմ մեղաւորիս :

Ամենայն սուրբք Աստուծոյ՝ բարեխօսեցէք առ Հայր 'ի յերկինս՝ վասն մեր մեղաւորացս :

Քրիստո՛ս որդի Աստուծոյ անոխակալ . ընկա՛լ զաղաչանս մեր , զի 'ի քեզ են ապաւինեալ անձինք մեր :

Յաղթող զօրութեամբ՝ սուրբ և կենդանարար և պատուական խաչի քո Տէր՝ պահ-

պահեա զմեզ ։

Առաքեա Տէր զհրեշտակ խաղաղութեան քո․ որ եկեալ պահեսցէ զմեզ անխռով 'ի տուէ և 'ի գիշերի ։

Եւ մարդասիրութեամբ քով յիշեա ըզմեզ Տէր, յիշեա զմեզ, յորժամ գաս արքայութեամբ քով, և ողորմեա մեզ ։

Աղօթք ։

Տէր Աստուած փրկութեան, որ ողորմած ես և գթած․ երկայնամիտ և ներող չարեաց մարդկան․ որ ո՛չ կամիս զմահ մեղաւորին, այլ դառնալ նորա 'ի չար ճանապարհէն և զկեալ ։ Եկեալս 'ի խոստովանութիւն ապաշխարութեան՝ անկեալ աղաչեմ զքեզ՝ քաւիչ մեղաւորաց, և յոյս ապաշխարողաց, ըստ գթութեան քում՝ ներեա և թո՛ղ ինձ զյանցանս իմ․ մի՛ մատներ 'ի դատաստան ընդ անարգ ծառայիս՝ որ տառապեալ եմ մեղօք իմովք և յանցուածովք, որք յայտնի են առաջի աչաց քոց, զորս խոստովանիմ ինձէն ապաշաւանօք և զղջմամբ, և հայցեմ զողորմութիւն քո․ մխիթարեա զվշտագնեալ և զտաժանեալ ծառայս քո․ և անցո՛ յինէն զպատուհաս յանցանացն իմոց բարերարութեամբ քով․ հաշ-

տես ընդ իս անարժանիս , և օգնեա՛ շնորհօք քոյովք . զի առողջացեալ հոգւով՝ եղէց անդամ եկեղեցւոյ քո սրբոյ . և արժանացայց կենացդ յաւիտենից . 'ի փառս անուան քո սրբոյ , որ ես օրհնեալ յաւիտեանս . ամէն :

Մաղթողական երգք ապաշխարանաց :

Դատաւոր արդար որ հաստատեցեր 'ի մեզ զատող բնութեան զմիտս մեր . շնորհեա՛ սմա դատել զանձն իմ իրաւամբ և արդարութե՛ . և խնայեա՛ յիս Տէր ողորմութե՛ :

Փրկեա՛ երկնաւոր Հայրն քո եկեղեցւոյ . զայրն եղեալ 'ի քէն հոգիս մեզօք , մաքրեա՛ զթուլթե՛ և յօդեա՛ 'ի քեզ միութեամբ . և :

Որ մահուամբ միածնի քո մեռուցեր ըզմեղս . և յարութեամբ քո յարուցեր 'ի մեզ զարդարութիւն . տուր զօրութիւն հոգւոյս կամաց հնազանդել զկամս մարմնոյս . և խնա :

Բազմութե՛ յանցանօք ծանրաբեռնեալ է անձն իմ . միայնոյ քեզ մարդասիրի աղաչեմ , ողորմեա՛ ինձ Աստուած :

Բղխմամբ արտասուաց և հառաչանօք սրտի իմոյ , անդադար հայցեմ թողմանելու՛ , քաւեա՛ զիս Աստուած :

Բազմագութ մարդասէր շնորհեա՛ զթո-

զթողութիւն իմոց յանցանաց · զի առ քեզ միայն պաղատիմ , քաւեա զիս Աստուած ։

Ողորմեա՛ց ինձ · Քրիստոս ողորմութեամբդ քով մեծաւ · զի կարօտ եմ ես շնորհի քո և ողորմութեան · ողորմեա՛ց և յուր ինձ բազմամեղիս ։

Լո՛ւր Տէր ձայնի ողբալից և ցաւալից պաղատանաց · որ ամօթով կամ առաջի քո՛ իմ չարաչար վարուքս · ողորմեա՛ և ։

Մ՛եղուցեալ անձամբ կարդամ առ քեզ Հա՛յր երկնաւոր · օգնեա՛ ինձ ՚ի նեղութեանս · որ մեղօքս եմ մեռեալ · օգնեա՛ ինձ և ողորմեա՛ ինձ ։

Ոչխար եմ բանաւոր Հօտի քո , և առ քեզ ապաւինիմ Հովիւ բարի · խնդրեա՛ զիս զմոլորեալս և ողորմեա՛ ինձ բազմամեղիս ։

Իջեր յերկնից Որդի Աստուծոյ , ազատեցեր զարարածս · անկանիմ առաջի քո · ողորմեա՛ և յուր ինձ բազմամեղիս ։

՚Ի խաչին բեւեռեցար Աստուած , և զմարդն ՚ի կապանաց մաՀու արձակեցեր , և զիս մի՛ անտես առներ որ մեղօքս եմ մեռեալ · և ողորմեա՛ ։

Աղաչեմ զքեզ Տէր պարգեւեա՛ ինձ ապաշխարութեամբ լուանալ զմեղս իմ և Հաւա-

նել քոց շնորհաց . օգնեա՛ Տէր և ողորմեա՛ ինձ բազմամեղիս ։

Ընկերութից քինող գազանաց՝ բժշկեա՛ զհոգւոյ իմոյ զհիւանդութիւնս . և կեցո՛ միայն մարդասէր ։

Որ երկայնամիտդ ես առ ամենեսեան, ողորմեա՛ անձին իմոյ բազմամեղի, և կեցո՛ միայն մարդասէր ։

Որ ապրեցուցեր զերիս մանկունսն 'ի հնոցին . և զիս ապրեցո՛ յահագին հրոյն . և ողորմեա՛ միայն մարդա ։

Մեղայ մինչև յերկինս, և զարդար ցասումն քո շարժեցի առ իս . բայց մեծի ողորմութեան քում ողորմեա՛ և կեցո՛ միայն ։

Մեղայ անօրինեցայ և անկայ 'ի ձեռս անօրէն թշնամւոյն . արդ անկեալ աղաչեմ, թո՛ղ ինձ զմեղս իմ Տէր ։

Քան զամենեսեան առաւել մեղայ Տէր իմ գթած . քան զամենեսեան անօրինեցայ և մատնեցայ 'ի ձեռս ։

Մեղք իմ բազում են յոյժ, ծանր են քան զաւազ ծովու . բանզի քեզ միայնոյ մեղայ Տէր . և մատնեցայ ։

Յոյս իմ ես դու Տէր, քաւիչ յանցանաց

իմոց . մի՛ անտես առներ զզղջումն արտա-սուաց իմոց . ողորմեա՛ ինձ Աստուած ։

Առ քեզ ապաւինիմ որպէս զանառակ որդին . Հա՛յր մեղայ յերկինս և առաջի քո . ողորմեա՛ ։

Փրկեա՛ զիս Աստուած ՚ի բազում մեղաց իմոց . արա՛ արժանի քոյին սուրբ արքայութեանդ և ողորմեա՛ ։

Հեղ յիս զգթութիւնդ քո բազումողորմ և մարդասէր . տո՛ւր ինձ զշնորհս սուրբ Հոգւոյդ և ողորմեա՛ ։

Դարձո՛ զցասումն քո ՚ի մէնջ յապաղակել Հոգեղինացս . բազմագութ Տէր խնայեա՛ և մի՛ կորուսաներ ։

Կանգնեա՛ զանկեալս ՚ի գլորմանէ , զվիրաւորեալս ՚ի թշնամւոյն . որ բժիշկդ ես հիւանդաց բժշկեա՛ զիմ զհիւանդութիւնս ։

՚Ի յանցանաց իմոց թախծեալ անձն իմ , գոչեմ որպէս զմաքսաւորն , Աստուած քաւեա՛ զիս զմեղաւորս ։

Ընկանիմ առաջի քո և խնդրեմ զթողութիւն մեղաց իմոց, մի՛ անտես առներ Հա՛յր զաղաչանս իմ ։

Աղաղակեմ որպէս մաքսաւորն և Հեղում

զարտասուս իմ առաջի քո . մի՛ անտեսեր ։

Դարձի՛ր Տէր ՚ի բարկութենէ քումմէ . անցո՛ ՚ի մէնջ զցասումն քո . և ողորմեա՛ մեզ Տէր բարերար ։

Օգնական մեր լե՛ր Տէր և ապաւէն . ամրացո՛ աներկիւղ ՚ի չարեաց և ողորմեա՛ ։

Հատուածք Աղօթից Սրբոյն Եփրեմի Ասորւոյ .

Տէ՛ր Տէր զտառապանս իմ և զցաւս հոգւոյ իմոյ բազմամեղիս . դա՛րձ , Նե՛րեա և ՚ի քեզ առաջնորդեա՛ . որ ասացեր՝ դարձարուք առ իս , և ես դարձայց առ ձեզ ։

Յորձանս անօրէնութեան տարաբերեալ ծփիմ , և առ քեզ ապաւինիմ , որպէս Պետրոսի ձեռնարկեա՛ ինձ ։ Գոչեմ որպէս ըղմաքսաւորն արդարանալ . շնորհեա՛ զյանցանս իմ որպէս զաւազակին . բա՛ց ինձ ըղդուռն կենաց ճանապարհին , և մո՛յծ զիս յարքունական բուրաստանդ ։

Աղբիւր կենդանութեան և անմահութեան , արբո՛ զծարաւեալ զհոգիս իմ որ պապակեալ տոչորիմ ՚ի բազում անօրէնութեանց իմոց . խթեա՛ ՚ի քարացեալ սիրտ իմ , և հա՛ն ինձ արտասուս ապաշխարութեան ։

Լոյս ճշմարիտ , որ լուսաւորես զամե-

՚նոյն մարդ , լուսաւորեա՛ զխաւարեալս մը-տօք . բաց զաչս սրտի իմոյ , և Հաստատեա՛ յերկիւղ և 'ի սէր պատուիրանաց քոց ։

Տնկեա՛ Տէր զահ և զերկիւղ քո 'ի սիրտ իմ . լուսաւորեա՛ զխորհուրդս իմ , կարգա-ցո՛ զմարմին իմ՝ ժուժկալութեամբ կալ 'ի պատուիրանի քում յամենայն ժամ . և պար-գևեա՛ ինձ զառաքինի վարս՝ զի զգաստու-թեամբ և արդարութեամբ վարեցից զկեանս իմ ։

Ամենակալ Տէր , մի՛ վասն բազում չա-րեաց իմոց անտես առներ զիս . այլ դար-ձիր յիս , և դարձո՛ զամենայն ցանկութիւնս իմ 'ի քեզ . սիրել զքեզ միայն 'ի բոլոր սրտէ , 'ի նուազ և յանպաճոյճ մտաց ի-մոց ։

Պատկերացո՛ Տէր զանհրաժեշտ զալուստ քո առաջի աչաց իմոց . և դողացո՛ զմար-մին իմ սպաս և լալ անդադար յերկիւղէ ահեղ դատաստանաց քոց . մի՛ փակեր զգութ ողորմականն սիրոյ քո 'ի ստեղծուածոյս քո՝ որ մեղօքս եմ մեռեալ ։

Տո՛ւր ինձ Տէր զբարիս գործել յամենայն ժամ , և խափանեա՛ զամենայն չարիս 'ի չար մտաց իմոց . 'ի ուղիղ և յանուղղոյ գնացից

սովորութեան՝ զոր ունիմ 'ի չարս , դարձո զիս , և հաստատեա յերկիւղ և 'ի սէր պատուիրանաց քոց ։

Արեգակն արդարութեան Քրիստոս , 'ի լոյս քո ապաւինիմ . լուսաւորեա և ջերմացո զսիրտ իմ . հրակիզեա զչար խորհուրդս իմ , և հալեա զսառնամանիս մեղաց իմոց . շնորհեա զզարթուն հոգւոյ իմոյ . ծագել և պտղաբերել զարդարութեան պտուղն ։

Ազատիչ Քրիստոս , ազատեա զիս 'ի դառնաշունչ օդոյ մեղաց ձմերայնոյ . զխաւարեալ և զսառուցեալ հոգի իմ պայծառացո և ջերմացո . և ցօղեա զցօղ շնորհի ջերմութեան քո յանդս մտաց սրտի իմոյ ։

Զգեա Տէր զձեռն քո 'ի նուաբեկեալս որ ընկղմեալս եմ 'ի խորս չարեաց , և փըրկեա 'ի սատանի ծովածուփ բռնութենէ այլեաց մեղաց իմոց . սանձեա և կարկեա զխստերախ միտս իմ 'ի զբաղմանց ունայնութեանց կենցաղոյս ։

Ծագեա Տէր , առաւօտ խաղաղութեան սրտի իմոյ . և զցաւագին գիշեր և զխաւար մեղաց 'ի մտաց իմոց հալածեա . և մարմնոյ իմոյ շնորհեա զարխական վարս ,

առաքինութեամբ կեալ 'ի հաճոյս կամաց քոց ։

Հալածեա՛ Տէր զխաւար հոգւոյ իմոյ և զգեցո՛ զլոյս արդարութեան ճառագայթից քոց ․ զարդարեա՛ երկիւղիւ և զղջմամբ արտասուաց զսիրտ իմ՝ երկնչել 'ի դատաստանաց քոց , և պահել զպատուիրանս քո ։

Զարթո՛ զիս Տէր յահագին խորութենէ քնոյ մեղաց իմոց , և զտկարացեալ մարմինս իմ զգաստացո՛ յամենայն գործս բարիս խորհել միշտ ․ և մեծաւ երկիւղիւ առնել զհաճոյս քո յամենայն ժամ ։

Նայեա՛ Տէր 'ի նեղեալ և 'ի թառամեալ հոգի իմ , և լուա՛ աստուածային ջրովդ ․ և հոգևոր աղիւդ համեմեա՛ և անուշահոտ սուրբ իւղովդ օծեա՛ , և զկատարեալ առողջութիւն ընձեռեա՛ ։

Թեթևացո՛ Տէր զկարիս մարմնոյ իմոյ , և յաճախեա՛ յիս զշնորհս հոգւոյդ Սրբոյ , լինել տաճար և բնակարան Աստուածային փառաց քոց ․ անյագ սիրով սիրել զքեզ , և ատել զամենայն ցանկութիւն և զսէր աշխարհիս այսորիկ ․ որով եղև յանցումն և կորուստ հոգւոյ իմոյ ։

Եւ քանզի միտք իմ պղտորեալ շրջին ՚ի հոսանս երկրաւոր կենցաղոյս , դու Տէր հալածեա՛ զամենայն չար մտածմունս յերկրաքարշ խորհրդոց մտաց իմոց . և լուսաւորեա՛ զաչս հոգւոյս , առանց զբաղմանց՝ տես և ըզգաստ փութով գալ զհետ սիրոյ քո . և ուսո՛ ինձ գնալ ՚ի ճանապարհս քո բարիս . և արմատ բարեաց անկեա՛ հաստատութեամբ ՚ի սրտի իմում , և զպտուղ շնորհաց ՚ի հոգիս իմ նկարեա՛ ։

Զգեցո՛ ինձ Տէր զպատմուճանն առաջին զոր մերկացայ մեղօք իմովք . ցո՛յց զանոխակալութիւն քոյին , և լուսափայլ ողորմութեամբ քո զարդարեա՛ զմերկութիւնս իմ , և մո՛յծ զիս ՚ի կոչումն բազմելոց քոց ։

Լո՛ւր Տէր աղաղակի անառակիս՝ որ ամօթով կամ առաջի քո՝ զգանձն հայրենի վատնեալ . մի՛ զրկեր զիս ՚ի հայրական գթոյ քո . մեղայ յերկինս և առաջի քո . չեմ արժանի կոչել որդի , արա՛ զիս իբրև զմի ՚ի վարձկանաց քոց ։

Դադարեցո՛ զիս Տէր ՚ի չարաչար խորհրդոց իմոց , և յառնելոյ զկամս մտաց իմոց . զարդարեա՛ զիս մեծաւ երկիւղիւ քով և դարձո՛ յանառակութենէ՝ յարդարութիւն ,

յաղտեղութենէ՝ 'ի սրբութիւն, 'ի ծուլութենէ 'ի զգաստութիւն. և զահագին օր գալստեան քո նկարեմ առաջի աչաց իմոց, դողալ և սարսել 'ի դատաստանաց քոց, ժուժկալութեամբ և համբերութեամբ գնալ զճանապարհս քո անդադար ։

Բժշկեա Տէր զանբժշկելի հիւանդութիւնս իմ որ կարկամեալ գնիմ 'ի մահիճս մեղաց, արձակեա զիս 'ի կապանաց մեղաց իմոց. զխաւարեալս 'ի ցանկութենէ մարմնոյ՝ լուսաւորեա. զհնացեալս մեղօք՝ վերստին նորոգեա. և զօրացո զիս 'ի սէր պատուիրանաց քոց. և անսալ երկիւղիւ՝ հրամանաց քոց ։

Խորտակեա Տէր զբռնութիւն սատանայի, և հմա՝ ընկեա 'ի բաց զզօրութիւն նորա. արգել զարձակումն նորա 'ի վերայ իմ, զի մի տարապարհակ վարեալ զմարմին իմ՝ տանիցի ընդ արձակ ճանապարհն. որ տանի 'ի կորուստ և յապականութիւն ։

Ամրացո զիս Տէր յերկիւղ քո, և զօրացո զանկարացեալս՝ զօրութեամբ քով. զհիւանդութիւն հոգւոյ իմոյ առողջացո, և զցաւս մարմնոյս բժշկեա. և զջերմութիւն սիրոյ քո հաստատեա 'ի սրտի իմում. ուսո զիս առնել զարդարութիւն. սիրել զսրբութիւն, և ա-

տեւել զանօրէնութիւն, խոտորել 'ի չարեաց, և գնալ 'ի ճանապարհս բարեաց ։

Մի՛ մերժեր զիս Տէր 'ի բազմագութ ողորմութեանց քոց. զապաւինեալս 'ի քեզ ամրացո՛ և աներկիւղ պահեա՛ յամենայն որոգայթից սատանայի, զի մի՛ գերի վարեալ տանիցի զմիտս իմ 'ի զբաղումն և 'ի զանցառութիւն ։

Կանգնեա՛ զիս Տէր 'ի գլորմանէս, և 'ի բազմամեղ անդնդոյն խորութենէս վերացո՛ և բարձրացո՛ թեւօք Հոգւոյդ՝ 'ի պարապումն աղօթից, և 'ի խնդրուածս Հաճոյից, և 'ի կատարումն սուրբ պատուիրանաց քոց ։

Մի՛ թողուր զիս Տէր Հեռանալ 'ի սիրոյ պատուիրանաց քոց և 'ի վարուց առաքինութեան. այլ յորդորեա՛ առաւելուլ յամենայն գործս արդարութեան. առանց մեղաց և առանց իրիք խափանուածոյ՝ պաշտել զքեզ սրբութեամբ և արդարութեամբ, զամենայն աւուրս կենաց իմոց ։

Լցո՛ զիս Տէր երկիւղիւ և զղջմամբ, արտասուօք և Հառաչանօք, սիրով և սրբութեամբ, շնորհօք և ճշմարտութեամբ, գիտութեամբ և ամենայն առաքինութեամբ խոնարհութեան, Համբերութեան, յուսոյ,

պարկեշտութեան, ժուժկալութեան և հեզութեան՝ 'ի փրկութիւն հոգւոյս ։

Բժշկեա՛ զիս Տէր 'ի հպարտութենէ և 'ի յամբարտաւանութենէ, 'ի սնափառութենէ և 'ի փառասիրութենէ, 'ի մարդահաճութենէ, 'ի յոխակալութենէ, 'ի բարկութենէ և 'ի սրտմտութենէ. յատելութենէ և 'ի դատելոյ զոք. և յամենայն մոլութենէ և յախտից, և յամենայն անօրէնութենէ ։

Ծածկեա՛ զիս Տէր 'ի լոյ սուտ գովեստից և երանութեանց, զի ո՛չ գիտեն զմեղս իմ և ո՛չ ճանաչեն զխաբէութիւնս իմ. երեւիմ սրբութեամբ, և լի եմ պղծութեամբ. կերպարանիմ առաքինութեամբ, կեամ անառակութեամբ. փայլիմ երկիւղածութեամբ, և վարիմ մարդահաճութեամբ. ճանաչեմ զճշմարտութիւն, և խօսիմ զստութիւն. գիտեմ զարդարութիւն, և գործեմ զանօրէնութիւն ։

Քաւեա՛ զիս Տէր 'ի մեղաց և 'ի բամբասանաց, 'ի մոռացեալ յանցանաց և յամենայն սխալանաց. և թո՛ղ ինձ զմեղս իմ ծուլութեան և զանժուժկալութեան. զորկրասութեան և զդատարկաբանութեան. զցանկութեան և զաղտեղութեան. զհայ-

հոյութիւն և զամենայն բիծս չարեաց· զթոյն ՚ի մեղուցեալ և յեղկելի անձն իմ· խափանեա զանառակ ցանկութիւնս իմ· սրբեա զպղծութիւն մեղաց իմոց, և բառնեա զանօրէնութիւնս իմ· բժշկեա զվիրաւորեալ հոգի իմ, և առողջացո զհիւանդացեալ մարմին իմ· ցրուեա զչարիս իմ, և ժողովեա յիս զբարիս, և լից զպակասութիւնս իմ· զանկեալս մեղօք՝ կանգնեա, և զխոցեալս ՚ի թշնամւոյն՝ դեղատուեա· վերացո զկսկիծ յանցանաց, և ազատեա յանողորմ տանջանաց, և ՚ի մարմնական յղփանաց հեռացո։

Լեր Տէր վերակացու և պահապան անձին իմոյ, պահեա ՚ի դիւաց և փրկեա ՚ի մարդկային փորձանաց· և յաղթեա հակառակողաց· գործակցեա ինձ առաքինագործ քաղցրութեամբ համբերել վշտաց· և օգնեա տարակուսեալ անձին իմոյ։

Լուեա Տէր զբերան իմ ՚ի բամբասելոյ, և զլեզու իմ ՚ի չար խօսելոյ· զաչս իմ յարատ հայելոյ, և զականջս իմ ՚ի չարալուր լսելոյ· զձեռս իմ յափշտակելոյ, և զոտս իմ յանառակ գնացից· և զամենայն զգայարանս անձին իմոյ պարսպեա և զգա-

տացո՛ միշտ զհաճոյս քո կատարել ։

Մեղա՛յ քեզ Տէր, մեղա՛յ զի զպատուիրանս քո յանցեայ . 'ի լուսոյ կենաց հեռացայ և 'ի խաւար մեղաց մտի՝ աղտեղութեանց ցանկանալով, 'ի սիրոյ քո հեռացայ, և ըմբռնեցայ 'ի չարէն . ողորմեա՛ ինձ Տէր ողորմեա՛ ինձ՝ Տէր կենաց և քաւիչ մեղաց, բաշխող պարգևաց և տուող ամենայն շնորհաց . 'ի քե՛զ ապաւինիմ բարւոյ շնորհարարն, զի դու միայն ես գթած և մարդասէր ։

Լո՛ւր Տէր զաղաչանս իմ, ընկա՛լ զպաղատանս իմ, քաւեա՛ զյանցանս իմ, և կատարեա՛ զխնդրուածս իմ . արձակեա՛ զկապանս իմ, և բժշկեա՛ զհոգի իմ . առողջացո՛ զմարմին իմ և ուղղեա՛ զգնացս իմ . հալածեա՛ զբազում ախտաժէտութիւնս իմ, զցաւ մարմնոյ և զախտ հոգւոյ . և սպահեա՛ զխորհուրդս իմ անդրաւ, զսիրտ իմ սուրբ, և զմիտս իմ լուսաւոր և զգաստ, զցանկութիւնս իմ առ քեզ, և զյօժարութիւն իմ յաղօթս՝ 'ի տուէ և 'ի գիշերի ։

Բղխեցո՛ Տէր 'ի գլխոյ իմմէ աղբիւրս վտակաց, և ոռոգեա՛ զանդս մտաց իմոց . լուա՛ զախտ յանցանաց, և սրբեա՛ զթարախ վիրաց

իմոյ. խլեա՛ յինէն զփուշ մեղաց և անկեա՛ յիս զբոյս կենաց. աճեցո՛ զարդարութիւն և նուաստացո՛ զանօրէնութիւն. մեռո՛ զմարմնոյս ցանկութիւն, և նորոգեա՛ զհոգւոյս կենդանութիւն: Կոչեա՛ Տէր զմեղապարտ անձն իմ 'ի քեզ, զի մերձենալ առ քեզ չիշխեմ. պատկառիմ յամօթոյ, և զարհուրիմ 'ի գործոցս իմոց. համարձակութիւն առ քեզ չունիմ, զի ես ինձէն եմ մեղուցեալ 'ի սուրբ պատուիրանաց եմ հեռացեալ, և 'ի փառաց եմ մերկացեալ. վա՜յ ինձ զի ծփանք տարակուսանաց պատեն զիս, և զսիրտ իմ խռովեն. զի ծանրաբեռնեալ եմ մեղօք, և յագեցեալ պիղծ խորհրդով. Այլ դու Տէր, գթա՛ յիս և ողորմեա՛, զի ստեղծուած եմ անարատ ձեռաց քոց: Սփռեա՛ Տէր զշնորհս քո 'ի վերայ մասանց մարմնոյ իմոյ, և լի՛ց զանձն իմ զօրութեամբ և ժուժկալութեամբ. զհոգի իմ երկիւղիւ և դողութեամբ. զսիրտ իմ սիրով և սրբութեամբ. զմիտս իմ լուսով և իմաստութեամբ, զխորհուրդս իմ հանճարով և գիտութեամբ և զոտս իմ ուղղելով 'ի շաւիղս արդարութեան. զձեռս իմ շարժելով 'ի գործս բարութեան. զբերան իմ օրհնութեամբ և

գոհութեամբ. զաչս իմ արտասուելով յորդառուղի առատութեամբ. ծագեա՛ ինձ ըղնշոյլ շնորհաց և ջնջեա՛ զանթիւ չարիսն իմ։ Համարձակիմ Տէր աղօթել, և ո՛չ գիտեմ զհաճոյսն քո. խնդրեմ և ո՛չ իմանամ զօգտակարն իմ և զհաճոյսն քո. ցո՛յց ինձ, յայտնեա՛ ինձ զկամս քո բարիս. և ուսո՛ ինձ առնել զպատուիրանս քո։ Օ բարիս զոր ո՛չ իմանամ և խնդրեմ, տո՛ւր ինձ. և եթէ ո՛չ գործեմ զբարիս, բարի արա՛ ինձ. եթէ ո՛չ խնդրեմ զողորմութիւն, ողորմութիւն արա՛ ինձ. և եթէ հեռանամ ՚ի քէն՝ կոչեա՛ զիս. և եթէ ո՛չ լսեմ գալ, բռնադատեա՛ ՚ի քեզ կորզել զիս. և թէ կամիմ և եթէ ո՛չ կամիմ, դարձո՛ զիս. և եթէ ըմբռնիմ յումեքէ, զերծո՛ զիս. և եթէ զբաղիմ յիրս երկրաւորս, զբաղեցո՛ զիս յիրս հոգևորս. և եթէ ցնդիմ այսր անդր, մի՛ թողուր զիս գնալ մինչև ըմբռնեալ տարցես զիս ՚ի տեղի յարկի փառաց քոց։

Տէր իմ և Աստուած իմ Յիսուս Քրիստոս, դու ես իմ օգնական. ՚ի ձեռս քո եմ. դու գիտես զօգուտն իմ, օգնեա՛ ինձ. մի՛ թողուր զիս հետևել կամաց իմոց. մի՛ թողուր զիս կորնչել ՚ի մեղս իմ. այլ գթա՛

յիս 'ի ստեղծուածս ձեռաց քոց. մի՛ հայիր 'ի մեղկեալ սիրտս և 'ի զբաղասէր մարմինս իմ, զի հող եմ և մոխիր. սիրեմ զերկիրս և որ 'ի սմա. և ոչ փափագեմ՝ նայել յերկինս և որ 'ի նմա. այլ միշտ հեշտանամ 'ի չարիս և ընդ ոխըմն աշխարհիս թաւալիմ, և ոչ մաքրեալ վերանամ դասիլ ընդ առաքինիս. մոռանամ զերկնից դատաստանին, և ոչ դողամ յահագին և 'ի դառն տանջանացն՝ որ կայ և պահի մեղաւորաց. և ծուլանամ անհոգ լինելով 'ի փրկութենէ կենաց ։

Դարձո՛ Տէր զցասումն բարկութեան քո յինէն՝ որ բազում մեղօք իմովք տրտմեցուցի զքեզ. ողորմեա՛ ապստամբելոյս 'ի քէն. զանհնարին կշիռս մեղաց իմոց ցրուեա՛, և ընդ քաղցր լծով ծառայութեան քո բևեռեա՛ զմիտս իմ. ողորմեա՛ ինձ, զի առանց վաստակելոյ քո յիս՝ ոչ երբէք գործի առ իս բարի, և ոչ սերմանեալն յանդս հոգւոյ իմոյ բուսանի. արդ մշակելով քո յիս՝ լծեա՛ զերկուս աչս եզանց արտասուաց պաղատել առ քեզ յարաժամ, զի արժանի գտայց ողորմութեան քո ։ Շնորհեա՛ Տէր զխաղաղութիւն ամենայն հաւատացելոց. և ողորմեա՛ կարօտելոց՝ նեղելոց

և վշտագնելոց, որբոց և այրեաց. անան-
կաց և հիւանդաց. և զանդարձ մեղաւորս
դարձո յապաշխարութիւն։ Ողորմեա Տէր
Ծնողաց և ամենայն արեան մերձաւորաց ի-
մոց. և ըստ իւրաքանչիւր պիտոյից բաշ-
խեա առատապէս զշնորհս քո։ Կենդանեաց
մերոց ողորմեա, և զհոգիս ննջեցելոց մե-
րոց լուսաւորեա ուրախացո՛ յարքայու-
թեանդ երկնից։ Հաստատեա զիս Աստ-
ուած՝ ՚ի սէր քո, և բեւեռեա յերկիւղ քո.
զաղտ հոգւոյ իմոյ մաքրեա, և առ իս
օթեւանեա. զարդարեա զիս գործովք առա-
քինութեան և պարգեւեա ինձ զանճառ
երանութիւն քո. անկեա յիս հոգի շնոր-
հաց. խափանեա զիս ՚ի չար գործոց. և յոր-
դորեա զիս բարիս գործել. ՚ի հեշտու-
թեանց աշխարհիս հրաժարեցո. և քաջա-
լերեա զիս ՚ի ներողութեան, և ՚ի վշտի ի-
մում մխիթարեա. Յօրն իմ վախճանի հր-
րեշտակ բարի ինձ առաքեա քաղցրու-
թեամբ առնուլ զհոգի իմ. անցո զիս
անխռով ընդ օդս խաւարին, և զերծեալ
ապրեցո ՚ի չարաժանի դատաստանէն. և յորժամ
գաս ահեղ փառօք ՚ի դատել զաշխարհ,
յայնմ՝ սոսկալի աւուր և զիս ընկալ Տէր

ընդ արդարս քո, և կարգեա՛ ընդ աջմէ դա-
սուն. և շնորհեա՛ ինձ զկեանսն յաւիտենից
և զանձառ բարիս քո պարգեւեա՛ ինձ։
Գթացեա՛ յիս յայնժամ։ Տէ՛ր բարերար
անհուն ողորմութեամբ քով, և թողու-
թիւն շնորհեա՛ յանցանաց իմոց և ամենայն
յուսացելոցն 'ի քեզ. ջնջեա՛ զմեղս ամենայն
մկրտելոց 'ի քեզ. և թո՛ղ զպարտիս յանցա-
նաց ամենայն հաւատացելոց. և զերանական
զձայնն 'ի լսելիս ամենայն հաւատացելոց
աւետաբերեա՛։ Մի՛ դարձուցաներ զերեսս
քո 'ի ժառղէս, այլ խոնարհեա՛ յաղաչանս
իմ, և ընկա՛լ զխնդրուածս իմ, և ցո՛յց յիս զսո-
վորական քո մարդասիրութեանդ զողորմու-
թիւն, և խնայեա՛ 'ի մեղուցեալ ծառայս քո։
Մի՛ յայտնեսցին ծածուկ գործք ամբարշ-
տութեան իմոց յանցանաց՝ յանաչառ քո
յատենին, առաջի հրեշտակացն տեսողաց
և ամենայն սրբոց քոց. մի՛ պահանջեր յի-
նէն զանհամար պարտիս յանցանաց իմոց
և մի՛ դատապարտեր զմեղաւորս. այլ՝ ըստ
գթութեան քում ողորմութիւն արասցես
մեղուցեալ ծառայիս քո. փրկեա՛ զիս յան-
վախճան տանջանացն, և մի՛ փակեր զդուռն
արքայութեան քո, զի շնորհօք ողորմու-

թեանդ մինչ արժանապէս յառագաստ քո,
և ընդ սուրբ սիրողս քո վայելեցից զան-
սպառ բարիսն, և զանհատս՝ զանճառ՝ զերանե
լի լոյս Երրորդութեանդ ։

Բարեխօս առ քեզ ունիմ Տէր զսուրբ
Աստուածածինն Մարիամ, և զսուրբն Յով-
հաննէս Մկրտիչ · զսուրբ Ստեփաննոս նա-
խավկայն · զսուրբն Գրիգոր Լուսաւորիչ
և զսուրբ զԱռաքեալսն և զՄարգարէսն ·
զՄարտիրոսսն և զՎկայսն և զամենայն
սուրբս քո · լուր Տէր աղաչանաց նոցա, և
փրկեա զիս և ողորմեա ինձ · զի քեզ վայելէ
փառք, իշխանութիւն և պատիւ · այժմ և
միշտ և յաւիտեանս · ամէն ։

—-00000-—

## ԶԱՆԱԶԱՆ ՀԱՅՑՈՒԱԾՔ

Հայցուած շնորհաց Աղօթելոյ ։

Որ առատ ես յողորմութեան՝ պարգևիչ
բարեաց և շնորհաց, ամենակալ Աստուած
բարերար · լուր խնդրուածոյ իմոյ՝ յաղա-
չել իմ առ քեզ ։ Տուր ինձ զշնորհ վայելե-
չապէս աղօթելոյ առ քեզ՝ ջերմեռանդու-
թեամբ, անխռով մտօք, հաստատուն յու-
սով, որպէս զի արժանացայց ընդունել 'ի-

քէն զհայցուածս իմ բարիս , և զպիտոյս իմ վայելչականս . և երկեցն հանապազ ընդ-ես ամենազօր օգնութիւն և շնորհ քո , առաջնորդել ինձ վայելչապէս յայս անցաւոր կեանս մշտափոփոխ , ընդ փորձանօք՝ զայթակղութեամբ և վշտօք : Զի 'ի քէն է ամենայն բարի , և ամենայն տուրք բարեաց . և քո՛ է փառք և զօրութիւն . յաւիտենից յաւիտեանս . ամէն :

Հայցուած Հաւատոյ .

Որ անքննելին և անիմանալիդ ես յէութեան՝ 'ի վեր քան զամենայն միտս և ըղբանս . հաւատամ ճանաչեմ և խոստովանիմ Աստուած ամենակալ՝ ամենազօր՝ բարերար . Արարիչ՝ խնամօղ և պահօղ համայն եղելոց : Աղաչեմ զքեզ Տէր՝ յաւել ինձ զհաւատ քո սուրբ , և հաստատուն պահեա զիս 'ի ճշմարտութեան նորին , և 'ի սուրբ կրօնի քում , յոր շնորհօք քո կոչեցեր զիս՝ 'ի փըրկութիւն անձին իմոյ . որպէս զի բոլորով սրտիւ հաւատալով ճշմարտութեան քում և սուրբ Յայտնութեանց , 'ի քեզ միայն ապաւինեցայց , և կեցից յերկիւղի քում . և պահելով միշտ զօրէնս քո , և գործելով ըղ-

պատուիրանս քո՝ արժանացոյց երկնային և անանց խոստմանցդ անճառելեաց՝ 'ի Հան-դերձեալ կեանսն յաւիտենից, և խաղաղաւէտ կենցաղավարութեանն յայսմիկ աշխարՀի՝ որ լի է փորձանօք և գայթակղութեամբք, յորոց չէ Հնար ապրել առանց քոյ շնորՀաց և օգնութեան. զի դու ես աղբիւր բարեաց և քո է զօրութիւն և փառք. յաւիտ :

Հայցուած Յուսոյ :

Ամենակալ Աստուած յաւիտենական, որ ես միայն անանց բարի ճշմարիտ, և պարգևիչ բարեաց, կէտ կատարածի աշխարՀի, խնամող արարածոց, և ապաւէն անդրդուելի : Աղաչեմ զքեզ տպաւորեա 'ի Հոգիս ըզ-Յոյս քո միակ և անխախտ. զի 'ի քեզ միայն ապաւինեցայց 'ի բովանդակ կեանս իմ, և յամենայն վիճակի կենցաղոյս բազմափոփոխ, 'ի վիշտս և 'ի դժուարութիւնս աշխարՀիս, յուսալով միշտ 'ի զօրութիւն 'ի բարութիւն և յողորմածութիւն քո : Եւ որպէս խոստացար պաՀել 'ի խաղաղութեան՝ որ յուսայ 'ի քեզ. վասն որոյ աղաչեմ զքեզ տուր ինձ զշնորՀ և զօրութիւն. զի մի՛ տագնապեցայց 'ի Հոգոյ և 'ի վշտաց կենցաղոյս, այլ 'ի-

քեզ արկանելով զամենայն հոգս իմ, վաստակեցայց պարկեշտ աշխատանօք, և արդար միջոցօք, 'ի հայթայթանս վայելուչ պիտոյից կարեաց. խնդրելով նախ զարքայութիւն քո և զարդարութիւն. և յօժարական սրտիւ զուգակցելով քոյ սուրբ կամաց յամենայնի՝ զոր միանգամ յանհուն յիմաստութեան քում սահմանեսցես ինձ՝ յօգուտ և 'ի փրկութիւն. զի դու Տէր ողորմած ես և գթած. և քո են փառք յաւիտենից յաւիտեանս, ամէն:

Հայցուած Սիրոյ.

Գերարուն Տէր յաւիտենական՝ բարի և բարերար, յարաբուղխ աղբիւր անհատահոս շնորհաց. երանեալ բաշխող երանութեան՝ Աստուած բարեգութ. որ 'ի յարաշարժ սիրոյ շարժեալ՝ ստեղծեր զտիեզերս և զարարածս ամենայն. զոր և անփոփոխ սիրով խնամեալ պահես 'ի տուրս առատ շնորհաց. որ և 'ի վեր քան զամենայն հեղեր զսէր քո առ Մարդն, 'ի սքանչելի պատկեր քո յօրինեալ. և ես տուեալ 'ի մարդանալդ 'ի նորին փրկութիւն: Աղաչեմ զքեզ Տէր հեղ 'ի հոգիս զշնորհ սուրբ սիրոյ քո. զսէր

քո միայն անջինջ տպաւորեա՛ 'ի միտս իմ , և բորբոքեա՛ զսիրտ իմ եռանդեամբ սիրոյ քո . զի զքե՛զ միայն սիրեցից 'ի վեր քան զամենայն , յամենայն անձնէ իմմէ , և առաւել քան զանձն իմ . բերելով 'ի գործս իմ զներքին զգացուած սրտիս՝ 'ի յարարս պատուիրանաց քոց , և 'ի սէր ընկերին հաւասար անձին իմոյ . ցանկալով և առնելով նմա զբարիս առանց՝ խտրանաց . և ո՛չ տալով տեղի նախանձու և խեթից . և ո՛չ գործելով նմա զանիրաւութիւնս և զրկանս՝ իւիք եղանակաւ , թէ յանձն նորա , թէ 'ի համբաւն , և թէ 'ի ստացուածս . և ուղղեա՛ զկամս իմ յամենայնի ցանկալ զբարի և զօգուտն ընկերիս . և միով անխտիր սիրով շաղկապել ընդ ամենայն մարդիկ . և լինել անյիշաչար և ներող յանցուածոց և չարեաց նոցին առ իս՝ վասն սիրոյ քո և փառաց . և գործովք բարեաց արժանի լինել յաւիտենական Արքյդ . զի դու միայն ես Տէր երանական , և քո են փառք յաւիտեանս . ամէն :

Հայցուած Բարեմտութեան :

Աստուա՛ծ ամենատես և ամենագէտ որում յայտնի է ամենայն , և չէ ինչ ծածուկ .

որ հայիս 'ի միտս, քննես զկամս, և տեսանես զսիրտս մարդկան քան զգործս նոցա. ուղղեա զմիտս իմ 'ի բարին և 'ի հաճոյս քո լինել. և մի յօգուտ մարմնոյս և 'ի կատարումըն թիւր բղձից իմոց բերիլ, այլ 'ի պատուիրանս քո յամենայն ժամ. արա զօգուտն հոգւոյս միայն նպատակ իմ, և զամենայն շարժմունս մտացս լինել ըստ օրինաց քոց։ Եւ շնորհեա ինձ լինել բարեմիտ յամենայն վարս և յարարս իմ առ մարդիկ. և ունիլ յամենայնի զկամս և զխոսումն բարի՝ առանց կեղծման և պատրանաց. և զի մի երբեք մտեցայց 'ի խոսումն նենգութեան. անիրաւութեան և զրկանաց ուրուք յընկերաց թէ սիրելեաց և թէ ատելեաց իմոց։ Այլ զի վասն հողեղէն բնութեանս, և վասն ապականաբար պատուիրանազանցութեան՝ տըկար և անզօր է իմս կարողութիւն և ինքնակամ ազատութիւն իմ կարօտի քում շնորհաց յուղղութիւն մտացս, 'ի տնօրինել զվարս իմ ըստ հաճոյից և օրինաց քոց, վասն որոյ աղաչանօք հայցեմ հեղ 'ի միտս իմ զշնորհս քո, և ծագեա 'ի նա զլոյս քո իմաստութեան և բարութեան, որպէս զի լուսաւորեալ սուրբ օրինօք քո, և զօրացեալ օգնութեամբ

քով՝ լիցի միշտ բարի, և ուղղեալ կարգեսցէ զկեանս և զգործս իմ 'ի բարի. 'ի փառս անհուն բարութեան քո. ամէն ։

Հայցուած Բարեկամութեան ։

Որ ես միայն բարի, և ինքնիշխան կամօք բարութեան քո ստեղծեալ զարարածս՝ խնամես առատ պարգևօք բարեաց. աղաչեմ զքեզ յարդարեա՛ զկամս իմ շնորհօք բարութեան, զի սուրբ կամաց քոյ հետևեսցէ միշտ, և ցանկասցի հաճոյից քոյ և օրինապահութեան. և ուղղեա՛ զշահասէր կամս իմ՝ հանապազ բաղձալ բարւոյ ընկերին առանց նախանձու և չարակնութեան. և նըպաստել զարգացման նորին և յառաջադիմութեան յամենայն ազգս բարեաց՝ հոգևոր և մարմնաւոր ։ Եւ զի պատրանօք նախաչարին՝ ազատութիւն կամացս անկեալ է ընդ խռովայոյզ իշխանութեամբ անկարգ կրից, և չէ բաւական ինքեան կառավարութեան. ուստի աղաչեմ զքեզ Տէր՝ շնորհեա՛ ակար կամաց կարօտաւորիս՝ զօգնութիւն քոյդ շնորհաց 'ի լինել բարեկամ և բարեատենչ առ ընկերս իմ համօրէն, և վարել ընդ նոսին անկեղծութեամբ և մաքուր սրտիւ, և մի

պատիր և սուտ երևմամբ կամ գնայիւք . և զի յօժարակամ կատարեսցէ զխոստմունս իմ վայելչականս . և լեզու իմ խօսեսցի զխոր-հուրդս սրտիս , և գործք իմ ամենայն լիցին զուգակից բարեսէր կամաց յամենայնի . որպէս զի արժանաւոր գտայց սուրբ կոչմանդ , 'ի փառս քո . ամէն :

Հայցուած ուղիղ Բանի .

Յաւիտենական Բան Ճշմարտութեան և օրինաց , մշտնջենաւոր Լոյս արդարութեան և ուղղութեան . որ 'ի վեր քան զամենայն ծիրս շնորհաց քոց աստուածային՝ պարգևեալ մարդոյն , մեծաւ բարերարութեամբ տպաւորեալ դրոշմեցեր 'ի հոգի նորին զնշոյլ աստուածային բանի քո՝ իբրև կնիք գերաբուն պատկերի քո , 'ի լինել նմա իշխան ինքեան և աշխարհի՝ նովին ուղիղ վարելով 'ի գերակայ օրէնս քո , 'ի մշտնջենաւորել յերանութեան : Իսկ 'ի դրդմանէ փորձողին ատահակեալ հնազանդութեան օրինաց քոց , կորոյս զուղղութիւն բանին , և բարձաւ անվրդով ինքնիշխանութիւնն , ներքոյ անկեալ տարփական կրից ըմբոստացելոց , յորոց 'ի խաւարութենէ համապատ 'ի տագնապի կայ , և

թիւր օրինօք վարեալ՝ ընդ մեզօք գայ ։ Վասն որոյ աղաչեմ զքեզ Աստուած գթութեան՝ ծագեա՛ 'ի բան իմ զլոյս ուղղութեան, զի արդար օրինաց քոց հետեւեցայց. և զի յամենայն արարս իմ ուղիղ բանիւ վարեցայց՝ խոհեմութեամբ և զգօնութեամբ, առանց վրդովելոյ 'ի խռովեալ կրից, յանկարգ ցանկութեանց, և 'ի փորձանաց կենցաղոյս ։ Զու Տէր եդեր առաջի մարդոյն զբարի, և ետուր զկամս ազատս ընտրել զհաճոյն. կարգեալ զվարձս և զպատիժս ատեաց և հա՛նդերձելոց. վասն ձգելոյ զնա 'ի բարին, և հնազանդելոյ օրինաց քոց ։ Իսկ 'ի թիւրել մարդոյն յուղիղ բանէ օրինաց քոց՝ լինի չար և պատահէ չարեաց ։ Վասն որոյ աղաչեմ զքեզ ուսո՛ ինձ զօրէնս քո, և տո՛ւր ինձ զխոհել զի մեղքն են մեծագոյն չարիք, զի յանցանք և աղէտք են միշտ զուգակիցք. և զի խիղճ անդորր և յոյս շնորհաց քոց՝ է մի միա՛յն երջանկութիւն հասանելի 'ի կեանս յայս ։ Շնորհեա՛ ինձ Տէր զգօնութիւն և զօրութիւն՝ հրաժարել 'ի փորձանաց հեշտութեանց աշխարհիս, և հետեւել օրինաց քոց, որ է միայն օգուտ իմ ստոյգ, և առիթ անանց երջանկութեան.

որում սպասեմ արժանանալ շնորհօք ողորմութեան քո. և գոհանալով փառաւորել ըզՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին. այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն:

Հայցուած Երկիւղի Աստուծոյ.

Աստուած ամենազօր՝ որոյ մեծութիւնդ անչափ է, արդարութիւնդ ահաւոր, և բարերարութիւնդ անհուն առ երկիւղածս քո. աղաչեմ զքեզ տպաւորեա՛ 'ի հոգիս զերկիւղ քո՝ զի 'ի քէն միայն երկնչիցիմ, և սոսկացայց 'ի գործելոյ զմեղս և 'ի պատուիրանազանցութենէ. Տնկեա՛ Տէր զերկիւղ քո 'ի սրտի իմում, զի նովաւ իմաստնացեալ կարողացայց հեռանալ 'ի չարէ, և չափաւորեալ բարեկարգել զցանկութիւնս և ըզկիրս իմ խռովեալս. և զի ունելով հաստատ 'ի մտի զերկիւղ ահեղ դատաստանի և անվերջ պատուհասից քոց՝ դարձայց 'ի չար գնացից իմոց և յամպարիշտ վարուց, 'ի գործոց անիրաւութեան և յամենայն անօրէնութենէ. և գնայց միշտ 'ի շաւիղս պատուիրանաց քոց և սուրբ օրինացդ արդարութեան. զի դու միայն ես Աստուած հզօր և ահաւոր, տուիչ կենաց և մահու. և քո

են փառք և զօրութիւն. յաւիտեանս յաւիտենից. ամէն :

Հայցուած խոնարհութ՚ան :

Յիսուս Աստուած բարերար, որ քոյին կամաւ խոնարհեցար ՚ի յաւիտենական փառաց մեծվայելչութեան, առեր զմարմին մարդկային, բերելով յանձին զխոնարհութիւն գերբնական ՚ի փրկութիւն և յօրինակ մեզ : Աղաչեմ զքեզ տուր ինձ զոգի խոնարհութեան, և զշնորհ նմանող և հետևող լինելոյ քոյին գերագոյն օրինակի : Սանձեա զհպարտութիւն և զունապարծութիւն իմ՝ քոյին հեզութեան շնորհօք, և հեռացո ՚ի մտաց իմոց զամենայն խորհուրդս հպարտանաց, փառասիրութեան, պարծանաց և սնոտի կարծեաց չնչին կարողութեանց և արժանեացն իմոց. զի մի ըմբոստացայց և ստահակեցայց ՚ի ժպրհութիւն ՚ի յանդգնութիւն և ՚ի յառելութիւն ընկերացն իմոց : Ուսո ինձ զտկարութիւն իմ. ՚ի գործոց մեղաց իմոց և յանցուածոցս. որպէս զի ՚ի չափու ունիցիմ զանձն իմ սխալական : Շնորհեա ինձ զերկայնամտութիւն և զհամբերութիւն. զի տարայց անարգանաց

զամենայն անարգանս՝ զնախատինս և զդր-կանս վնասուց , որք լինիցին ինձ յընկերացս և յատելեացս . և զի փոխարինեցից նոցա զօրհնութիւն , զսէր և զբարութիւնս կարեւորս : Եւ զօրացո՛ զիս , զի մի՛ գայթակղեցայց 'ի գոլատանաց մարդկան . և մի՛ յօժարեցայց 'ի մեղս և յանօրէնութիւնս՝ շարժեալ 'ի շողոքորթանաց : Տպաւորեա՛ Տէր 'ի սրտի իմում զսէր խոնարհութեան , զի վայել չապէս կենցաղավարեալ , շնորհօք քո բարձրացայց 'ի փառս քո , և հասայց խոստացեալ վարձուցդ երանութեան , զի դու միայն ես սուրբ և բարի . և քո են փառք յաւիտեանս . ամէն :

Հայցուած Հեզութեան :

Տէր Աստուած գթութեան և մխիթարութեան . Ներողութեան և երկայնմտութեան . Հայեա՛ց 'ի տագնապեալ վիճակ ակար բնութեանս , վրդովեալ և ամբոխեալ հանապազ ախտիւք բարկութեան և զայրացման՝ ընդամենայն դիպուածս դժկամակութեան իմոյ . որով խռովի խաղաղութիւն մտացս , և անձն իմ բերի 'ի գործս անարգականս՝ անվայելուչս և 'ի վնասակարս՝ անձին իմոյ և

ընկերացս ։ Ներեա՛ ինձ աղաչեմ զանցեալ յանցուածս զայրացկոտ բնութեանս, և շնորհեա՛ ինձ զոգի հեզութեան և խաղաղութեան. որպէս զի յայսմհետէ ունիցիմ զբարոյս և զբնութիւն քաղցրութեան՝ ներողական և հանդուրժական ։ Եւ տուր ինձ զշնորհս զի հանապազ անխռով և անդորր լիցին միտք իմ. անայլ՝ հաճոյական և ողորմածական լիցին բարք իմ առ ամենայն մարդիկ. և բովանդակ կենցաղավարութիւն իմ լիցի քրիստոնէավայել և խաղաղական. ՚ի փառս քո ամէն ։

Հայցուած համբերութեան ։

Տէր Աստուած փրկութեան, որ ՚ի մեր քան զբնութիւն համբերութեամբ կրեցեր զնախատինս՝ զչարչարանս և զխաչ արարիչ գոլով տիեզերացս, օրինակ եղեր մեզ և զօրավիգն. խրատ տալով մեզ համբերել մինչ խաչա ՚ի մերահաս նեղութիւնս աշխարհիս ։ Աստի աղաչեմ զքեզ Տէր, շնորհեա՛ ինձ զհամբերութիւն արիութեամբ տանել վշտաց և նեղութեանց կենցաղոյս. և անտրտունջ ոգւով հանդուրժել փորձանաց ամենայն զոր հաճեսցիս ածել յիմ վերայ, յօգուտ իմ անիմանալի ։ Եւ արա՛ Տէր զի

փորձանք և դէպք կենցաղոյս՝ շարժեսցես զիս ես քան զես 'ի սէր քո և յապաւինութիւն, և զի մի ինչ անջատեսցէ զիս 'ի սիրոյ և 'ի յուսոյ քումմէ. և զի մերահաս չարիք իմ և վիշտք՝ լիցին ինձ մանաւանդ առիթ անարգելոյ զիրս աշխարհայինս, և ուղղելոյ զախորժակս իմ. և զի խաղաղ սրտիւ համբերեսցից անվրդով՝ անարգանաց, և վնասուց որք լինիցին ինձ 'ի մարդկանէ. որպէս զի մաքուր և անդորր սրտիւ, երկրպագից ոգւով և քրիստոնէավայել կրօնիւք՝ կատարեալ զառկաւժամանակեայ ընթացս անցաւոր կենացս, հանգեայց 'ի տաղնապից ընդ համբերողս և սուրբս քո. ամէն։

Հայցուած Ողորմածութեան.

Տէր իմ և փրկիչ Յիսուս Քրիստոս, Աստուած ողորմութեան և գթութեան. որ ողորմութեամբ քով արարեր զարարածս ամենայն, և խնամես բարերարութեամբ. ծագելով զարև 'ի վերայ արդարոց և մեղաւորաց. և անսահման երկայնամտութեամբ առնես զողորմութիւն համօրէն յանցաւոր մարդկան՝ առանց խտրութեան։ Աղաչեմ զքեզ տպաւորեա 'ի հոգիս զշնորհ ողոր-

մածութեան, որպէս զի հանապազ յօժար սրտիւ օգնական և նպաստամատոյց եղէց կարօտաւորաց յամենայն պէտս նոցա ըստ չափու կարեացս՝ գործով և բանիւ. ո՛չ ՚ի պարծանս անձին փառաց իմոց, այլ վասն փառաց սուրբ անուան քո. ամէն.

Հայցուած Զգաստութեան.

Աստուա՛ծ ամենատես, որ զամենայն ինչ բարի արարեր, և եդեր ՚ի վայելս մարդկան, տո՛ւր ինձ աղաչեմ զգաստութիւն՝ զի չափաւորապէս և վայելչօրէն վարեցից զպարգևս քո ՚ի պէտս յոր դու կարգեցեր. և տո՛ւր ինձ զխոհեմութիւն և զզօրութիւն չափաւորելոյ զանձն իմ յուտելիս, ՚ի յըմպելիս, ՚ի հանդերձս, ՚ի բըբօսանս և ՚ի հեշտութիւնս, զի մի տուելուցուն քան զվայելչականն, և զի մի հագայայց զպէտս մարմնոյս առաւել քան զհոգւոյս. այլ դի՛ր զախորժակս իմ ՚ի չափ ուղիղ բանի՛ և ՚ի շնորհս քո, զի քոյ սուրբ հաճոյից և օրինաց եղէց միշտ հետևող, յօգուտ անձին իմոյ և ՚ի փառս քո. ամէն.

Հայցուած Խնամոց Հոգւոյ.

Աստուա՛ծ ամենաբարի և ողորմած, որ

պարգևեսցես մարդոյն զհոգի կենդանի և անմահ՝ 'ի սոյն անքննելին պատկերի քո, զորդարձեալ երկնային շնորհօք․ աղաչեմ զքեզ Տէր՝ հեզ հանապազ 'ի հոգիս զշնորհ իմաստութեան, զի ծանեայց խոկալով զբարին և զչար, և ընտրեցից զբարին և զօգուտն հոգւոյս՝ քան զմարմնոյս, ունելով միշտ 'ի միտի զաւուր հատուցման քո՝ ըստ արժանեաց իւրաքանչիւր գործոց: Ազատեա և զերծո զիս 'ի վտանգից և 'ի փորձանաց աշխարհիս, զի մի պատրեալ անկայց 'ի հեշտանս՝ 'ի զեղխութիւնս և յունայնութիւնս: Օրհնեա զհոգիս զի տաղնապք՝ երկիւղև դողիւք մարդկան, մի կարասցեն երբէք խախտել և վրդովել զիս յօրինաց և 'ի շաւղաց քոց, յորս հանապազ հաստատուն պահեսցես զիս 'ի փառս քո․ ամէն:

Հայցուած Բարեպաշտութեան:

Տէր զօրութեանց Աստուած ամենաբարի և միակ ապաւինութիւն հզօր և անպատրուակ․ աղաչեմ զքեզ բորբոքեա 'ի սրտի իմում զսէր քո մինչև ճշմարիտ և զբարեպաշտութիւն, զի հրաժարեցայց յընդունայնու-

թեանց անցաւոր կենացս , և Հաստատուն կացից 'ի միակ ճշմարիտ կրօնի քում , և յօրէնս բարութեան և առաքինութեանց մինչև ցկատարումն պայմանեալ ամացս ։ Եդիցէ շնորհ և զօրութիւն քո 'ի վերայ տկար և յանցաւոր բնութեանս , որպէս զի ըստ սուրբ կամաց քոց միշտ կենցաղավարեալ գործովք բարութեան , արժանացայց փրկութեան և կենացն յաւիտենից . 'ի փառս սուրբ անուան քո . որ ես օրհնեալ յաւիտեանս . ամէն ։

Հայցուած բարւոք վարելոյ զժամանակ ։

Աստուած բարեգութ և ողորմած , որ առատ բարութեամբ քով երկայնամիտ և ներող ես մշտանջենաւոր յանցուածոց իմոց և ոչ հատուցանես ինձ ըստ չար գործոց անօրէնութեանցս , այլ յաւելուս ինձ զժամանակ կենաց և զպարգևս բարեաց , զի դառնայցեմ 'ի չարութեանցս՝ 'ի փրկութիւն անձին իմոյ ։ Աղաչեմ զքեզ Տէր զթած , շնորհեա՛ ինձ զխմաստութիւն և զշնորհ բարւոք վարելոյ զժամանակ իմ , զի աշխատեցայց 'ի գործս բարիս , և ապաշաւեցայց յարարածոցս մեղաց ։ Դարձո՛ զիս

յամենայն մնոտի պատրանաց և 'ի գրօսանաց աշխարհիս . զի մի՛ վատնեսցի հոգիս 'ի կորուստ յաւիտենական ։ Շնորհեա՛ ինձ զգօնութիւն և զզօրութիւն գնալ միշտ 'ի ճանապարհս իմաստութեան և առաքինութեան , վայելուչ կոչմանս իմոյ և վիճակի . հանապազորդելով 'ի բարեպաշտութեան և 'ի սուրբ կրօնի քում, լինել արդար և ողորմած յամենայն գործս իմ . և պարկեշտ աշխատութեամբ և արդար միջոցօք՝ վաստակել հանապազ 'ի հայթայթանս ապրուստ կենացս , առանց անիրաւելոյ և զրկելոյ ումեք . բաւականալով և գոհանալով ընդ պարգեւս քո՝ յարդար վաստակոց իմոց և 'ի բարութենէ քումմէ . որպէս զի խաղաղութեամբ կենցաղավարեալ աստ , արժանի եղէց վերին երանութեանդ , յանանց կեանս անժամանակ յաւիտենից . ամէն ։

Հայցուած Բարերանութեան ։

Որ օրհնես զայնոսիկ ոյք օրհնեն զքեզ Տէր , աղաչեմ զքեզ պարգեւեա՛ ինձ զխօսս շնորհալիս , զի հանապազ խօսեցայց զբարի . և մի՛ երբէք ելցեն 'ի բերանոյս բանք և խօսք ստութեան , բամբասանաց և անարգանաց ։

Դիր պահապան շրթանց իմոց․ զի մի մեղիցէ լեզու իմ, և մի խօսեցի չար զընկերէ իմմէ ։ Այլ շարժեա զլեզուս ՚ի բարեբանել զքեզ և ուսուցանել ամենեցուն զնոյն , և խօսել միշտ զճշմարտութիւն, զխաղաղութիւն , բղխեալ և զհամբաւ բարի զընկերէ իմմէ․ և տուր ինձ զգերագոյն շնորհ օրհնելոյ զանիծիչս իմ, և բարեբանելոյ զատելեան իմ, որպէս զի արժանացայց երանական օրհնութեան քո , աստ և ՚ի հանդերձեալ աշխարհին․ ամէն ։

Հայցուած Սիրոյ Ընկերի ․

Աստուած մարդասէր և բարերար , որ պատուիրեցեր սիրել զընկերն իբրև զանձն․ և ՚ի մարդանալդ ետուր մեզ օրինակ զերագոյն սիրոյ․ աղաչեմ զքեզ տուր ինձ զշնորհ և զկարողութիւն պահելոյ և առնելոյ զայս պատուիրան քո մեծ , զի արժանի գտայց փոխարինի սիրոյ քո ։ Ես զսէրս իմ բարի ցանկութեամբ առ ամենայն մարդիկ․ զի վարեցայց առ ամենեսեան անոյշ և հաճոյական վարուք ։ Եւ տուր ինձ յօժարութիւն ներելոյ ամենից ՚ի պէտս նոցա ․ ըստ չափու կարեացս՝ բանիւ և արդեամբք ․

և զի մի՛ երբէք նախանձեցայց 'ի վերայ բարւոյ և յառաջադիմութեան ընկերացս. այլ մանաւանդ եղբայրութեամբ օգնական եղէց յամենայն կարիս. Հեռաւոր լինելով քում գերագանց սիրոյ, սիրելով զընկերս, 'ի փառս քո. ամէն:

Հայցուած Աշխատասիրութեան.

Աստուած ամենախնամ, և մշտագործ բարերար. որ խնայեալ 'ի յանցանս մարդոյն կարգեցեր զնա գործել զերկիր, և 'ի վաստակոց իւրոց հոգալ զպէտս մարմնոյն, և փառաւորել զանհուն բարութիւն ողորմածութեան քո. Աղաչեմ զքեզ Տէր, տո՛ւր ինձ զօրութիւն շնորհաց՝ կարող լինել միշտ անտրտունջ կատարել զպատուիրանս քո սուրբ. և մտադիր հոգածութեամբ, յօժարութեամբ սրտի, և զուարթութեամբ, աշխատիլ 'ի գործս արդարութեան. և հայթայթել զպիտոյս կարեացն իմոց և որոց ինձն են յանձն եղեալ 'ի քումմէ անհաս տեսչութենէ: Որպ՛ս զի վաստակելով յաստիս՝ յոր ինչ կարգեցեր զիս քոյով նախախնամութեամբ, արժանի եղէց հանգչիլ 'ի վաստակոց յարքայութեան քում, շնորհօք ողորմութեան քո. ամէն:

Հայցուած Օգնութեան Աստուծոյ ։

Տէր Աստուած Հզօր, որ ամենայն ինչ 'ի քէն լինի, և ո՛չինչ առանց քոյ սուրբ և բարի կամաց. աղաչեմ զքեզ նայեա՛ց 'ի տկարութիւն սխալական բնութեանս, և պարգևեա՛ ինձ զամենազօր օգնութիւն շնորհաց քոց յամենայն գործս և յարարս իմ բարիս, զի չէ ինձ հնար առնել ինչ բարի առանց քոյդ օգնութեան, որ հակեալ ես հանապազ 'ի չարիս և յանիրաւութիւնս, յորոց դու միայն կարող ես զերծուցանել զիս և հեռացուցանել. զի 'ի քէն միայն են ամենայն բարիք, և զօրութիւն բարեգործութեան. և քո են փառք և պատիւ, յաւիտենից յաւիտեանս. ամէն ։

Հայցուած Երախտագիտութեան ։

Տէր Աստուած բարեխնամ, ո՛ր անչափ բարերարութեամբ քով խնամես հանապազ զպէտս յանցաւոր և բազմախառն մարդկան, և ո՛չ կարօտիս փառաբանութեան նոցին, այլ կամիս զի ծանիցեն և խոստովանիցեն զբարիսն ամենայն առ 'ի քէն, վասն 'ի չափու ունելոյ զանձինս և 'ի քեզ ապաւինելոյ ։ Աղաչեմ Տէր շնորհեա՛ ինձ զոգի

երախտագիտութեան, զի ծանեայց և խոստովանեցայց Հանապազ զաւրս բարեաց քոց առ իս. և զբարերարութիւնս՝ զշնորհս և զերախտիս բարերարայն իմոյ. Գոհանամ զքէն Տէր վասն բարեացն արարեալ ինձ յընկերաց իմոց. որոց զի չունիմ ես վճարել զարժանին փոխարէն, աղաչեմ զքեզ դու վճարեսցես նոցա յաւետ բարութեանց և 'ի շնորհաց քոց, բազմապատիկ փոխարինութեամբ կենաց և բարեմասնութեանց. և եղիցի Հանապազ 'ի վերայ նոցա և զաւակաց նոցա՝ Հզօր և առատաբաշխ աջ քո, 'ի լնուլ զնոսա բարեօք, աստ և 'ի կեանսն յաւիտենից. ամէն.

—00000—

Հայցուած Պահուց և. Աղուհացին.

Աստուած իմ և փրկիչ Յիսուս Քրիստոս, որ 'ի սկզբանէ եդեր զօրէնս Պահուց նախահարցն մերոց, 'ի նշան հնազանդութեան ամենակալ Տէրութեան քո. որք ոչ պահեալ անկան 'ի շնորհաց քոց և 'ի փառաց, ստրկացան ախտից մարմնոյն և աննուաճելի կրից ստամբակելոց. իսկ ապա զթութեամբդ քով եկեալ 'ի վերանորոգու-

թիւն բնութեան մարդոյ , 'ի նոյն օրինացդ սկիզբն արարեր անօրէնութեանց քոց , պահելով զաւուրս քառասուն՝ յօրինակ մեզ , Աղաչեմ զքեզ Տէր տուր ինձ զյօժարութիւն և զզօրութիւն պահելոյ , և հրաժարելոյ յախորժակաց իմոց ամենայն , 'ի նուաճումն բռնացեալ կրից և ախտից մարմնոյս . զի ճնշեսցի մարմին իմ ընդ հոգւովս , և հանապազ հնազանդեցայց աստուածային կամաց քոց և պատուիրանաց , 'ի փրկութիւն անձին իմոյ , և 'ի փառս քո . ամէն :

Հայցուած ընթերցման Սուրբ Գրոց :

Ամենախնամ Տէր բազումողորմ , որ 'ի վերայ անչափ բարերարութեանց քոց , պարգևեցեր մարդկան զօրէնս ճշմարտութեան , դրոշմեալ յԱստուածաշունչ կտակարանս քո , որպէս զի 'ի նոցունց ուսեալ զպատուիրանս սուրբ կամաց քոց , առնիցեմք միշտ զհաճոյս քո 'ի փրկութիւն և յօգուտ անձանց մերոց . Աղաչեմ զքեզ Տէր ծագեա 'ի խաւարեալ հոգիս զլոյս իմաստութեան և զշնորհս հզօր Հոգւոյդ նորոգողի . և տպաւորեա զմիտս իմ աստուածային երկիւղիւ և ջերմեռանդութեամբ , զի ըստ արժանւոյն

ընթերցայց գիտսին՝ բարեպաշտութեամբ հաւատով և յարգանօք. և ունկնդիր եղէց յօժարութեամբ և սիրով նոցին պարունակեալ բանիցն ամենայն. Եւ տուր ինձ զշնորհ աներկմիտ հաւատով հաւատալ և ընդունել զճշմարտութիւն բովանդակելոց նոցին, և անխախտ յուսով ապաւինել 'ի խոստացեալ բարիսն, 'ի շնորհս և 'ի կեանս յաւիտենից. շնորհօք հոգւոյդ սրբոյ. որում փառք յաւիտենից յաւիտեանս. ամէն.

### Հայցուած Բարի Մահուան.

Աստուած մեծ և հզօր, Տէր կենաց և մահու, որ սահմանեցեր մարդոյն մեռանել 'ի պատուհաս յանցուածոյն. աղաչեմ զքեզ տպաւորեա 'ի միտս իմում զվախճան մարմնոյս և զանցաւորութիւն աշխարհիս, որպէս զի հեռացայց 'ի զուկամմանէ տղցալեացս և յանձնահաճութեանց իմոց. և ուղղեցից զվարս իմ յօրէնս քո, զի մի յանկարծուստ և յանպատրաստից հասանիցի ինձ մեռանել տուանց ապաշխարութեան և բարեգործութեանց. Օրայն 'ի քեզ զհաւատ՝ զյոյս և զսէր իմ, զի 'ի վերջին պահու կենդանութեանս՝ մի լքանիցիմ 'ի յուսոյ քումմէ.

և զի անէրկիւղ և յօժար սրտիւ ընկալայց զմահ, և ելից յաշխարհէ. և անբաւ շնորհօք քո և զթութեամբ արա զիս արժանի անմահ կենացդ յաւիտենից և խոստացեալ երանութեանն. և պահեա յողորմութեան և 'ի շնորհս քո զիմն ամենայն, զի դու ես կեանք և ողորմութիւն. և քո են փառք յաւիտենից յաւիտեանս. ամէն.

Աղօթք յաւուր Ծննդեան.

Աստուած ամենակալ, արարիչ և պահպանիչ ամենայն արարածոց, որ քոյին օժնեալ կամօք սքանչելապէս ստեղծեալ կազմեցեր զիս, և նախախնամութեամբ քով մեծաւ պահեցեր յօրէ ծննդեան իմոյ մինչև ցայսօր, լցուցանելով զամենայն պէտս իմ. Օրհնեմ և փառաւորեմ զանբաւ գթութիւն քո Տէր երկնաւոր, և գոհանամ զքէն. շնորհեա յաւելուլ ինձ զժամանակ կենացս, զի ապաշխարեցից 'ի գործեալ յանցանացս, և վարեցից զմնացեալ աւուրս իմ բարեգործութեամբք և ըստ օրինաց քոց, աստուածահաճոյ և զգաստ վարուք և բարեպաշտութեամբ, 'ի փառս քո, 'ի փրկութիւն անձին իմոյ, 'ի մխիթարութիւն Ծնո-

դասս, 'ի հաճոյս և յօգուտ Եղբարցս և
ընդհանուր ընկերացս ։ Եւ որպէս սքան-
չելեօք քովք յասմիկ աւուր հաներ զիս
յարգանդէ Մօր իմոյ՝ կեալ յաշխարհիս
յայսմիկ զատկաւ ժամանակս, նոյնպէս և յա-
ւուրս վերջնում հանցես զիս յարգանդէ
երկրի՝ կեալ յարքայութեան քում զանման
կեանս յաւիտենից, 'ի լոյս շնորհաց քոց ·
զի դու ես Տէր իմ և Աստուած, փրկիչ
իմ և ապաւէն. և յօգնութիւն շնորհաց քոց
ապաւինեալ մնամ այժմ և միշտ և յաւի-
տեանս. ամէն ։

Օրական Աղօթք Պատանեաց ։

Տէր Աստուած իմ հզօր և գթած,
որ անչափ ողորմութեամբ քով արարեր զիս
յոչնչէ 'ի պատկեր քո անիմանալի, և
պարգևօք բարեացդ խնամես զամենայն պէտս
իմ. բոլորով սրտիւ իմով գոհանամ զքէն
վասն ամենայնի զոր արարեր ինձ 'ի ծննդենէ
իմմէ մինչև ցայսօր ։ Այլ զի վասն յանց-
ուածոց անկեալեմ յապականութիւն և 'ի
բնութիւն ակար և սխալական, աղաչեմ ըզ-
քեզ պարգևեա ինձ զշնորհս քո և զիմաս-
տութիւն, և զզօրութիւն օգնութեան քո,

որպէս զի գնայցես հանապազ 'ի շաւիղս փըր-
կարար պատուիրանաց քոց, և համակերպ
եղէց հաճոյից քոց և օրինաց, զի փրկեցայց 'ի
վտանգից և 'ի փորձանաց հոգւոյ և մարմնոյ.
և զի հեռացայց յամենայն սխալանաց յի-
մարութեան, 'ի յախտից կամակորութեան, և
յանկարգ ցանկութեանց և 'ի հաճոյից լնոց։
Ազդեա՛ 'ի հոգիս զերկիւղ քո սոսկալի, զի
կեցից սրբութեամբ և արդարութեամբ,
ունելով զքեզ միշտ առաջի մտաց։ Յօժա-
րեցո՛ զկամս իմ 'ի բարին և 'ի հաճոյս քո,
և ուղղեա՛ առ զբան իմ յամենայնի զվայե-
լուչն բնութեն։ Մի՛ ածիցես 'ի վերայ
անձին իմ զփորձութիւնս և զորոգայթս
աշխարհիս, զի մի՛ երբէք խոտորեցայց յօ-
րինաց քոց և 'ի շաւղաց բարութեան։ Տն-
կեալ բողբոջեա՛ և զարգացո՛ 'ի սրտի իմում
զամենայն սերմանս առաքինութեանց, զի 'նո-
քօք, և 'ի 'նոսին վարեցից զամենայն ա-
ւուրս կենաց իմոց։ Շնորհեսցե՛ս ինձ լի-
'նել միշտ խոնարհ՝ հեզ և համեստ 'ի բարս,
բարի և մաքուր 'ի խորհուրդս՝ 'ի բանս և
'ի գործս. Ճշմարիտ և անվնաս 'ի խօսս.
հաւատարիմ և ժրաջան 'ի կատարումն պար-
տուց պաշտօնի և վիճակի կենացս, յոր կար-

գեցերն զիս . Արդար՝ բարեմիտ՝ իրաւարար և ողորմած յամենայն գործս իմ և յարարս առ ընկերս . մեծարու և հնազանդ ՝Ծնո-ղացն իմոց և մեծաւորաց . բարեբարոյ՝ քաղցրակենցաղ և հաճոյական առ ամենայն մարդիկ . և յօժար առնել ամենեցուն՝ որ-պէս կամիմ զի արասցեն ինձ . Քոյով անհուն խնամովք հոգա՛ զամենայն պէտս հոգւոյ և մարմնոյ իմոյ . և արա՛ զիս ՚ի քեզ յուսալ և ապաւինել յամենայնի . և տո՛ւր ինձ գոհանալ միշտ զքէն վասն ամենայն պարգևացդ առ իս . և բաւարարեալ սրտիւ շատանալ ընդ վիճակ իմ և հանգամանս , Հեռացո՛ զիս ՚ի ծուլութենէ և ՚ի պարա-պութենէ . զերծո՛ զիս ՚ի չար ընկերաց , ՚ի չար օրինակաց , և յամենայն վտանգից և ՚ի փորձութեանց , Եւ ընկա՛լ զհայցուածս իմ վասն Հօր և Մօր . Եղբարց և Քերց իմոց . ամենայն ընտանեաց և բարեկամաց . և վասն ամենայն մարդկան . և յիշեա՛ զա-մենեսեան յողորմութեան քում , և պար-գևեա՛ ամենեցուն զբարիս առատապէս , աստ՝ և ՚ի կեանս յաւիտենից . զի քո են փառք պատիւ և զօրութիւն , յաւիտենից յաւի-տեանս . ամէն ,

Հայցուած բարեաց կ՚նցաղոյս և բաւարարեալ վիճակի ․

Դու Տէր որ գիտես և լնուս զպէտս մեր տառապեալս , և խոստացար որոց խնդրեն զարքայութիւն քո և զարդարութիւն՝ յաւելուլ նոցա և զամենայն պէտս կարեաց մարմնոյս ․ տուր ինձ աղաչեմ զքեզ զողջութիւն և զկարողութիւն աշխատելոյ զպէտս իմ արդար վաստակով , և օրհնեա զերկս իմ և զջանս բարիս ․ զի ցորքան կենդանի իցեմ հոգացոյց զուարճութեամբ զկարիս իմ և իմոց՝ բոլով օգնականութեամբ ․ Նաև արա զիս լինել գոհ և բաւարարեալ ընդ վիճակ իմ յոր հաճեցիր կարգել զիս ․ Պարգևեա ինձ զկար խնամութեան զի մի աջողուածք մերժեսցեն զիս 'ի քէն ․ և մի չաջողուածք շարժեսցեն զիս տրտնջալ զանիմանալի տնօրէնութեանց և բաշխուածոց առ մարդիկ ․ որ միայն գիտես զոր առնես , և օրհնեալ են կամք քո յամենայնի ․ յաւիտենից յաւիտեանս ․ ամէն ․

Հայցուած զապէլոյ գՅարկութիւն ․

Որ գթած ես և երկայնամիտ առ յանցուածս մարդկան , տուր ինձ զոգի Հեզութեան և անդորրութեան՝ զի մի երբէք ամ-

բոխեցոյց 'ի կռեց բարկութեան, և մի լի-
ցի ինձ խռովել 'ի դժկամակ պատահմանց
և 'ի յանցուածոց ընկերին. փարատեա յի-
նէն զդժնեայ և զհակառակող բնաւորութիւն
բարուց. մի թոյլ տար կամակոր մտաց՝ ու-
նել և պահել 'ի սրտի զոխ և զքէն առ
ընկերսն յանցուցեալ. և շնորհեա ինձ զու-
նակութիւն խաղաղասէր բարոյից, լինել
միշտ հաճոյական և հեզ, գթած՝ և ներող
թերութեանց ընկերին. որպէս զի արժա-
նացայց 'ի քէն թողութեան բազում յան-
ցանաց և պարտուցն իմոց, և հասանել եր-
կնային անվրդով խաղաղութեան, և փա-
ռաւորել զքեզ անդորրութեամբ. ամէն.

Հայցուած վասն հալածչաց և Ոսոխաց.

Աստուած ամենողորմ, որ ուսուցեր
մարդկան ներել յանցուածոց եղբարց, և
աղօթս առնել վասն հալածչաց. աղաչեմ
զքեզ ներեա յանցանաց ատելեացն իմոց,
և ցոյց նոցա զողորմութիւն քո. քաղցրացո
և կակղացո զսիրտս նոցա առ իս, և բաց
զաչս սրտից նոցա յօրէնս քո՝ զի մի հա-
նապազորդեսցեն 'ի մեղս հաճոյից իւրեանց.
ծագեա 'ի հոգիս նոցա զսէր և զհեզութիւն

զի հեռասցին 'ի չաւղաց թիւրութեան և դարձցին 'ի ճշմարտութիւն օրինաց և բանից քոց · որպէս զի ապաշաւեալք 'ի յանցանացն մերժեսցեն յանձանց զցասումն պատուհասի քո, և արժանասցին վարձուցդ բարեաց, զոր տաս և 'ի հանդերձեալ կեանս · ամէն ։

——00000——

Հայցուած փարատելոյ զԱգահութիւն ։

Պարգևի՛չ բարեաց, որ առատապէս շնորհեալ բաշխես արարածոց քոց զպէտս իւրաքանչիւր վայելչութեան · աղաչեմ զքեզ՝ փարատեա յինէն զախտ ագահութեան · զի մի զանկատեցայց յիւս մարմնոյ՝ առաւել քան զարժանն և զկարևորն կենաց · որպէս զի մի վասն դիւրութեան մարմնոյ անկանիցիմ 'ի գործս անիրաւութեան, նենգութեան և զրկանաց, մոռանալով զհոգիս ։ Այլ տուր ինձ ապաւինել յամենայնի 'ի խնամս քո · և աշխատանօք արդարութեան վաստակել վասն պիտոյից մարմնոյ, հոգալով նախ վասն հոգւոյս ։ Ուղղեա՛ զմիտս իմ և զկամս առ բարիսդ երկնայինս, տպաւորելով 'ի հոգիս զյոյս անանց փառացդ · զի զհետ եկեց

նմին ժառանգութեան։ Եւ զերկրաւոր բարիս շնորհեսցես ինձ վայելել զգօնութեամբ, պատշաճութեամբ և գոհութեամբ սրտի, և օրհնելով զտուիչդ ամենայնի. որ ես օրհնեալ յաւիտեանս. ամէն։

——00000——

Հայցուած ՚ի Յաջողութեան.

Աստուած բարերար, որ միայն լնուս զիս ՚ի քումմէ բարութենէ. օրհնեմ և գոհանամ զքեն վասն բարեաց՝ զոր առատապէս պարգևես մարդկանս, ՚ի գանձուցդ ողորմութեան։ Զքեզ փառաւորեմ և զքեզ Տէր գոհանամ բոլորով սրտիւ իմով. յամենայնի և յաղագս ամենայնի. և խնդրեմ ՚ի քէն առաւել քան զամենայն շնորհել ինձ զարքայութիւն քո, զարդարութիւն և զիմաստութիւն, զի կարասցես բարւոք վարել զձիրս շնորհաց քոց, նախախնամական զգուշութեամբ ապագայ ձախորդութեանց, և նպաստելով կարօտաւորաց զամենայն պէտս նոցին զուարճն յօժարակամ սրտիւ, որպէս դու ցուցանես զիմս չքաւորութիւն։ Պահեա զիս հանապազ յերկիւղի քում, և յօրէնս սրբու-

թեան և արդարութեան․ զի մի՛ հպարտասցուց և ամբարշտեցուցայց անցաւոր գոյիւքս , զի չէ՛ք հաստատութիւն իրաց և մխիթարիչ կենաց , և ոչ գիտեմ՝ զի՞նչ ծնանի ինձ վաղիւն ։ Ա՛ռ տան որոյ աղաչեմ՝ զքեզ շնորհեա՛ ինձ զոյգ ըն-պարգևացդ բարեաց՝ և զայն խոնարհութեան , հեզութեան և ողորմածութեան , զի կեցից ըստ հաճոյից և ըստ օրինաց քոց ․ և եթէ հասանիցին ինձ ձախորդութիւն , չքաւորութիւն , վիշտք և աղէտք , կարողացայց համբերել և տանել արիութեամբ՝ անտրտունջ և զո՛հ սրտիւ , գոհանալով միշտ զաւրը կամաց քոց․ զի ՚ի քէն է ամենայն , և դու հատուցանես ըստ գործոյ և մտաց մերոց ։

——00000——

Հայցուած վասն Թագաւորաց ։

Թագաւո՛ր յաւիտենից և Տէ՛ր տերանց՝ որ ունիս ՚ի ձեռին զսիրտս և զկեանս երկրաւոր Թագաւորաց , զօրս քոյին շնորհօք կարգես իշխել մարդկան․ աղաչեմ զքեզ Տէ՛ր պահեա՛ զբարեպաշտ Թագաւոր մեր ( անուն ) ՚ի խաղաղութեան , և շնորհեա՛ նմա զերկար կեանս և զերջանիկ տէրապետութիւն , լցեալ

բարգաւաճութեամբ և շքեղութեամբ. և պայծառացեալ յաջողութեամբ և բարեմանութեամբ ընդհանուր հպատակացն. Ծաղկեցեն հանապազ 'ի հոգի նորա զշնորհս իմաստութեան, և լուսաւոր պահեսցեն ըղխորհուրդս նորա՝ յօրէնս արդարութեան և իրաւանց քոց, որպէս զի ըստ հաճոյից քոց առաջնորդեսցէ զհպատակս իւր 'ի բարի. Շնորհեա՛ յաղթութիւն զինուց նորա ընդդէմ թշնամեաց խաղաղութեան, զի իրաւամբք քով վարձատրեսցէ բարեաց և պատուհասեսցէ զչարագործս. Օրհնեա՛ և պահպանեա՛ զԱրքայազունս նորա և զվսեմ Գերդաստանն շքեղութեամբ և պայծառ յաջողութեամբ. Նաև շնորհեա՛ իշխանաց և զօրավարաց նորա զկամս հնազանդութեան, զիմաստութիւն և զգօնութիւն. զի բարեպէս՝ խաղաղութեամբ և անաչառօրէն վարեսցեն զհպատակեալս իւրեանց. որպէս զի յընդհանուր խաղաղութեան և 'ի բարեպաշտութեան կելով. վայելեսցեն անդորրապէս զպտուղս բարեաց քոց, 'ի փառս քո և յօրհնութիւն սուրբ անուան քո. որ ես օրհնեալ Տէր ամենակալ. և քո են փառք՝ իշխանութիւն և զօրութիւն, յաւիտեանս յաւիտենից. ամէն.

Երգ Եգեւայէն Մաղթանաց ․

Ո՛վ Աստուած Հարցն մերոց ,
Որ ապաւէնդ ես նեղելոց ․
Հա՛ս յօգնութիւն ծառայից քոց ,
Անօգնական ազգիս Հայոց ․

Տէր ողորմեա՛ ․

Միջնորդութեամբ սրբոյ խաչիդ
Եւ անարատ սուրբ Ծ՛նողիդ ․
Յիշեա՛ զհեղումն արեան փրկչիդ ,
Եւ ՚ի խնդիր փոքու հօտիդ ․

Տէր ողորմեա՛ ․

Օ՛ն գիտացաք մեք հաւատով ,
Որ՛ չափ մեղաց մերոց լցաւ ․
Ուստի Տէրդ մեր բարկացաւ ,
Ա՛ռ ՚ի խոր ուժ զմեզ զարթեաւ ․

Տէր ողորմեա՛ ․

Արդ անկանիմք առաջի քո ,
Գոչեմք մեղա՛յ Տեառնդ մերոյ ․
Դարձո՛ ՚ի մէնջ զցասումն քո ,
Վ՛ասն անպատում գթութեան քո ․

Տէր ողորմեա՛ ․

ՎԵՐՋ ․

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

| ԷՋ. | ՎՐԻՊԱԿՔ | ՈՒՂՂԵԱԼՔ |
| --- | --- | --- |
| 24 | զմայլմին · իմ | զմայլմին իմ · |
| 26 | րղեմ | նորղեմ |
| 65 | հազխան | համզխան · |
| 70 | տէրութենդ | տէրութեանդ |
| 74 | մեզ · յօգնութիւն | մեզ յօգնութիւն · |
| 76 | ներեմյ | ներեմ · |
| 89 | հ — ր | հօր |
| 91 | արժանացայց | արժանացայց |
| 91 | կանացդ | կենացդ |
| 95 | կատարցրեցն | կատարեցից · |
| 96 | մերց | մերոց · |
| 97 | յանունու շահտ | յանուն շահու · |
| 111 | զ.քանչելիս | զսքանչելիս · |
| 146 | լեզ ւ | լեզու · |
| 149 | իմ՚ց | իմոց · |
| 159 | ես | եմ · |
| 162 | աշթարհիս | աշխարհիս · |
| 167 | մարմնոյս | մարմնոյ · |

ԱՐՏԱՀԱՆՎԱԾ Է

